




Bzhshkean, Minas
Patmutiwn Pontosi ore Seawtsov...

70

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՊՈՆՏՈՍԻ

ՈՐ Է ՍԵԱՒ ԾՈՎ

160 p. ...

ՅՕՐԻՆԵԱԼ ՏԵԱՌՆ Հ. ՄԻՆԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ԲԺՇԿԵԱՆ ՏՐԱՊԻԶՈՆՑՒՈՅ
Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵՆԷ



Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1819. ՌՄԿԸ.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Գիտուններուն հեռացոյց գործիքէ նմանցուցին պատմութիւնն, որ ոչ միայն հեռու եղած մանր բաները մեծ կը տեսնէ, այլև չտեսնուած և չերևցած բաներն ալ առաջ բերելով յայտնի կ'երևցնէ ։

Այս գործիքը չելած՝ հին աստղաբաշխները միայն եօթն մոլորակ տեսան աչքով, և հազար քսանևեր-կու աստղ որոշեցին. բայց հետզհետէ որչափ աւելի կատարելագործեցաւ այս գործիքն, այնչափ աւելի մարդիկ համարձակեցան զննել երկնային մարմին-ները. իբր թէ աչքով պարզելով կամարներուն մէջ բիւրաւոր աստղեր տեսան որոշեցին ։ Աստի հիմա տասն մոլորակէն աւելի, և միլիոնաւոր աստղեր կը համրեն ։ Տես Ձեռ. 345 ։

Այսպէս պատմութեան գրեանքն և աշխարհա-գրութիւններուն ելլելով հեռու ժամանակի մէջ եղած բաներուն և անծանօթ աշխարհներուն ու ազգերուն՝ հե-ռացուցի նման մեծ բերելով յայտնեցին. անանկ որ չտեսնուած աշխարհները, և չերևցած կորած տեղերն ու ազգերն՝ երևան ելան ։

Այս պատճառաւ Եւրոպացիք իրենց մանկանց խելքը սորվեցնելու համար՝ միշտ կը ջանան կարդացընել ընտիր պատմութիւն և ճիշդ աշխարհագրութիւն։ Այս խորհրդով մենք ալ Պատմութեան գիրքն յօրինեցինք։ Տես հտ. Ա. և Բ.։ Որոնք նաև շատ անգամ մարդ կը ղրկեն զանազան աշխարհներ. որպէս զի՝ ճիշդ քննութեամբ նոր ծանօթութիւն և նոր տեղեկութիւն առնան։

Եթէ ասոնք միայն հին խելքով մնային և հին բաներով երթային՝ շատ հաստ և տգէտ կը մնային. որովհետև մարդուս աչքը միայն մօտ եղած բանը կը տեսնէ, և ականջն լսածը միայն գիտէ. ուրեմն պէտք է հնարել զանազան պատմութիւններ և աշխարհագրութիւններ, որպէս զի՝ անցածը պատմեն և հեռու եղածներուն խմացնեն։ Հին ժամանակը քանի՞ երևելի քաղաքներ, և քանի՞ մեծ մեծ կղզիներ կային ազգերով լեցուն. որ հիմա չի կան, և անոնց տեղը ծով եղած է։ Նաև շատ տեղեր ջուր էր ծովու նման, հիմա ցամաք է, և մարդիկ կը բնակին։ Տես ճառ. 266.

Նաև որովհետև այս աշխարհս մարդու բնակարան է, մարդկութեան կը վայլէ՝ որ իր բնակարանին մէջ ինչ որ կայ գիտնայ, և չտեսածը տեսնէ, միշտ աշխարհագրական պատմութիւններ կարդայ, և նոր նոր տեղեկութիւններ սորվի գիտնայ. թէ ինչ տեղեր և ինչ ազգեր կան եղեր. կամ թէ այս աշխարհս ինչ փոփոխութիւններ տեսեր է։ Այսպիսի ծանօթութիւն հարկաւոր ճանաչողով գիտուններէն՝ հին ատենէն 'ի վեր գրեցին և պատմեցին իրենց քալած տեղերը և տեսած բաները։

«Ք. ծննդեան երկու հազար երեք հարիւր յիսուն տարի առաջ գրեց իր ըրած Սև ծովու ճամբորդութիւնը, և Պոնտոսի վրան սակաւ ինչ տեղեկութիւն տալու։ Իսկ հետագայներէն Արրիանոս երևելի փիլիսոփան հազար եօթնհարիւր տարի առաջ Սև ծովուն չորս բոլորը պտըտեցաւ, և Ադրիանոս կայսեր թուղթ գրելով համառօտ տեղեկութիւն մը տալու Պոնտոսի երևելի տեղերուն վրայ. որ կըսուի Շրջագրութիւն։ Տես տախ. Դ։

Թէպէտ Եւրոպացոցմէ ևս գրողներ եղան Պոնտոսի մասնաւոր տեղերուն վրայով, սակայն շատ բան կարծիքով գրեր են, ըստ որում անձամբ փորձեցինք. որովհետև այս կողմերը չունին համարձակութիւն Եւրոպացիք. վտանգաւոր է իրենց, և կը վախնան քննելու. ինչպէս կը խոստովանի Պուռնըֆօր։

Արդ՝ մենք շրջելով ընդ ոլորտս Պոնտոսի Առաքելական պաշտօնիւ՝ ահա մեր երկամեայ ճամբորդութեան մէջ կամեցանք գրել՝ի Պոնտոս Նոր քննութեամբ այս մեր աշխարհագրական պատմութիւնը Պոնտոսի կամ Սև ծովու Ճիշդ, շատ տեղ անձամբ դիտելով, չափելով, և հին գրերը կարդալով. նաև հին յիշատակարաններն եպիսկոպոսարաններուն և եկեղեցիներուն օրինելով՝ ըստ կարի ճշմարտեցինք և ստորագրեցինք համառօտիւ՝ հանդերձ աշխարհացոյց պատկերով, յօգուտ ուսումնասիրաց ազգիս։

Որոնք ոչ միայն պէտք է հմուտ ըլլան այժմեան օգտակար բաներուն և աշխարհագրական տեղեկութեանց, այլև հնութեանց և անծանօթ աշխարհաց և ազգաց. որպէս զի՝ վառուին նոր սիրով ուսումնականութեան, և գովելի գործքով ազգասիրութեան։

Եւ նկատելով այս աշխարհիս յարափոփոխ և անցո-
ղական բաներին՝ կատարելութեան և առաքինութեան հետեւին, որ կը մնայ միշտ և անփոփոխ։ Ըստ այնմ.

* Ժամանակեայ կեանքս անցաւոր,
Կարծէք շուայ քեզ փառաւոր.
Զի թէ 'ի կառս ես թագաւոր,
Եւ կամ իշխան յոյժ զօրաւոր,
Հողոյ ծնունդ ես հիւթաւոր,
Յոր դառնալոց յոչ կամաւոր!!։

»ՈՉ 'Ի ԿԱՐԾ ԸՆԴՈՍՏՈՒՑԵԱԼ ԵՒ ՈՉ 'Ի ԼՈՒՐ ԶԱՐԹՈՒՑԵԱԼ, ԱՅԼ ԵՍ ԻՆՔՆԻՆ ԱՆՁԱՄԲ ԱՆԴԷՆ 'Ի ՏԵՂՒՈՋՆ ՊԱՏԱՀԵՑԻ»:

Եղիշ. Ա:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՊՈՆՏՈՍԻ

Ա. ԱՆՈՒՆ.

1. ՅԱՒՆԻՔ Պոնտոս անուանեցին սև ծովը · զի անուանս պոնտոս հելլենացւոց լեզուով ծով կը նշանակէ · որ ոչ միայն այս ծովուն է սեփական, այլ և ծովուն հարաւային աշխարհներն ալ Պոնտոս ըսուեցան. և բնակիչները Պոնտացիք: Ինչպէս կը հաստատէ Յովհաննէս կաթողիկոս պատմելով Մօրիկ կայսեր համար, թէ * Օ պոնտոս · յորում մայրաքաղաքն է տրապիզոն կոչէ՝ զնա մեծ մասն Հայոց ||: Ուր նախ Յաբեթի ցեղէն եկան բնակութիւն չինեցին · որպէս աւանդութեամբ կը պատմեն (105): Շարոնին աշխարհագիրը կ'ըսէ թէ սև ծով առաջ Յաբեթի թոռանը անուամբ Ասքանազ կըսուէր · վերջը յոյնք փոխեցին Աքսինոս ըսին · որ կը նշանակէ լաւ հիւրընկալ: [illegible] թէ արգոնաւորդք հեղինութեամբ այս անուանը տուին · որովհետև սև ծով միշտ խռովութեամբ և ալեկոծութեամբ հանդարտութիւն չունի: Ըստ ոմանց և ծովին առաջ կըսուէր Աքսինոս այսինքն անհիւրընկալ՝ բնակիչներուն աւազակութեանը համար · բայց երբոր յոյնք բնակեցան, մարդասէր ըլլալով ծովին ալ հիւրընկալ կոչվեցաւ:

Սակայն հասարակ անուամբ Սև ծով կըսուի գրեթէ

ամէն լերին մէջ ու միայն սեւագոյն եղեւնեաց համար, որ շատ տեղ սեւ ստուերով լեցուած են, այլեւ ահեղ ալիքներուն եւ հովին բռնութեան պատճառաւ. որ ամպով կը պատեն ծովը, ու ջուրը սեւ կերեւցընեն. արովհետեւ սեւ ծովուն միջոցը նեղ ըլլալով, եւ չորս դիհէն լեռներով պատած ըլլալով, Հիւսիսային եւ արեւմտեան հովին ելածին պէս, մէկէն ամպով կը մթնէ, եւ ալիքներով կը խռովի։

Ոմանք կը պատմեն թէ հին ժամանակը Կիմմերեան անուամբ ազգ մի կայ եղեր Պոնտոս. որոնք սեւ գոյնը շատ սիրելով՝ ուրախութեան նշան դրեր էին. անոր համար կոչվեցաւ Սեւ ծով. ըստ արաբ. Պահրի էսվէտ. Պահրի դոնդու. եւ ըստ ռուսաց Չէռնիէ Մօռէ։

2. Հին բանաստեղծներէն ըսող եղաւ թէ սեւ ծովը սաստկութիւն չունի եւ ալիքները շատ չեն տարածիր. Օւէֆիս եւ Նօքլոս նաւապետները տարին մինչեւ Կաղքեդոն, Սնկուելլիսան, եւ Սապաղա Հատուցին գէյվոան եւ գերդեխլէս (36). Բայց տակայն անոնք ալէկոծութիւն չեն տեսած. վասն զի յայտնի է թէ միշտ եզերքէն երթալով նոքա ալիքներուն չէին պատահած.

Իսկ ես անձամբ փորձեցի յանդունդս Պոնտոսի ահագին ալէկոծութեանը, երբոր ալիքները լեռներու նման կը տարածէին արեւմտեան հովին բռնութենէն, նաւս անյայտ կըլլար ալիքներուն մէջ։ Արճերմակ ծովն ալ եւ ադրիականն ծովն ալ դիտեցինք, որ ալիքները կողմերուն փակուելով ջրերէն խորտակելով, չէին այնչափ տարածեր այն խորունկ ծովերուն մէջ։ Նաեւ օդը շատ անգամ պարզ ըլլալով՝ երկնագոյն կերեւնան այն ծովերը. իսկ սեւ ծովը յաճախ ամպով պատած ըլլալով եւ ալէկոծելով սեւագոյն կերեւնայ, ինչպէս կը հաստատէ Ովիդիոս բանաստեղծ, որ աքսորեցաւ Պոնտոս (250)։

* Ո՛վ հեռ խռովեալ եղկիր պոնտոսի,
Սակայն թէ անխռով լինել քեզ մարթի,
Ով որ 'ի սրտաթըռիչ գունդ երկնքի,
Մեծա ամպակոծ տանէ թշնամի.

Սե՜ւ ծով խաւարային ելեալ աստղից ,
Թէ պարարանաց 'ի ցասս ալեաց ,
Կամ ծանրատարողութեամբ 'ի վերայ բաղդիս ,
Եւ ծանրաբեռնեալս ըղձերս վտանգիս ։

Սէլր . պատմ . Զ . 1 .

Բ . ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆ ։

3. Սեւ ծովը ամէն ժամանակ միակերպ չէ եղած . երբեմն շատ առատաջուր էր , եւ հիմա նուազաջուր . ժամանակ ալ կրնայ որ անջուր պիտի ըլլայ , ինչպէս աշխարհագրական կարգը կ'երեւցնէ (7) ։

Արիստոտէլ կը հաստատէ թէ Պոնտոս Եւքսինոս ծովին ջուրն անուշ է , եւ անասնոց օգտակար , մեծամեծ գետեր հոն թափելուն համար . Պոլիբ կ'ըսէ աւելի , որ կովերը ծովուն ջուրը կը խմէին ։ Ահա անկէ 'ի վեր 1700 տարի անցնելով հիմա աւելի բարեխառն է ։

4. Ասոր համար հին աշխարհագիրները կ'ըսեն թէ սեւ ծովը առաջ շատ խորունկ ըլլալով անդունդ կ'ըսուէր . բայց գետերը շարունակ աւազ , տիղմ , եւ քար թափելով շատ տեղ ծանծաղ եղաւ ։

Այնչափ որ ծովուն ջուրը վեր ելլելով չէր սղմեցուեր եզերաց մէջ , պատռեց Ստամպօլու բերանը բացաւ . եւ այսպէս սեւ ծովը ցածնալով իջաւ . ու Մարմարայի ծովուն կողմը շատ տեղ ծածկեց ։

Հերոդոտոս հին պատմիչ , որ էր 2285 տարի առաջ , կ'ըսէ թէ Տրովիայի դաշտը , եւ բոլոր Միսիա ծովուն տակն էր . որովհետեւ այս տեղերը բարձր չեն , ինչպէս տեսանք ։ Ստրաբոն կ'ըսէ թէ Ստրատոն հաստատեց թէ Եւքսինոս սեւ ծով հին ատենը չունէր Ստամպօլու բերանը . այլ գետերն որ հոն կը թափէին բռնութեամբ բացին ։ Այսպէս կը հաստատէ նաեւ Դիոդորոս սիկիլիացին ։

5. Ահա այս է պատճառն որ սեւ ծովուն մէջ տեղ տեղ շէնքեր կ'երեւնան (258) . եւ ծովէն շէնքի կտորներ կ'ելլեն ։ Տեղ տեղ ալ բարձր լեռներու վրա նաւ կա

պելու տեղեր կան, չուանէ մաշած քարեր և օղակ-ներ. ինչպէս տեսուեցինք Տրապիզոն և Ինէպօլու քաղաքը. ուր երեք ժամ վերը նաւ կապելու տեղե-րը կերեւնան. քաղաքացիք ալ նոյն աւանդութիւնն ունին (65):

6. Նոյնպէս նախնիք կը պատմեն թէ Աղախու ծովն առաջ անցք չունէր սև ծովուն հետ. Տօնաւիս գետին բերած տղմով և աւազով այնչափ բարձրա-ցաւ, մինչև պատռեց Ռամանու բերանը բացաւ: Նոյնպէս սև ծով աւելի առատանալով մեծցաւ անտա-տենը. և բացվելով Աստամպօլու բերանը նորէն պըղ-տորկցաւ:

Այն ժամանակը Միջերկրական ծովն ալ առատանալով կո-խեց Ռոտոս կղզին բոլորովին ծածկեց ժամանակ մը. յետոյ քաշվեցաւ. և մինչև հիմա լեռներուն վրա քարացեալ ժժմունքներ կերեւնան: Փիլոն կը գրէ թէ հիմա ծովը նուազեցաւ. որպէս կը վկայեն Ռո-տոս և Դելոս կղզիներն որ ջրին տակն էին, և յե-տոյ քիչ քիչ երեւեցան: Ապա ուրեմն աղախ ծովն ալ միշտ միակերպ չէ եղած. որուն հիմա արեւելեան կողմն աւազով լեցուն ըլլալով նաւերը պարպելով Հիւսիսի կողմէն կանգնին. զի Տօնաւիս գետին ըն-թացքը այն կողմն աւելի լեցուցեր է (188):

7. Ասկէց հետեւցուցին փիլիսոփաները, թէ երկար ժամանակ անցնելէն ետև՝ սև ծով բոլորովին պիտի լեցվի. վասն զի տասուերեք մեծամեծ գետեր և յի-սուն միջակ գետեր հանապազ քար և աւազ բերե-լով շատ տեղ ցածցուցեր են. ինչպէս տեսանք:

Նաև շատ տեղ դիտեցինք Պոնտոսի ծովեզերքէն, որ գետերուն բերած մաշած քարերով լեցուն են. գրեթէ շատ տներուն յատակը նոյն քարերով շինած է. որ անպակաս կը բերեն գետերը. մանաւանդ եր-բոր կատաղանան:

Արրիանոս միայն Լազիստան տասնըչորս գետ կը համրէ. որ երեք գետին մէջ նաւ կը քալէր: Պօլի-բիոս կըսէ թէ Պոնտոս՝ որ հիմա կը լեցվի այնչափ նիւթով՝ վերջապէս պիտի լեցվի. և այս անդունդ ծովը լիճ պիտի դառնայ:

Սակայն այս գիծուածն երկար ժամանակի կը կա-րօտի, վասն զանազան պատճառաց։ Պատմիչներուն նայելով չորս հազար տարիի մօտ է քանի որ Ստամ-պօլու բերանը բացված է։

Հիները կըսեն թէ Փէնէալին առջին հրաբուխներ կային. ըստ որում արգոնաւորդք Հերակլէայի թա-գաւորէն լսեցին, թէ կիանեան ժայռերէն հուր կել-լէր (269)։ Ասով դիւրին բացվեցաւ սև ծովուն բերանը։

Գ. ԽՈՐՈՒԹԻՒՆ։


8. Դիոդորոս հին պատմիչ կը հաստատէ թէ ան-դունդ խորութիւն սև ծովուն՝ գետերուն բերած նիւթով լեցված ըլլալով առջի խորութիւնը չունի։

Անոր համար գետերուն վազած կողմը աւելի ցած-նալով շատ տեղ աւազակոյտ եղած է. ինչպէս Դու-նայէն և Տնէբէր գետերուն կողմն այնչափ ծանծաղ տեղեր կան, որ շատ անգամ նաւերը վտանգի մէջ կիյնին. մանաւանդ երբոր ջրին ընթացքն ալ այն կողմը կըլլայ։

9. Ահա այս պատճառաւ Ազօվու տէնիզին լեցվեցաւ նիւթով, ուր մնացած նաւը չի կրնար ելլել (228)։ Նաև ազախու ծովուն արևելեան կողմն շատ ծան-ծաղ է նոյն պատճառին համար։

Ուստի սև ծովուն հարաւային կողմը, ուր որ մեծ գետեր չիկան՝ աւելի խոր է։ Նոյնպէս հիւսիսային կողմը սարերուն առջին առաւել խոր է։ Շատ տեղ, մանաւանդ հարաւային կողմը ծովուն տակն ապառաժ քարոտ է։

Սակայն սև ծովուն աւելի խոր տեղն է Սինապու և Խրիմի միջոցը. ուր երկու կողմէն ծովը սըխմը-ված է։ Ընդհանրապէս բարձր տեղերուն և սարե-րուն առջին ծովը խորունկ կըլլայ. իսկ ցած տեղե-րուն առջևի ծովն ալ ծանծաղ կըլլայ։ Պաթումի կողմը տեղ մի կայ այնչափ խորունկ որ տակը չի կայ կըսեն. կը կարծըվի թէ անկէց հաղորդութիւն ունի



ու ծով Կասպից ծովուն հետ, որ է անհնին :

10. Մեծ Հիւսիսային Եւրոպայի կողմն տարածուած և տափակ լեցուն ընդարձակ անծայրածիր տարածութիւն մը կայ. այս շատ տեղ ցամաք լեռնոտներ և ծածուկ կղզիներ կան, որ կըսուին Սամոյեդաց (230) :

11. Արեւելեան դին Փարսի կողմը՝ դիմացն ալ ու ւալ գալով հետ գետերն կը ցածնայ ջուրը. տարի գետերին բերանը լայնանալով մեր կերթայ. անոր համար շէնքերը քանի կերթայ մեր կը շինեն. ինչպէս ստուգեցինք (154) :

Գիւֆֆոն բնագէտը այսպէս կը հաստատէ, թէ գետերը միշտ աւազ և հող բերելով ու ծով, գետերուն ջուրն ալ կը նուազի. զի լեռները իջնելով կը ցածնան, ուստից որ այս ջրերը կուգան. ապա երկար ժամանակով ու ծովը կը ցածնայ, լեռներն ալ վար կիջնեն :

Այս պատճառաւ ու ծովուն մէջ մեծամեծ ձկներ չի կան. թէպէտ շատ տեսակ ձկներ կըլլեն. ինչպէս Սահմանաձուկն, Թրէօթէկ, Պաղակեօզ, Գլըխն, Գոն, Թրէֆալ, Մակիւտրի, Մէգիտ, Կարմիր տառառ, Թերեք, և այլն :

Դ. ԴԻՐՔ ԵՒ ՁԵՒ.

12. Այս պատճառներէն կը հետեւի թէ այս ծովուն դիրքն ու ձեւը միշտ միօրինակ չէ եղած. վասն զի հին ատենը աւելի լեցուն և մեծ էր ու ծովը. ձեւն ալ հիմակուան պէս չէր. ինչպէս Ղենօփիկու լեռներէն կիմացուի, որ ջրով ծածկուած էին :

Հիները լարած աղեղի նմանցուցին ու ծովը. կարելի է թէ հին ատենն այս ձեւն էր, հիմա տարբեր է. զի Ինձէ սարը խոլինի Այս ատրին դէմն ըլլալով ձեւը կաւրէ. ուր երկու կողմէն կիսով չափ նեղցած է ծովը :

13. Ասոր հիւսիսային ձեւն աւելի միշտակի նմանութիւն ունի. գլուխը մեծ, որ է միջոց Ամաստրայի Գոռնայի, և Ֆոտոցի. Սատամիոքու նեղուցն է բերան

միջօրէին․ իսկ Պօռդուգալի ծոցը քիչ նման երկայն կը վերջանայ։ Նաև մեռած ծովն է՝ ակամբ ձևացած։ Մէջքը նեղցած՝ է միջոց Ինճէ և Եայլա սարերուն։ Իսկ վարի մասը Անատոլէն կերկըննայ մինչև Ֆաշ․ Ռիոն գետն ալ բարակ պոչ ձևացած է (154)։

Նոյնպէս Ազախու ծովը մաշկաթևի նման բացված է միջօրէին վրա, մինչև Տօնաիս գետը կը վերջանայ (188)։

Ե․ ԶԱՓ․

14․ Սև ծովուն ճիշդ չափը մինչև հիմա չէ կրցած որոշելու ոչ միայն գետերուն և ծոցերուն պատճառաւ, այլև շատ տեղ կայ որ ոչ նաւերը կրնան մօտենալ, և ոչ նաւավարները կրնան երթալ, ինչպէս Աբազայի կողմն է։ Ասոր ոչ սակաւ դժուարութեան պատճառ կրցանք որոշելու։ Բայց որովհետև գիրքը արևմուտքէն դէպ 'ի արևելք պառկած է չիտակ, անանկ որ եթէ գիծ մի ձգենք Պուղազէն դէպ 'ի արևելք՝ չիտակ Ֆաշ կը հասնի․ և այս չիտակ գըծով երկայնութիւնը իբր 1200 տաճկական մղոն կըլլայ․ և գլխուն լայնութիւնը Պասարա պուտանիէն մինչև Օրտու իբր 600 մղոն։ Իսկ մէջքին լայնութիւնը Անատոլէն մինչև Խրիմ․ կամ ճիշդ նայելով Քէրէմբէէն մինչև Եայլա՝ 220 մղոն։ Նաև պոչին միջական լայնութիւնը Կէօնէկէն մինչև դիմաց Խօրի 110 մղոն, որ դէպ 'ի արևելք երթալով կը նեղնայ, ու Ֆաշին գետը կը վերջանայ։

15․ Սակայն շրջապատը ճիշդ չափել դժուար է վասն ելումնուտ տեղերուն․ շատ գօտեր կան դիմացի կողմն որ նաւ չի կրնար մօտենալ, ինչպէս ըսինք․ և շատ ծոցեր ալ կան որ նաւի ճամբայ չեն։ Ըստ նաւավարներուն ճամբայի չափով Աստամպօլէն մինչև Տրապիզոն 909 տաճկական մղոն է․ անկէ մինչև Խաղլըթ պօղազի 716․ անկէ մինչև Տունա 720․ անկէ ալ մինչև Աստամպօլ 516։ Նաև այսպէս բովանդակ սև ծովուն շրջապատը կըլլայ 2861 մղոն տաճկական

(273)։ Իսկ ազախու ծովուն շրջապատը տես իր տեղը (188)։

Պոնտոսի աշխարհագրական լայնութիւնն կըսկըսի իբր 40°. 20' աստիճանէն, և կը հասնի մօտ 47°. իսկ երկայնութիւնն կըսկըսի 24°. 30' աստիճանէն, կը հասնի մինչև 39°. 50'։

Ջ. ԸՆԹԱՑՔ ՋՈՒՐՑ։

16. Սև ծովուն անհաւասար խորութիւններէն, մեծամեծ սարերէն, և գետերէն կը հետևի որ ջրին ընթացքը ամեն տեղ միակերպ չըլլայ. երբեմն ներս, երբեմն դուրս կը վազէ. տեղ կայ դէպ 'ի արևելք; տեղ ալ կայ դէպ 'ի արևմուտք կը վազէ. զօրօրէնակ Կոռօզ սարին առաջ դէպ 'ի արևելք. բայց՝ դէպ 'ի հիւսիս կը վազէ։ Իսկ Ազախու ծովուն բերանը շատ անգամ դէպ 'ի հարաւ կը վազէ. և ինչպէս որ հովը փոխուի՝ ջուրն ալ կը փոխուի. ինչպէս ստուգեցինք (188)։

Մանաւանդ ծովուն տակը լեռներ ձորեր ըլլալով, և ծովուն գոգերն ու սարերը պէսպէս ըլլալով, ջրերը տեղ տեղ կը վազեն, տեղ տեղ ալ անշարժ են։

17. Ոսկէց կը պատճառի յորձանք (Ոգընսի) սև ծովուն. որ տեղ տեղ գետի նման սաստիկ կը վազէ մանաւանդ երբ երկու կողմի ցամաքը մօտ են իրարու։ Շատ անգամ Խնձէրին քով դէպ 'ի արևելք կը վազէ. իսկ Կասօն սարին առաջ ընդհակառակն կըլլայ, ինչպէս փորձեցինք։

Սակայն ընդհանրապէս հարաւային կողմի ջուրը դէպ 'ի արևելք կը վազէ. և հիւսիսային ջուրը դէպ 'ի արևմուտք։ Սւսաի կանոն չունի. հովին բռնութենէն և գետերուն առատութենէն կը փոփոխի։ Ասոր համար արևելեան կողմն եկող նաւերը ցամաքի մօտ կանցնին. իսկ արևմուտք գնացողները բացէն կերթան։

18. Կու որովհետև Սոսամիօլու բերանը դէպ 'ի հիւսիս բացված է, միշտ սև ծովն ներս կը վազէ բա-

նութիւ. որ ոչ միայն գետերուն ջրերէն կը պատճառուի, այլև անհաւասարութենէ միջերկրական ծովուն ըստ աշխարհագրաց. ուր տեղ տեղ աւելի ցած ըլլալով սև ծովուն յորձանքը պատճառած է։ Սև աշխարհագրական կարծիքը կը հաստատէ թէ սև ծով ձերմակ ծովէն բարձր է. Բայց որովհետև օգն որ պարզի՝ արևելեան և հիւսիսային հովերը փչելով ջուրը ազատ կը մղեն նեղուցէն ներս, ասոր առատիկ յորձանք կըլլայ Ստամպօլ։ Բայց գետերն ալ առատանալով աւելի կը բարձրանայ ծովն ու կը սաստկացընէ յորձանքը, անոր համար Հօռօզ սարբին առաջ՝ երբոր գետերը կառատանան՝ ջուրը փոխուելով դէպ ՚ի արևմուտք կը վազէ։

Սակայն յայտնի է թէ սև ծովու գետերուն ջուրը մէկ տեղ բերելով՝ այնչափ շատ կըլլայ որ չորս նեղուց ըլլար հազիւ կը բաւէր պարպելու, թէ որ արեգակին տաքութեանը գոլորշի ըլլալով վեր չելլեր. Տես ձեռնար. 203։

19. Իսկ կրկնայորձանքը կը պատճառի ծովուն տակի լեռներէն և նեղ տեղերէն. երբ ծովուն երեսի ջուրը դէպ ՚ի արևմուտք կը վազէ, տակի ջուրն ընդհակառակին կըլլայ՝ դէպ ՚ի արևելք կը վազէ։ Աւատի շատ տեղ այս երկու յորձանքով կը վազէ ջուրը ճամբան նեղուցին Ստամպօլու։

20. Այս պատճառաւ՝ շատ տեղ ալ ծովուն մէջ գծեր և շաւիղներ կան, որ Գետակ կըսուին. ուր ջուրը կերպ կերպ կը քալէ. երբեմն առաջ ետև կերթայ. երբեմն դուրս ներս կըվազէ. տեղ տեղ ալ անշարժ կայ։

Իսկ այս շարժումն անկանոն ըլլալով՝ ամէն ատեն միակերպ չէր կրնար ըլլալ. և ամէն տեղ մի և նոյն կարգ չէր մնար։ Մանաւանդ երբոր ալէկոծութեանը տարապաքէլի ալիքները խառնուելով ամէն բան տակնուվրայ կընեն՝ ինչպէս անձամբ փորձեցինք։ Սակայն սև ծովուն մէջ երևելի մակընթացութիւն չի տեսնուիր։

21. Ինչպէս ըսինք՝ Պոնտոսի մէջ յիյնան միջակ գետ և տասներեք երևելի մեծ գետեր կը վազեն. չորսը Հարաւային կողմէն չորսը արևելեան կողմէն. չորսը Հիւսիսային, մէկն ալ արևմտեան կողմէն։

Հարաւային կողմէն սկսեալ Փենեւէն ա՛ գետն է Սագարիա մեծ. որ Գաղատիայի լեռներէն կելլէ, և խառորնակի պտըտելով Փռիւգիայի կողմէն կուգայ Եւքսինի ծովը կը վազէ. որուն մէջ նաւ կը մտնէ (46)։ Այս գետին մօտ մեծ քարաշէն կամուրջ կայ. կերևնայ թէ գետը ճամբան փոխելով ցամաք մնացեր է. որ կըսվի Սագարիա քէօփրիւսի։

բ. Պարթենի գետ. որուն բերանն է նաւահանգիստ, և տասը մղոն ներս նաւ կերթայ (52)։

գ. Գըզըլ ըրմագ կամ Ալիս գետ հռչակաւոր, որ կելլէ փոքր Հայաստանէն և Սեբաստիոյ կողմէն անցնելով Ճէնիկու ծովը կը թափի (78)։

դ. Չարշամպա սույու, կամ Իրիս գետ լայն, որ կելլէ Հայաստանէն, և Ամասիայի մէջէն անցնելով կերթայ Եւքսինոպոնտոս. բերանն է իբր նաւահանգիստ, բայց ծանծաղ (81)։

ե. Ճորոխ կամ Փիւազ՝ կարնոյ կողմէն կուգայ՝ դէպ 'ի Բաբերդ խոտորելով արևելք կը դառնայ և Արտանեէի մօտ Լազիստանու ծովը կըվազէ (149)։

զ. Ռիոն գետ՝ եգերացոց աշխարհէն կելլէ, և շըրջելով վրաստան կուգայ Փարշին առաջը նաւահանգիստ կընէ ծովը կը վազէ (154)։

է. Չօրումն բուղաղէ՝ երևելի գետ որ Ապազայի լեռներէն կուգայ, և ապազայի ծովը կը վազէ (176)։

ը. Կուբան՝ երևելի մեծ գետ՝ Չերքեզի կողմէն Էլպուռուս լեռնէն կելլէ կովկասէն անցնելով Աչու բերդին քով երկուս կը բաժնըվի, Անափայի մօտ ծոց ձևացնելով, Գըզըլթաշ կը վազէ (185)։

թ. Տոն կամ Տանայիս՝ գետ մեծ՝ Մոսկովստանէն կելլէ շատ տեղ պտըտելով և վեց գետի հետ խառնըվելով Ազախու ծովը կերթայ (197)։

Ժ. Տնէէէր. ուձ. Օլու կամ Բորէ սուղ՝ Սաքսոնիայէն կելլէ կերթայ Օզուին առջին չորս մղոն լայնութեամբ Լիման ծովակը կը ձեւացնէ, և Օզուի բերնէն ծովը կը վազէ. ուր մեծամեծ նաւեր կը մըտնեն (233)։

ԺԱ. Պրէ կամ Բազուս ըստ Հն. Իբանէն, որ ներսէն կուգայ կըվազէ օզուի Լիման ծովակը (234)։

ԺԲ. Տնէստր կամ Դանաստր գետ մեծ՝ լեհաստանէն կելլէ Բագիրմանու ծոցը կը վազէ (239)։

ԺԳ. Դանուպ կամ Դանուբ ահագին մեծ գետ՝ Օվրցցերոյ լեռներէն կելլէ և շատ պտըտելով կուգայ Սավա գետին հետ կը խառնըվի, և Սիլինայի առջևէն անցնելով կերթայ Պուլղարիա, և Պուճաղ թաթար հինգ բերանով սև ծով կը վազէ (242)։

Ը. ՍԱՐ ԵՒ ՔԻԹ։

22. Եւրոպէս սև ծովուն սարը կամ քիթը պակաս չէ ամէն կողմ, սակայն ապահով ծոցը քիչ է. վասն զի շատը շիտակ ծովը մտած ըլլալով, ապահով նաւահանգիստ չունին։ Այն որ մէկ կողմը ծռած ըլլալով մէկ հովը կը կտրեն. ուրիշ հով անպակաս ալեկոծութիւն կը հանէ. մանաւանդ արևմտեան հովը։

Սար, կամ ըստ պարսից Սէր, այսինքն գլուխ ասելով կիմանանք մեծամեծ լեռներն որ ծովը մտած են և ոմանք գոգ ունին. ինչպէս է Նոռոզ սար Տրապիզոնի, և [illegible] սար։ Իսկ քիթն՝ որ ըստ յն. կըսվի Ագռա, է լեռան ծայր, որ նոյնպէս ծովը կը վերջանայ ծուռ կամ շիտակ։

23. Առդ՝ Փինլանտէն ելլելով Ա. քիթն արևելեան կողմն է [illegible], որ դէպ ՚ի արևելք է ծռած։ Բ. [illegible] սար դէպ ՚ի արևմուտք։ Գ. [illegible] արևմուտք ծռած։ Դ. [illegible] սար հիւսիս դարձած։ Ե. [illegible] գլուխ դէպ ՚ի արևելք։ Զ. [illegible] սար շիտակ։ Է. [illegible] շիտակ։ Ը. [illegible] դէպ ՚ի հիւսիս։ Թ. [illegible] սար

դէպ 'ի արևելք։ Ժ. Չարշամպա պուրունն դէպ 'ի արևելք։ ԺԱ. Ճանիք պուրունն շիտակ։ ԺԲ. Նյասան սար դէպ 'ի արևելք. որուն մասն է Սվաս պուրունն։ ԺԳ. Գարապուրունն շիտակ։ ԺԴ. Նօտօղ սար դէպ 'ի հիւսիս արևելք։ ԺԵ. Սեպրինէ պուրունն դէպ 'ի հիւսիս։ ԺԶ. Պոլու քիթ դէպ 'ի հիւսիս։ ԺԷ. Կարօց պուրունն դէպ 'ի հարաւ։ ԺԸ. Սօղանձաք պուրունն դէպ 'ի հարաւ։ ԺԹ. Խոճէլի պուրունն դէպ 'ի հարաւ։ Ի. Ղնաւեքեօ և Կիլիկաթլաձօր դէպ 'ի հարաւ. որ կը ձևացնեն Նիքֆէի ծոցն իրարու դէմ ըլլալով։ ԻԱ. Մէկէնոք քիթ Սուտալիի՝ դէպ 'ի հարաւ։ ԻԲ. Լոյս սար դէպ 'ի արևելք։ ԻԳ. Փէլիմին պուրունն դէպ 'ի արևմուտք։ ԻԴ. Օճեղիօն պուրունն դէպ 'ի հարաւ։ ԻԵ. Փօռօզ կամ Իւնի պող պուրունան դէպ 'ի արևմուտք։ ԻԶ. Գուլլ պուրունան դէպ 'ի արևմուտք։ ԻԷ. Պալղասն պուրունն դէպ 'ի հարաւ։ ԻԸ. Իրրէկէյ պուրունն դէպ 'ի հարաւ։ ԻԹ. Հարձէն պուրունն դէպ 'ի հարաւ։ Լ. Ռաղըա պուրունն դէպ 'ի արևելք։ ԼԱ. Ակէմլէկէ սար դէպ 'ի հարաւ։ ԼԲ. Կօրիօֆ, և Պալտա պուրունն մէտ նայի։ ԼԳ. Իւեէն պուրունն դէպ 'ի արևելք։ ԼԴ. Սողթան պուրունն դէպ 'ի արևելք։ ԼԵ. Իմանըս պուրունն դէպ 'ի հարաւ։ ԼԶ. Մ՝ալտրըս պուրունն դէպ 'ի հիւսիս։ ԼԷ. Գարապուրունն դէպ 'ի հիւսիս. որ է դիմացն Ասիայի կողմի Գարապուրունին (42)։

Թ. ՆԱՒԱՀԱՆԳԻՍՏ.

24. Սև ծովուն մէջ շատ տեղ կայ, որ նաւահանգիստ կամ լիման կըսուի. բայց ձմեռելու տեղը քիչ է. զի Փենտեքէն սկսեալ մինչև Իւրէկլի չի կայ լաւ նաւահանգիստ։ Ամաստրայի նաւահանգիստն լաւ է, բայց այնչափ ապահով չէ։

Աղլըմանլին նաւահանգիստն իւր բնական գաւ ունենալով Ինձէ սարը, ամենէն ապահով է. Թէպէտ շատ ընդարձակ չէ։ Իսկ Սինոպին նաւահանգիստն ընդարձակ և պատուական ըլլալով հին ատենէն 'ի

վեր առնանի է և նաւ շինելու տեղ ունի հռոմայեցոցմէն մնացած (73)։

Նմանապէս Սամսոնին նաւահանգիստը մեծ գոգ ունենալով իրեք տեղ ապահովապէս նաւ կըկենայ. նոյնպէս Փլադանայի և Սիւրմենէի նաւահանգիստները մեծ գոգ ունենալով շատ ապահով են։ Հին ատենը Տրապիզոնին նաւահանգիստը երբոր շինած էր, աւելի ապահով էր. բայց հիմա աւրած է (105)։

Արևելեան կողմն սև ծովուն նաւահանգիստը պակաս չըլլալով, նաև ծածկած քաղաքներ կային հին ատենը. ինչպէս Պաթում, Փաշ, և այլն. թէպէտ հիմա Փաշի գետին բերանը ծանծաղ ըլլալով նաւ ներս չի կրնայ մտնել։ Այսպէս և այլ կողմերը. ուր թէպէտ նաւ կենալու տեղը շատ է, բայց ապահով չեն։ Ապազայի կողմը Սօխումի, Պուձունտայի, և Կէլէնճիկի նաւահանգիստներն շատ աղէկ են։ Հիւսիսային կողմը Պոնտոսի ապահով նաւահանգիստ աւելի կայ ելումուտ տեղերուն համար. ինչպէս Պալըգլաւա, Սեւաստաբօլ. և այլն։ Մեռած ծովին անցնելէն ետև Օզուի և Ագքիրմանի նաւահանգիստները, նաև հիմա Օտեսայի նաւահանգիստը՝ աւելի ապահով են։

Դունայի բերանը վտանգաւոր և ծանծաղ տեղերը պակաս չեն. բայց գետէն ներս լաւ նաւահանգիստներ են։ Իսկ Պուլղարանէն անդին, Կէլէկրէ՝ Պալչըգ՝ Վառնա և Պուրղազ՝ շատ ապահով են։ Իսկ մինչև Ստամպօլ նաւ կենալու տեղեր կան, որ ընդամենայն քառասուն նաւահանգիստ կըլլան. ինչպէս իւրաքանչիւրն իր տեղը կը պատմենք։

Ժ. ՀՈՂՄՈՒՆՔ։

25. Գլխաւոր տիրող հովերը պոնտոսի՝ են արևելեան և արևմտեան. առջինը այնչափ վնաս չի բերեր. բայց եթէ չափազանց ըլլալով սաստիկ խռովէ ծովը։ Իսկ արևմտեան հովը շատ վտանգաւոր է, և աւելի խռովելով մեծ ալեկոծութիւն կը հանէ։

Երբեմն երբեմն հիւսիսային հովն ալ ալեկոծութիւն կը հանէ. մանաւանդ երբ է արեւմտեան հիւսիս (Կարայէլ): Այնպէս հարաւային հովը. մանաւանդ ձմեռուան մօտ յանկարծ խռովելով ծովը մեծ ալեկոծութիւն կը հանէ, թէպէտ շատ չի տեւէ: Այս որովհետեւ ձմեռն աւելի արեւմտեան և հիւսիսային հովը կը տիրէ՝ եւ ծով կըլլայ աննաւարկելի. և երբեմն հարիւրաւոր մղոն կը սառի. ինչպէս եղաւ Միհրդատին և Կոստանդիանոս թագաւորին ատենը. և շատ անգամ ալ պատահած է. մանաւանդ հիւսիսի կողմն. որուն վրայ ասանկ կըսէ Ովիդիոս բանաստեղծ.

* Ծով սառնամած ձուլեալ պաղի,
Ձուկն 'ի յանդուղն բանտեալ գերի,
Ծարկածածուկ 'ի ջուր լուղի‖:
Պոնտ. Գ. 1.

26. Աւստի այս ծովն ունի պարբերական հովեր. որ մեծ ալեկոծութիւններ կը հանեն, գրեթէ ամէն տարի միակերպ: Զորօրինակ՝ Ա. Հիւսիւմ Քասըրղասը 'ի 25 փետ. որ է պառաւցուրտ: Բ. Մարթ փօգուղը որ է գարնանամուտ: Գ. Չայըր Քասըրղասը 'ի 15 ապր. որ է անկասատեղ: Դ. Խտրէլէզ 'ի 23 ապր: Ե. Չարք փըրթընասը 'ի 9 յունիսի, որ է արեւադարձ: Զ. Պէլիւմէ գարգասը 'ի 10 սեպտ. որ է աշնանամուտ: Է. Կոչ փօյրըզը 'ի 25 սեպտ: Ը. Պոտուշ քէչիտը 'ի վերջ սեպտ: Թ. Պալըքչ Քասըրղասը 'ի 2 հոկ: Ժ. Պօղ գաթըրը 'ի 18 հոկ: ԺԱ. Պայըրմ 'ի 26 հոկ: ԺԲ. Իւլքէր փըրթընասը, երբ Բազումք համաստեղութիւնն կերեւի 'ի 18 նոյ: ԺԳ. Աշըքըրաճ փըրթընասը ըմբռնաղ 'ի 23 նոյ: ԺԴ. Ալթընճըքընասը 'ի 9 դեկ. որ է արեւադարձ (Գարագըշ):

Ասոնք են հաստատ հովերն, որ նոյն ատեններն պատահելով ալեկոծութիւն կը հանեն. թէպէտ ռամիկները այսպիսի բնական բաներով որոշեր են հովերուն ժամանակը. որպէս զի զգուշանալով ծով չելլեն նաւերը: Իսկ նաւավարները հովին ելլելը ամսերէն կիմանան, որ բեռնաւորած և պղտոր կերեւնան նոյն

եզերքին վրայ։ Այնպէս երբոր թռչուն կիջնի նաւուն մէջ նշան է թէ օդը պիտի աւրի, որ կենդանին ապահով տեղ կը փնտռէ. անոր համար նաւավարներն աղէկ չեն սեպեր։

ԺԱ. ՏԷՐՈՒԹԻՒՆ։

27. Պոնտոսի թագաւորութիւնը շատ հին է. առաջի տիրող ազգը Արբէնաքտիտ կըսուէր. որ կը նշանակէ առաջին գլուխ։ Ըստ Դիոդորոսի ասոնք սեւ ծովուն բերանը կը տիրէին 2355 տարի առաջ. կերեւնայ թէ անկէ առաջ կարգաւորեալ թագաւոր չիկար։

Այս տէրութիւն քառասունուերկու տարի տեւեց. որուն յաջորդեց Սպարտաքոս. որ եղաւ ա՛ թագաւոր Պոնտոսի։ Ասոր տէրութիւնն ութ հարիւր տարի տեւեց մինչեւ մեծն Կոստանդիանոս. ինչպէս այն ժամանակուան կտրած ստակներուն գրերէն եւ թուերէն կիմացուի։

28. Սակայն այս տէրութիւն Միհրդատէն առաջ աւրած ըլլալով 170. տարի անթագաւոր մնաց. իսկ մեծն Միհրդատ, որ ըստ Պողիբիոսի, էր ընիկ պոնտացի կամ սինոպցի՝ թագաւորական ցեղէ յաջորդութեամբ եկած, եղաւ քեռայր Տիգրան թագաւորին հայոց, եւ երկրորդ արքային. նաեւ ինքնագլուխ թագաւոր Պոնտոսի։

Յոյն պատմիչները կըսեն թէ երբոր թագաւոր եղաւ տասներկու տարուան էր. յիսունըվեց տարի թագաւորեց. քսանուերկու լեզու գիտէր. որ միշտ յաղթող ըլլալով այնչափ մեծցուց եւ փառաւորեց Պոնտոսի տէրութիւնն իր երեւելի գործքերով, մինչեւ Վոսքորոսին, կամ Սամպօլու նեղուցին ալ տիրելով խառնեց մեծ տէրութիւն ըրաւ։ Զարմանալի նաւեր եւ հանձարաւոր մեքենաներ հնարեր էր. նաւերուն մէջէն մեքենայով աշտարակ եւ թռուցիկ կամուրջ կը նետէր բերդերուն եւ պարիսպներուն վրայ. այն կամուրջներուն մէջէն զէնքով մարդիկ գունդ կելլէին կը ծեծկըվէին։

Պոնտոսի տէրութեան տիրելու համար Հռոմայե-ցիք վարպետութեամբ և Միհրդատայ որդւոյն Փառ-նասայ մատնութեամբն պիտի բռնէին անպարտելի քաջը. ուստի ինքնիրեն թոյն առաւ. բայց թոյնը չի ներգործելով, սրով մեռաւ. թէպէտ Խորենացին կըսէ թէ Պիղատոսի հայրն սպաննեց զինքը, թերևս Միհրդատին կամքովը, յամի աշխարհի 3941։

Արծաթ դրամին մէկ կողմը տպած է իր գլուխը փառաւոր կտրիճ անմօրուք. մէկալ կողմը եղնիկ (Կէյիկ). առաջը լուսին. ետին եւանկիւն գիրն ՃԷԼԲա. Թագաւոր Միհրդատ, գրած է յունարէն։

29. Ասոր որդին նստաւ իր տեղը Միհրա. դրամին մէկ կողմն է գլուխը. մէկալ կողմը Ապողոն չար-տուած՝ յոյն գրով իր անունը գրած։ Ասոր Միհր-դատի թոռն Ագրիպանիոս առաւ տէրութիւնն, որ կը պարծէր թէ անոր ցեղէն եմ. բայց Պոնտացիք չընդունելով մեռուցին։ Տես տախտակ ա։

Թագաւորանիստ քաղաքը կըսուէր Կիմերիօ. որ Մորաքանի անունը չի կար։ Ոմանք կը յիշեն Եւպա-տորիա քաղաք Միհրդատէն շինած, զի առաջ Մի-հրդատ Եւպատոր կըսուէր, որ հօրազօր կամ դիւ-ցազուն ըսել է. յոյները տուին այս անունը Միհր-դատին, որոնք կայսերաց ալ այս մականունը կու-տային. ուստի իր անունն այս քաղաքին դնելով ըրաւ թագաւորական քաղաք, և խռովեց Ամիսոս քաղա-քին հետ. որ պիտի ըլլայ Սամսոնի քով (80). թէ-պէտ ոմանք խրիմի կողմը կը դնեն. կարելի է թէ հոնալ շինեց Պաղչէսէրային մէջ խրիմէն առած տուր-քովը. ինչպէս կըսեն (278)։ Յետոյ այս տէրութիւն երկու բաժնըւեցաւ, Եւրոպական և Ասիական։ Եւրոպական մայրաքաղաքն էր Փանտիգապէ, թե-րևս խրիմի կողմն էր (186). և ասիականն էր Բանա-գօր, որ կերևնայ թէ Հին Կիմերիա քաղաքին տեղը շինեցր էին։ Հնախօսները կըսեն թէ այս քաղաքին նիստն էր արեւելից կողմանէ նեղուցին. բնակիչնե-րը Միհրդատէն եւս առաջ կոչուեցան Պոմպէանն։

ԺԲ. ՆՇԱՆ։

30. Հին ատենը պոնտոսի թագաւորները զանազան նշաններ ունէին. ինչպէս հին ստակներէն որոշեցինք։ Ոմանք հասարակօրէն իրենց նշանին մէկ կողմը կուռքերու պատկերք կը դնէին, մէկալ կողմը ծովու նշաններ, նաւ, երկաթ, և այլն։ Օրօրինակ Արէկլիայի տէրութեան դրամին վրան էր Պոսիդոն չաստուած ծովու՝ ձեռքը դլֆին ձուկն (49)։
Նոյնպէս Տրապիզոնի տէրութեան ստըկին մէկ կողմն է Ապողոն չաստուածին գլուխը. մէկալ կողմը նաւի երկաթ (105)։ Սօրօմադ պոնտոսի թագաւորին ոսկուն վրա պսակ կայ յոյն գրով. իսկ մեծին Միհրդատայ դրամին մէկ կողմն է իր դէմքը. մէկալ կողմը եղնիկ, լուսին։ Նոր որդուն ստըկին մէկ կողմն է իր դէմքը. մէկալ կողմը Ապողոն չաստուած, ինչպէս ըսինք։

31. Իսկ կոմնենոս թագաւորներուն նշանները և դրամները ուրիշ կերպ էին. վասնզի Ալէքսիոս կոմնենոսին նշանն էր բոլորակ մէջը լատինի գիր L. S. միջոցը խաչ կախված։ Յովհաննէս պքաւլաթոսին՝ նոյնպէս բոլորակ՝ վրան թագ փետրազարդ, մէջը կավու գլուխ՝ բերնին առաջը աշխարհ խոտաւէտ, գլխուն վրա աստղ, և անոր վրան թագ խաչով։ Իսկ Յովհաննէս ստեփաննոսին նշանն էր բոլորակ՝ վրան թագ փետրազարդ, մէջը մէկ գլխով արծիւ աշխարհին վրա կեցած. բերանը խաչ, մէկ դին արև, մէկալ դին լուսին։

ԺԳ. ԲԱԺԱՆՈՒՄՆ։

32. Հին ժամանակը երկու կը բաժնըւէր Սև ծով. ասիական և եւրոպական. յետոյ Սկիւթացի թաթարաց ատենը զանազան մասն եղաւ. Պոնտոս ուրիշ տէրութիւն էր. Ապազա, Խրիմ, և Թրակիա

ուրիշ առանձին տէրութիւն եղան։ Հիմա նաւավարները կերպ կերպ կը բաժնեն սև ծովը՝ երևելի տեղերէն չափ դնելով։ Ամենք ալ սարերը կամ քթերը սահման դնելով կորոշեն։ Բայց մենք որովհետև սև ծովուն ամէն քաղաքները՝ գոգերը, և սարերը պիտի նշանենք. նաև Ազախու ծովուն վրան ալ պիտի գրենք, պէտք եղաւ որ գլխաւոր սարերէն և մեծ քաղաքներէն սկսելով սահման դնենք, և բաժնենք այսպէս։

33. Առաջին մասն սև ծովու կըսկըսի Անատօլ գաւառէն կամ Փէնտէճէն, և կը հասնի Սինոբ, կամ Սինապ։ Երկրորդ մասն է սինապէն մինչև Եօռօզ, կամ Տրապիզոն։ Երրորդ մասն է տրապիզոնէն մինչև Փօրշ։ Չորրորդ մասն է Փարշէն մինչև Թագլիթ պօղազի։ Հինգերորդ մասն է Թագլիթէն մինչև Քէֆէ՝ հանդերձ Ազախու ծովով։ Վեցերորդ մասն է քէֆէէն մինչև Դունա։ Եօթներորդ մասն է դունայէն մինչև Փէնէքա, կամ մինչև Ռումէլի գաւառի։ Այս երևելի տեղերուն աշխարհագրական լայնութիւններն և երկայնութիւններն կը նշանենք նոր դրութեամբ։

Եւ այսպէս կարգաւ կըսկըսինք սև ծովուն պատմութիւնն կամ շրջագրութիւնն ամէն քաղաք հին և նոր, և ամէն նաւահանգիստ, գետ, և սարեր հանդերձ հին բերդերով, կը ստորագրենք հիմակեան անուններովն՝ թէ այս աշխարհագրութեան մէջ, և թէ աշխարհացուցին վրա համառօտ՝ տաճկի անուններով, ինչպէս որ կը տեսնէք։ Բայց պէտք է գիտնալ, թէ աշխարհացուցին վրայի մղոններն են աշխարհագրական. զի ամէն մէկ աստիճան վաթսուն մղոն է. և աշխարհագրական մղոնը տաճկի մղոնէն մեծ է, ինչպէս կերևնայ. մենք տաճկական մղոնով կը բացատրենք տեղերուն հեռաւորութիւնը (14-15)։ Նաև քթերը և գետերը որոշ և յայտնի ըլլալու համար, համեմատութիւնը չենք պահեր քիչ մի մեծ կը քաշենք աշխարհացուցին վրա։

Արդ՝ նախ դնենք կարգաւ պոնտոսի թագաւորաց անուններն ու տախտակին վրա. որոնք առաջ կը

նստէին Եւրոպայի կողմն Վօսփօրոսի. և ապա նստան ասիայի կողմն Սկիւտար քաղաք ։ Երկրորդ դնենք Կոմնենոս Թագաւորաց անուններն, որոնք կը նստէին Տրապիզոն ։ Երրորդ դնենք Ադրիանոսին ըրած շըրջագրութիւնն, որ պոնտոսի ամէն տեղերը նշաներ է. և սկսեալ Ստամպօլու նեղուցէն կը հասնի Տրապիզոն, անկէ Դիոսկուրիա քաղաքն ապաղայի. անկէ Թագլիթի բերանը, և անկէ Ստամպօլ ։ Սակայն շատ տեղեր կը յիշէ, որ հիմա նշանը չի կայ. շատ տեղերուն և ազգերուն անուններն ալ փոխուեր են. Մենք որչափ որ գտանք՝ որոշեցինք տեղերուն քովն՝ հանդերձ թուանշանով ։ Տես Գ. տախտակ ։

Թագաւորք Պոնտոսի և Վոսփորոսի:

Սպարտակոս Ա. յամի Հռովմայ իբր 309 Թագաւորեց 7 տարի:
Սելևկոս Թագաւորեց 4 տարի:
Սպարտակոս Բ. Թագաւորեց 20 տարի:
Սաթիրոս Թագաւորեց 14 տարի:
Լեւքոն Թագաւորեց 40 տարի:
Սպարտակոս Գ. Թագաւորեց 5 տարի:
Պերիզադ Ա., որուն ոսկին կայ, Թագաւորեց 38 տարի:
Եւմէլոս Թագաւորեց 5 տարի:
Սպարտակոս Դ. Թագաւորեց 20 տարի:
Ասկէց ետև 170 տարի առանց Թագաւորի մնաց:

Յետոյ

Պերիզադ Ե. Թագաւորութիւնը տուաւ Միհրդատին:
Մեծն Միհրդատ Թագաւոր եղաւ Վոսփորոսի յամի Հռովմայ 639 յառաջ քան զՔն 115 տարի, Թագաւորեց 52 տարի: Տեսանք ոսկի և արծաթ դրամները:
Փառնակ որդին Միհրդատայ՝ 63 տարի Քնէ առաջ՝ Թագաւորեց 15 տարի:
Ասանդր՝ 48 տարի Քնէ առաջ Թագաւորեց 33 տարի. կայ ոսկին:
Սգրիպոնիոս 14 տարի Քնէ առաջ Թագաւորեց:
Պօլէմոն Ա. 12 տարի Քնէ առաջ Թագաւորեց. կայ ոսկին. և յունարէն գովեստ մի գտան ասոր վրայ:
Սօրոմատ Ա. կայ ոսկին յոյն գրով և վրան պսակ:
Ռէսքօպօրիս Ա. կայ ոսկին:
Պօլէմոն Բ. յամի Տն 38 Թագաւորեց 26 տարի. կայ դրամն:
Միհրդատ Բ. յամի Տն 42 որ է առաջինին ցեղէն, որ մեռուցին:

Կոդիս Ա յամի տեառն 49. կայ ոսկին ։
Ռէսքուպորիս Ա յամի 83. կայ ոսկին իր դէմքովը ։
Սորոմատ Բ. կայ ոսկին կտրած յամի Հռ. 870 ։
Կոդիս Բ. կայ ոսկին կտրած յամի Հռ. 884 ։
Ռէմէտալքէս յամի տն 132 ։
Եւպատոր. կայ ոսկին կտրած յամի Հռ. 910 ։
Սորոմատ Գ. կայ ոսկին կտրած յամի Հռ. 934 ։
Ռէսքուպորիս Գ. կայ ոսկին կտրած յամի Հռ. 968 ։
Կոդիս Գ. կայ արծաթը կտրած յամի Հռ. 986 ։
Ինինթիմէոս. կայ արծաթ դրամը կտրած յամի Հռ. 988 ։
Ռէսքուպորիս Դ. կայ դրամը կտրած յամի Հռ. 995 ։
Կէիրանէս. կայ դրամը կտրած յամի Հռ. 1029 ։
Կոդորսէս. կայ դրամը կտրած յամի Հռ. 1050 ։
Սորոմատ Դ ։
Սորոմատ Ե ։
Ռէսքուպորիս Ե. կայ դրամը կտրած յամի Հռ. 1073 ։
Սորոմատ Զ. կայ դրամը ։

Այս թագաւորին ժամանակը մեծն Կոստանդիանոս եկաւ Ստամպօլ շինեց, զօրացուց, և աթոռը հոն փոխադրելով թագաւորական քաղաք ըրաւ ։ Ասատի անկէ ետև Վոսբորոսեան պոնտոսի թագաւորութիւնը վերցաւ, և Սորոմատ եղաւ վերջինը. միայն Ստամպօլ նստող կայսերք կը տիրէին այն տեղաց պոնտոսի մինչև Կոմնենոսներուն ժամանակը. զի յամի տն 1063. Իսահակ Կոմնենոս թագաւոր եղաւ Տրապիզոնի. իսկ Յոհաննէս Պերփիւռուժէնին տանը երբոր Կոնձաւ տրապիզոնցին թագաւոր եղաւ լազիստանու՝ անկէ ետև ինքնագլուխ եղան. և Ալէքսիոսին օրը կայսր ըսվեցան պոնտոսի Կոմնենոս թագաւորները (109) ։

Կոմնենոս թագաւորք Տրապիզոնի:

Ամ Քն

1063. Իսահակ կոմնենոս, և Իմմանուէլ:
1119. Իսահակ, Յովհաննէս, և Ալեքսիոս:
1144. Յովհաննէս, և Իսահակ կայսր:
1182. Իմմանուէլ Պորփիւրոժէն
1183. Ալեքսիոս.
1186. Անդրոնիկոս, և Նիկոփորոս:
1195. Իսահակ Անկելոս:
1204. Ալեքսիոս, և Իմմանուէլ:
1205. Մինաս, և Ալեքսիոս:
1240. Ալեքսիոս մեղաս կոմնենոս:
1247. Յովհաննէս:
1257. Նիկողայոս:
1280. Անդրիանոս, և Միքայէլ:
1295. Յովհաննէս, և Միքայէլ պասիլէոս:
1321. Ալեքսիոս:
1335. Բասիլէոս:
1339. Միքայէլ:
1385. Ալեքսիոս:
1395. Իմմանուէլ, և Բասիլ.
1407. Անդրոնիկոս:
1436. Ալեքսիոս:
1456. Յովհաննէս:
1460. Դաւիթ վերջին թագաւոր. որ բռնեց Սուլ. Մէհէմմէտ և մեռուց. (111):

Շրջագրութիւն Արրիանոսի՝ սկսեալ 'ի Նեղուցէն Պօլսոյ մինչև 'ի Տրապիզոն.

Արմենէ . Աշլեման (72) :
Սինոբ . Սինոպ (73) :
Կարուսա . Կերչէ (76) :
Զագորա . Գոռաուղուղաղ (77) :
Ալիս գետ . Գըզըլ ըրմագ (78) :
Նաւստաթմոս :
Կոնոպէոն :
Եւսինէ :
Ամիսոս . Սամսոն (80) :
Անկոն նաւահանգիստ . Գոռմճաղաղ (79) :
Իրիս գետ . Չարշամպա (81) :
Հերակլեան նաւահանգիստ . Թերմէ (83) :
Թէրմոտոն , կամ Թերմէ գետ :
Բերիս գետ :
Թոարիս գետ :
Իոնէ . Իւնէէ (84) :
Փագամոս գետ (84) :
Փատիսանա . Սափէճա գէփ (85) :
Պոլեմոնիոն . Պօլաման (84) :
Յասոնի սար . Եասոն պուռնու (86) :
Սիւլկեցոց կղզի . Փուճայէ մօփ (85) .
Կոտն . Կճա (87) :
Կոտիորա (88) :
Մելանթիոս գետ . Գարսփէրէ (87) :
Փարմատենոս գետ . Պոռճագ տէրէսի (89) :
Փառնակիա կամ Կերասոս . Քէրէսուն (92) :
Արետիաս կղզի Քէրէսունի (92) :
Զեփիւռիոն . Զէֆրէ (94) :
Տրիպօլիս . Թիրէպօլի (95) :
Արգիւրիա . Արծաթահան (95) :
Փիլոկալեա (95) :
Կորալլա . Կէօրէլէ (97) :
Հերմոնասսա (97) :
Տրապիզա . Տրապիզոն (105) :

Գետք 'ի Տրապիզոնէ մինչեւ 'ի Դիոսկուրիս կամ Սեբաստոպօլիս :

Իսոս . Բէյաւէքէ (134) :
Օփիս . Օֆ (138) :
Ռիզէոս . Սօնաքառ (141) :
Կալոս . Կալէօզանմա (138) :
Ադիզլիոս . Իրէդէ (139) :
Արկուրոս . Արխաւող (139) :
Աթինէոս . Աթինա (142) :
Զագատիս :
Պրիտանիս (145) :
Բիզանտէս :
Ակամպիս . Արխանա (146) :
Ապսարոս :
Ակամպսիս :
Բաթիս . Պաթում (150) :
Ակինասիս :
Իսիս :
Մոգրոս :
Փասիս . Ֆաշ (154) :

Քարինէնս. Քէնմէնէլ (155) :
Քորոս . Քօթէէ (156) :
Սինդամէս գետ :
Տարսուրաս գետ (159) :
Հերմոս (159) :

Ժողովուրդք նոյն կողմանց :

Տրապիզոնցիք (195) :
Կողքիսացիք (152) :
Գործլայք կամ Սանիացիք :
Մաքեռոնացիք :
Հենիոքացիք :
Օքսորեացիք :
Լազեցիք (140) :
Ապսիլեցիք :
Աբասկացիք. Ընկերս Աղա-ւացե (162) :
Սանիկեցիք :

Ի Դիոսկուրիայէ մինչև ՚ի Վոսփորն Կիմերեան :

Բիտինա (160) :
Ակտիկա (158) :
Ալլակեր սկիւթացիք (158) :
Հերակլեան սար (160) :
Մաւէտիկա :
Ռադեկոս գետ :
Հերքիւլեան սար :
Հին Լազիկա :
Հին Աքայիա :
Ռապանկոս գետ . Ընկերս Զօքսոսն (176) :
Բորդիս :
Նեսիս :
Բադրա նաւահանգիստ. Պոսֆորոնիա (171) :
Հիերոս նաւահանգիստ. Ալելէնձէք (177) :
Սինդիկա. Սողոմձոյք (178) :
Վոսփորոն կիմերեան. Թաւեկլէն (186) :
Պանտիկապէոն (215) :
Տանայիս գետ . Տանայիս (197) :
Միօտիս լիճ. Ռակոփ (188) :

Ի Կիմերեան Վոսփորէ մինչև ՚ի Վոսփորն Թրակիոյ, կամ ՚ի Կոստանդնուպօլիս :

Կաղէգա (217) :
Թէոդոսիա. Քէֆէ (219) :
Տաւրոսասկիւթացւոց նաւահանգիստ . Սուդաղ (221) :
Ալուստիս (216) :
Լամպադա . Լամպադ (221) :
Սիմբոլի նաւահանգիստ . Պալաքլավա (222) :
Տաւրիկեան ցամաքակղզի . Ղրիմ (218) :
Կերկինետիս (224) :

ՇՐՋԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊՈՆՏՈՍԻ

34. [redacted]ՆԱԽՕՍՆԵՐԸ կը դրեն թէ Ադամանդեան կինը Թեբայի թագուհին նախանձելով խորթ զաւակացը՝ կուզէր պատգամ հանել տալու, որ ուխտ երթան Պոնտոս կողքիսաց աշխարհը. ուր է Ապազա կամ Մնկրէլ (152). որոնց թագաւորն էր Այետաս. թէ որ չերթան՝ գետինը կը չորնայ, բան չի բուսնիր կըսէր պատգամը։ Ասոնք Եգիպտոսի կողմէն ելան 3055 տարի առաջ՝ հասան Մարմարա ծովը. ուր Հելլէս անուամբ քոյրը ծովը ընկաւ խեղդըվեցաւ, և ծովը Հելլեսպոնտոս կոչուեցաւ. այսինքն Հելլեսի ծով. որ է Գէլիպօլուի բերանը։

35. Իսկ Փրիքսոս եղբայրը հասաւ Տրապիզօնու նեղուցը, և տասուերկու կարգ տաճար մը շինեց Աչոռոզ բերդին մէջ (38)։ Ասպա Փինեկեցին եկաւ հասաւ անձուսս Կողքիս. և գնաց Հերմեսի կատատունը խոյ մը զոհ ըրաւ. որուն մորթը ոսկիով պատեց ու կախեց կատատանը մէջ, որ կոչուեցաւ Ոսկեգեղմ (152)։

36. Բայց Յունաստանի՝ Պեղիաս թագաւորին եղբօրորդին Յասոն քաջ երիտասարդը տասնըմէկ տարիէն ետև ուզեց երթալ այն ոսկեգեղմը առնել Պեղիասին խորհրդովը. ուստի Արգոս անուամբ ճարտարապետին անունով մեծ և փառաւոր նաւ մը շինել տուաւ, որ չէր տեսուած. և կոչեցաւ Արգոնաւ։ Շատ տեղէ կարիճներ հետ գնացին Յասոնի ընկեր ըլլալու համար. յիսունըչորս հոգի միայն առաւ հետը ու ծով մտաւ. հասան Կողքիսոն. որոնց գլխաւորն

եր քաղին Հերակլէս։ Տես Ձեռ. 685։ Արդ՝ հին նաւերուն ձեւին նայելով և ջրին ընթացքը դիտելով յայտնի կերեւնայ թէ ասոնք, և առջի գնացողները Փէնիկեցին որ եղան՝ ասիայի կողմէն սկսան առաջ երթալ։ Ահա մենք ալ այս ընթացքով առաջ երթալով կըսկըսինք պատմել շրջապատը սև ծովուն։

Ուր այժմեան բնակիչներն են՝ ա Հոռոմ. բ Հայ. գ Տաճիկ. դ Խազախք, կամ Լազք. ե Սըռացի. զ Մէկռել, կամ Կողքիսացիք. է Ապազա. ը Չէրքէզ. թ Ղրիմի թաթար. ժ Նօղայի. ժա Խազախ. ժբ Մոսկով. ժգ Պուճաղ թաթար. ժդ Պուլղար. ժե Հրէայ։

Ա. ՄԱՍՆ ՍԵՒ ԾՈՎՈՒ.

37. ՍԵՒ ԾՈՎՈՒՆ առջի մասն ասիայի կողմէն կըսկըսի, որուն ծայրն է Անատօլ Փէնէրին. սակայն առջի բերդը կը սեպվի Գաւխագ Հիսար, կամ Անատօլ գավաղի նեղուցին մէջ. ուր առաջ մեծամեծ բարտի (Գաւագ) ծառեր ըլլալով Գաւագ ըսվեցաւ. և է իբր սահմանագլուխ սև ծովուն, և Բիւզանդիային. որ շինեց Սուլ. Միւրատ 1623 ին։

38. Լեռանը վրայ կայ հին բերդ կռապաշտութենէ մնացած Յօրուս կմ Յօռօզ. որ հին ատենը կըսվէր Յէռօս. այսինքն սրբազան. ուր կար Դիոսի տաճարն, որ Ուրիոն և հայր հողմոց կըսէին։ Այս կատուն Փռիքսոս շինեց և տասներկու կաց պաշտօնի տեղ ըրաւ. երբոր Ապազայէն դարձաւ շնորհակալութեան զոհ ըրաւ հոն (35)։

Նոյնպէս Արգոնաւորդք հոն պաշտօն մատուցին թէ երթալը և թէ դառնալը։ Անկէ ետև սովորութիւն եղաւ, որ սև ծովէն ելօղ գնացօղները հոն զոհ կընէին. ինչպէս կը պատմեն Հերոդոտոս և Կիկերոն։ Այս բերդին հնութիւնը դիրքէն և շէնքէն յայտնի է. տեղ տեղ հին քարեր տեսանք։ Պատին վրայ խաչեր ալ կերեւնան, որ կոստանդիանոսի ատենը դրած են։

Հին ժամանակը բնակչողացիք այս տեղէն մինչև դիմաց շղթայ (Զէնճիր) կապեցին, որ թշնամիներուն նաւերը ներս չի մտնեն։ Այս բերանին մօտն է Յուշէ տաղի. ուր կայ մեծ գերեզման Յեսուայի՝ ուխտատեղի տաճկաց։ Խուռի թէ հոս հին ատենը կռատուն կար. որ նաւերը սև ծովէն անցնելով երկրպագութիւն կընէին. ինչպէս դրեթէ սև ծովու ամէն բարձր լեռներուն վրայ ուխտատեղիք անտանք։ Ալէմ տաղին վրան ալ կերևնայ հին աւերակ. կարելի է, թէ Մալթեփէէն վրան ալ ըլլար ուխտատեղի. վասն զի սև ծովէն գալով նախ որոշեցինք Պոնտոսա տաղին, այս Մալթեփէ, և Ալէմ տաղին. հուակ յետոյ Յուշէ տաղին։

39. Սև ծովուն բերանը շատ երևելի կռատուններ կային առաջ. զի Պոնտոսի դուռը Պոսիդոն չաստուածին ձեռքն է կըսէին, բանալիները ինքը կըպահէ, և Յասոն որդին այս քաղաքս շինեց է. փոխանակ ըսելու թէ Յասոն իշխանը նախ և առաջ շինեց բնականդրիա կամ Մուսամայոլ. ուր կար տաճար Պոսիդոնի, իբր պահապանիչ ծովու. ինչպէս կը պատմէ Դիոնիսիոս։ Նորհամար երբոր Միհրդատ Բիւթանիայի վրան գնաց՝ նախ պաշտօն ըրաւ. և երկու ձերմակ ձի ծովը նետեց 'ի պատիւ Պոսիդոնի։ Տես ձեռ. 631։

40. Այս բերդէն ետև կուգայ երկրորդ բերդ՝ Ֆիլ պուրնի Սուլ. Մուստաֆայէն շինած։ Յետոյ երրորդ բերդ՝ Փօյրազ լիմանի։ Վերջը կուգայ չորրորդ բերդ՝ Անատօլ Ֆէնէրի. որ է զօրաւոր բերդ նեղուցին ծայրը, կամ սև ծովուն բերանը։ Ինչպէս եւրոպայի կողմն ալ կան այսպիսի բերդեր դիմացէ դիմաց (271)։

Այս նեղուց կըսուի Բոսփորոս. այսինքն անցք կովու. զի Ինաքայ աղջիկը կովու կերպարանք փոխելով անցաւ ասկէց դիմացէ դիմաց 3400. կամ 3600 տարի առաջ ըստ Եւսեբիոսի։ Նախնիք հասարակօրէն այս նեղուցը կը կոչեն Բոսփորոս Թրակիոյ. և Ազախու նեղուցը՝ Բոսփորոս Կիմմերիոն։

41. Այդ՝ առխակաւն Ֆէնէրէն ելլելով իրեք մղոն

անդին կուգայ Սիւձա Հինդերապօղ բերդ. որ է մեր- ձի բերդ նեղուցին հաստատա. ուր կան բնակութիւնք տաճկաց, եւ դէմ Սիւձա անուամբ, որ կուգայ Սուլ. Սիւլէյմանի քէօշկիէն. որ է նեղուցին կողմը:

Գօաբաթէրէզ գետը մօտ է հոս. որուն բերանը փոքր նաւեր կրնան կենալ: Ստրաբոնոս այս տեղս տասնը- մէկ միղոն հեռու կը դնէ մերձի բերդէն: Արեւելքէն դառնալով հոս կերեւնայ իսկ բերան նեղուցին. ասկէց երբեմն նաւերը խարսխելով կեցնեն Շիլէ:

42. Գ.ԱՐԱՊՈՒՌՈՒՆ. պանտատար անտառական մասին վրայ քիթն է. որուն դիմացն Եւրոպայի կողմն ալ կայ Գ.արապուռուն. ասկից կըսկսի աւազուտն: Այս քիթ տասնըութ միղոն հեռու է Փէնէրաէն. որ ջուրի ծոց եւ նաւահանգիստ. ամենքը հոս Կ.իւրձան գայա կանուանեն. եւ ասկէց կըսկսի Ազատ գօանչար ա- ռիակյան աւազուտն, որ է դեղնագոյն աւազ ծովուն եզերքը՝ նման Եւրոպայի կողմի դեղին աւազուտին. բայց անոր չափ լայն ընդարձակ չէ (267). որ եօթը միղոն կորոշի երկայն, եւ կը հասնի մինչեւ Շիլէ. խնչպէս տեսանք:

43. ՇԻԼԷ. լատ. յն. Խելէ. այսինքն պըռ- կունք՝ տասնըութ միղոն անդին Տրապիզոնի կողմն է, որ է ըստ ոմանց՝ երեսունըմէկ միղոն հեռու Փէնէրաէն. ուր կան յոյն եւ տաճիկ: Ջուրի նաւահանգիստ. շատ ան- գամ նաւերը մոլորելով կուգան հոս կեցնելու կը խոր- տակին. ուր մօտ է Պօղկաչա քիթ եւ բերդ:

Աղվա կամ Ագօվա գետն հոս մօտ է դէպ 'ի արեւելք: Ստրաբոնոս Գ.արապուռունէն վեր կը յիշէ Արտանէս գետն. ուր փոքր նաւեր կրնան կենալ կըսէ. որուն մօտն էր Ափրոդիտեայ տաճարը. ուր հին ատենը կըպաշտէին այս կուռքը: Այս կողմի լեռները շատ ըլլալով գեղեցիկ կերեւնայ դիրքը. նոյնպէս ծովը ծանծաղ է. ուր երեւելի բան չի տեսանք:

44. ԿԻՐՓԷ. լատ. յն. Կալփէ. այսինքն փոքրիկ ջրուղ. վաթսուն միղոն հեռու է Շիլէէն. ունի խա- նութ, եւ գեղը վերն է: Նաւահանգիստն անյարմար է ձմեռուան. թէպէտ աւազը հոս կը կենայ: Ստրա- բոնոս հոս կը յիշէ Հալոյէ գետը:

45. ՎՐԷՖԿԷՆ. ըստ յն. Գռաֆէնմառ. այսինքն քա-րոտ. չորս մղոն առջին ըլլալով հարիւր մղոն հե-ռու է Փինեթէն. ունի սար, և ծոցն է նաւահան-գիստ երկու մղոն լայն. բայց անյաջող է, և սարին առաջը քարեր կան. անոր համար Վրէֆկէն ըսվե-ցաւ. գեղը մէկ ժամ վերն է։ Վրէֆկէնու վրան կեյնի Գոմիտոա երևելի լեռն՝ որ ունի իրեք գլուխ. և է նշան նաւավարաց. որով կիմանան նեղուցին մօտ ըլլալը։ Նովեգերքէն իրեք մղոն բացը փոքր կղզի մի կայ սեղանաձև. շրջապատն է իրեք մղոն մանր ծառերով լեցուն։ Աւր կայ հին բերդ և եկեղեցի. նաև խնդրաւնլինը ջրհոր, ըստ որում պատմեցին. անկէց կերևնայ թէ հոս առաջ շատ բնակութիւն կար. նաև հոս էր Ապողոն չաստուածին կռատունն՝ ըստ Սյբր"։ Տես. տախ. Է։

46. ՏԻՆԻԶ ՔԻՕՅԻ. երատուն մղոն հեռու է. ուր կայ բնակութիւն. բայց երկիրը ցած ըլլալով երբեմն ջուր կը կոխէ։ Կ'ըսուի թէ Տէնիզ Թագաւորն հոս պալատ կամ ամարանոց չինէր էր հին ատենը, և ա-նոր անուամբը կը յիշվի (50)։

Սագարիա, կամ Զագարի. և ըստ յն. Զագարիս. (թերևս 'ի ձայնէ Զագարիս, որ է սրընթաց կամ գրոհ տուող. Սագարիա), է գետ մեծ. որ կելլէ Գաղատիայի լեռներէն. և խոտորնակի պտը-տելով ընդ Փռիւգիա, և ընդ Բիւթանիա կուգայ Տէնիզ քէօյին մօտ Պոնտոս կը թափի։ Հին ատակը կամ գրամը գտան. վրան գրած՝ ΣΑΓΑΡΙΣ. որ ըստ հնախօսից է անուն Սանկարիա օրիորդին։ Այս գե-տին մէջ չափաւոր նաւեր կը մտնեն, ինչպէս կը վկայէ նաև Ստրաբոն. որուն քով հին ժամանակը տաճար կար Մօրն աստուածոց. և մեծ ուխտատեղի էր կռապաշտից։ Հոս աւրեց Միհրդատ հռոմայեցւոց բանակը. ուր մօտ է Գորդաու կամ Գորդիոնի փոքր գետն. ըստ հն. Մէլին։

Սագարիայի գետին մօտ վերը մեծ քարաշէն կա-մուրջ մի կայ. որ կըսվի Պէշ քէօփրիւսի (21)։ Բնա-կիչները պատմեցին մեզ, թէ Տէրվիշ մի կամուր-ջին տեղն անիծելով՝ գետը ճամբան փոխեր, ցամաք

մնացեր է կամուրջը. և այս ստամասուածն ըսելով գետն է նետովեր:

Ակըլը նամըրտ քէօփրիւսինտէն 40 աչարըըն ասա օէնի,
Եալընըզ Բիլըր քէօշկէսինէ 40 աւլան էէսին օէնի:

47. ԱԳՃԻՇԱՐ աւան, հեռու է ՊՐԷՖԿԷՆԷՆ վաթսունըչորս մղոն, ուր կայ փոքր գետ, և բնակութիւն: Կ՚ըսուի թէ առաջ երևելի շէնքեր կային հոս. որով քաղաքն հեռուէն ձերմակ կերևնար. անոր համար ըսվեցաւ Ագճէ շէհէր:

48. ԱԼԱՊԼԻ. այսինքն ծովագնաց, է չափաւոր գետ ութսունևերկու մղոն հեռու ՊՐԷՖԿԷՆԷՆ. չունի նաւահանգիստ. մօտը բնակութիւն և գեղեր կան: Միհրդատ աւէրածութեամբ եկաւ այս գետին բերանը պատսպարեցաւ: Արրիանոս Սագաւրիայէն ետև Հիպոս գետ կը դնէ. որ կուգայ Պրուսայի կողմէն. որ է Հիպոս լեռան տակը:

Պտղոմէոս՝ ասոր ըլլալով՝ է պապա սարին մէջ թէև. ուր ամառը նաւ կը կենայ. թէպէտ վտանգաւոր է:

49. ԷՐԷԿԼԻ, կամ Էրիշէ. և ըստ մեզ Արաքլիա, է անուանի քաղաք, և նաւահանգիստ մը ծովուն վրայ շինած, որ հին ատենը կըսէին Հերաքլիա պոնտոսի. և յունաց ատենը Պոնտերակլի ըսվեցաւ. որ է աղաւաղութիւն Պոնտոս հերաքլիայի. դրամին վրայ գրած է ΗΡΑΚΛΕΙΑΣ ΕΝ ΠΟΝΤΩ. այս ՀԵՐԱՔԼԻԱՑԻ 'Ի ՊՈՆՏՈՍ Առաջ շատ երևելի մայրաքաղաք էր. որ հեռու է ալապլըէն տասնըութ մղոն, և Փէնէքէն երկուհարիւր: Անոր սար Պապա պուռնի, վրան ուխտատեղի տաճկաց. և մեծ ջրանցք գետնին տակը լճի նման. նաև հին բերդ մեծագործ: Այս բերդս հին քաղաքին մնացորդներէն շինած է. որպէս յայտ է մեծամեծ քարերէն, որ քանդակուած աշտարակներով պարըսպած էր յունաց ժամանակը: Պարսպին մէջ ամէն կողմը կերևնան սիւներ, քարէ շէնքեր հանդերձ մակագրութեամբ: Ճամբի մի քով դրան վրայ մէրմէռ քարեր կան այսպիսի գրով. Ρ. Β. Α. ΤΡΑΙΑΝ ... ΤΟΚΡΑΤΩΡΙ. այս ՀՌՈՄԱՅԵՑԻՈՑ ԹԱԳԱՒՈՐԻ ՕԳՈՍՏՈՍԻ ՏՐԱՅԻԱՆՈՍԻ ԻՆՔՆԱԿԱԼԻ. որ է մնացորդ հին շէնքի:

Ցամաքին կողմը հին դուռ մի կայ մեծամեծ մէրմէրներով շինած . ուր հին շէնքեր ալ կան հին քաղաքին : Ստրաբոն շատ կը գովէ այս նաւահանգիստը . սակայն Ճէնովիզներուն շինած ամբարտակը հիմա աւրած ըլլալով շատ ապահով չէ :

Այս ամբարտակ հին ամբարտակին հիմանը վրա շինած կերևնայ, որ էր հիւսիսային հովին դէմ . զի Թերակղզին լայնաբաց ըլլալով նաւահանգիստն ապահով չի կրնար ըլլալ . բայց ամբարտակը հարիւր կանգունէն աւելի կերթայ ծովը : Այս տէրութեան դրամին մէկ կողմը գրած է Պոսիդոն չաստուած ծովու . աջ ձեռքը դլֆին, և ձախը եռաժանին (Ճեմ. 631) . որով կերևնայ թէ Հերակլեցիք ծովուն վրա շատ զօրաւոր էին . մինչ զի նաւեր ղրկեցին յօգնութիւն Պտղոմէոսին, որ յաջորդեց մեծին Աղեքսանդրի . որոնց մէջ զարմանալի մեծ նաւ մի կար իրեք հազար նաւավարով . նաև քառասուն նաւ շինեցին բիւզանդացոց դէմ ելան : Միհրդատ Պոնտոսի կղզին բնակիչները հոս քշեց :

Կերևնայ թէ քաջն Հերակլէս շիներ է այս գեղեցիկ քաղաքն երեքհազար տարի առաջ, և իւր անունը դրեր է աստ . ուր սոսկալի փապար մի կայ 250 քայլ խորունկ . բանաստեղծները կըսեն թէ Հերակլէս անկէ իջաւ դժոխքը . ինչպէս դրամներուն վրա կերևնայ պատկերքը . և հոն կը պաշտէին Հերակլեսի արձանն՝ ըստ Պաւզանիասի . ուստի երբոր Կալթթաս առաւ այս քաղաքը՝ գտաւ Հերակլեսի արձանը զուտ ոսկիէ թափած : Այս քաղաքին առատութիւնն իմացնելու համար՝ հին ատենը ստակ կըտրեցին՝ վրան առատութեան եղջիւր տպած (Ճեմ. ծան. 617) . նաև բժշկութեան չաստուածն ալ տպեցին . որովհետև բժշկական խոտեր շատ կան հոն :

50 . Հերակլիա առաջ ինքնագլուխ հասարակապետութիւն էր . բայց Կղէարք Հերակլացին Աթէնք գնացեր էր Պղատոնի փիլիսոփայութիւնը սորվելու . հասարակապետութիւնը զինքը հոն կանչեց՝ որ գայ ժողովուրդը խաղաղացնէ . որոնք նոր օրէնք կուզէին . որ եկաւ ժողովուրդին կամքը կատարելէն ե-

տև զօրացաւ՝ Թագաւոր նստաւ. այլ Երկոտասանե-րորդ տարին զինքն սպաննեցին սպանդարամետական տօնին. Անոր յաջորդեց որդին Տիմօթէ, և տասնը-հինգ տարի թագաւորեց. իր տեղը նստաւ եղբայրը Սաթիրոս. անկէ անցաւ տէրութիւնն եղբօրորդւոյն. որ աղէկութեանը համար Բարերար կոչվեցաւ. որուն յաջորդեց Տէնիզ եղբայրն, որ երսուն տարի թա-գաւորելով մեծցուց տէրութիւնը. յետոյ Ամաստրիս կնիկը տիրեց. վերջը երկու որդիքն անգթութեամբ մայրերնին սպաննեցին. Լուսիմաքոսալ վրէժ խնդրե-լով զանոնք սպաննեց, և Հերակլիա ազատ քաղաք թողուց եօթանասունըհինգ տարի թագաւորութիւն ըլլալէն ետև:

Յետոյ Միհրդատի պաշտպանութեան տակն ե-ղան, բայց հռոմայեցոց հետն ալ դաշինք ըրին, և այն պղնձէ տախտակի վրա գրեցին Կապիտոլեան Դիոսի տաճարին մէջ: Սակայն յետոյ Լուկուղոս զրկեց Կոթթաս Հերակլիա. որ մատնութեամբ առաւ յա-փշտակեց և չարաչար քանդեց այս երևելի քաղա-քը. որոնք յետոյ հատուած մի զրկեցին հոն. կէսը շինեցին, կէսն ալ դաշտ ըրին. ինչպէս որ կերևնայ. յետոյ յունաց անցաւ. վերջը Տրապիզոնի կայսերք տիրեցին. անոնցմէ ալ Ճինովիզներուն առին. և ապա Սուլ. Մէհէմմէտ առաւ տիրեց: Լեռները հին շէն-քեր շատ կան. ժամանակ չեղաւ քննելու:

Քրիստոնէութե ժամանակն ալ շատ ծաղկած էր Հերակլիա. ուր գնաց և լուսաւորեց Անդրէաս առա-քեալն. նաև ձեռնադրեց Լուսապէոս եպիսկոպոսն ա-ռաքեց Սամսօլ: Ասկէց կանոն եղաւ. որ երբ Սամ-սօլու եպիսկոպոս պիտի ձեռնադրըլվէր, նախ Հերակ-լիայի մետրապօլիտը կը դնէր ձեռքը վրան: Այս քաղաքէն էր Հերակղիտէս փիլիսոփան, որ աշա-կերտեցաւ Արիստոտելի. նաև Թէոդորոս Ստրատե-լատ փառաւոր իշխանն, որ նահատակեց Լիկիանոս: Ուր կայ եկեղեցի յունաց և դպրոց: Այս կողմէս գետ կանցնի, որ կըսվի Օգչիյէ: Իսկ Լիկոս գե-տին վրա շինած էր հին քաղաքը. և կուզանէ դաշ-տերն Հերակլիայի կըսէ Պլինիոս: Հերակլիայի աշ-

խարհագրական լայնութիւնն է 41°. 5'.
Երկայնութիւնն է . . . . 29°. 40':

51. ՔԻԼԻՄԼԻ սար, քսանըհինգ մղոն անդին է. որ շիտակ ծովու երկնցած ըլլալով չունի նաւահանգիստ. ուր մօտ է Զէնկիզ պուռնի, և Կիւզելճէ հիսար. որ ունի հին բերդ և եկեղեցի: Ըստ ոմանց այս տեղս առաջ Սիւլէոս կըսուէր. ուր կայ Բիլլէոս գետ: Հիներն այս կողմն կը յիշեն Սանդարակա նաւահանգիստը:

52. ՊԱՐԹԻՆ քաղաք, կմ Բարթէնոս. այսինքն կոյս, տասնըութ մղոն հեռու է. ուր կայ բնակութիւն յն. և տճ: Ունի մեծ գետ Պարթէն. որուն դոյն է խոր իբր նաւահանգիստ. ուսկից ներս կը մտնեն նաւերը, և տասը մղոն կերթան. որուն բերանը քար մի կայ: Քսենոփոնին տասն հազար զօրքն այս գետէն վախցան անցնելու. որուն ջուրը ծաղկալից դաշտին մէջէն կանցնի, որ Կոյս կըսուէր. զի Անահիտ չաստուածուհին հոն կը պաշտէին: Տես Ձեռ. 654:

Այս գետին պատկերքը դրամին վրա տպած կայ. որ կը ձևացնէ մանուկ մի պառկած արմունկին վրա. որ քարին կըթընէր է, ուսկից կը բղխի նոյն ջուրը, և աջ ձեռքն ունի ջրային եղէգն: Խորենացին Պարթէնիոս կանուանէ այս գետն, և գաւառն Ոնորիա. որուն մայրաքաղաքն էր Կղօդիուպօլիս. որ է Պոատամպօլի (62):

53. ԱՄԱՍՏՐԱ, կամ ըստ հն. Ամաստրիս քաղաք՝ տասնըութ մղոն հեռու է Պարթինէն. ունի թերակղզի, կամ սար գլխու նման. երկու դուռ երկու նաւահանգիստ կան. արևմտեան կողմն երկու տեղ նաւ կրնայ կենալ. մօտէն կանցնի Սիթա գետ:

Ամաստրայի դիրքը շատ աղէկ չէ. սակայն երկիրը բարեբեր է. հին քաղաքին տեղը շինուած է հին շէնքին մնացորդէն: Առաջ չորս գեղ էին Սեզամ՝ Զիթոր՝ Կրոմնա՝ և Տիոս. յետոյ Ամաստրիս անուամբ պարսիկ թագուհի մի միացընելով քաղաք շինեց և ժողովրդով լեցուց: Ադրիանոսի ատենը շատ երևելի քաղաք էր, և պատուական նաւահանգիստ. հիմա տեղ տեղ աւազ լեցուած է գետերէն. խակ մէկ նաւ

հանդստէն մէկալը վեց հարիւր ոտնաչափ է։
Ամաստրացոց կտրած սարկին մէկ կողմն է կուռք
բաղդի. աջ ձեռքը նաւի ղեկ, և ձախը եղջիւր առա-
տութեան (Դեմ. ծան. 661). նաև Պոսիդոն ծո-
վու չաստուածն ալ տպած են։ Ամաստրացիք գրե-
թէ ամէն կուռքի անուամբ ստակ կտրած են. նաև
Հոմերոսին պատկերն ալ կայ դրամոց վրայ. ուր ծը-
նած էր։ Նորկրին թարեբեր ըլլալն իմացընելու հա-
մար Բագոս չաստուածը գինիի՝ սարկի վրայ տպեցին
(Դեմ. 643). և բժշկական խոտեր շատ ըլլալուն
համար հոն՝ Ասկղէպիոս կուռքն ալ տպեցին, քովը
օձ։ Տես Ձեմ. 667։

54. Աղեքսանդրէն ետև Միհրդատ տիրեց. յետոյ
Տրապիզոնի Թագաւորները, և Դինիվլիզները. որոնց-
մէ առաւ Սուլ. Մէհէմմէտ. որ մեծ մասն ժողո-
վուրդին տարաւ Ստամպօլ։ Բնակիչներն են բարե-
սիրտ և անուշլեզու. շատը ձախարագործ (Չըխըրը-
ճի) են։ Ամաստրա շատ հին շէնքի մնացորդներ կան.
ծովէն վեր ծառին տակը քարաշէն մեծ պատուանդան
կայ եօթն ոտնաչափ. մէկ կողմը գրած է լատին գը-
րով ԹԱԳԱՒՈՐ ՎԻՊԻՈՍ ԳՕՋՁԻԱՆՈՍ ԲԱՐԵՍԻՐ ՎԵ-
ՐԱԿԱՑՈՒԻ։ Միւս կողմերը կան խրեք պսակ փորած
և մէկ դրօշակ. տեղացիք կըսեն թէ ասոր վրայ ձիա-
ւոր արձան կար առաջ. քովը կայ եկեղեցնայ ա-
ւերակ։

55. Իսկ դաշտին մէջ մերմէր սիւներ վերնախա-
րըսխով կեցած կան. արևմտեան դին աղիւսակերտ
շէնք մի կայ Դինիվլիզէն մնացած լայն՝ յիսուներչորս
քայլ, և երկայն՝ հարիւր քառասուներչորս։ Հիւսիսա-
յին դին մերմէրէ սրահ մի կայ տասնըութ ոտնաչափ
բարձր. սիւներուն տեղերը կան, որ չորս կողմն աշ-
խարհիս կը նայէր. առջևէն փոքր գետ կանցնի։
Ուրիշ մի հեռուն մեծ սիւն կայ քսանըմէկ ոտնաչափ
երկայն, և խրեք ոտնաչափ հաստ կորնթեան ձևով.
և ուրիշ սիւներ ալ կան։ Իսկ լեռան վրայ մեծ քակ-
ված շէնք մի կայ չորս սիւն մնացեր է, և սրահը կայ.
պատն է յիսունըհինգ ոտնաչափ բարձր. շէնքին եր-
կայնութիւնը կայ վաթսուն ոտնաչափ։ Ուր պատնէշ

մի կայ հարիւր յիսուն ոտնաչափ երկայն. և սրահ մի ծառերով գոցված։ Նաև հարիւր քայլ անդին լեռան վրա մեծ աւերակ մի կայ, և մեծ գերեզմանի քսաներչորս ոտն" բարձր, երսուն ոտն" երկայն, և տասնըութը լայն։ Մեծ դրան մի ձախ դին յունարէն գրած էր, և աջ դին լատիներէն այսպէս.

O · NACIAN ·
O · HOV XXX ·
LEG · IONIS II ·
SA · LAC VETE · RANAE GALLI
U · SIBI FE · CIT
· · · · · ·

Այս բան կրճատ ըլլալով չթարգմանեցինք. նմանապէս յունարէն գիրն օրինակելու ժամանակ չունեցանք։ Ներդը թերակղզիին բերանն է. ուր մինչև հիմա Ճինիվլիզին շէնքերը կան. թէպէտ անշուք մնացեր են։ Այս քաղաքին աշխարհագրական լայնութիւն է . . . . 41°. 26'. 3".
Երկայնութիւնն է 31°. 4'. 45"։

56. ՏԻԼԻՔԼԻ ՇԻԼԻ, ինը մղոն հեռու է ամասրայէն. ունի նաւահանգիստ անյաջող, փոքրիկ գետ, նաև Ղաքրաս քիթ։ Արրիանոս հոս կը յիշէ Կրեթացի յոյն ժողովուրդ։

57. ԹԻՔՔԷ ԻՕՆԻԻ, ինը մղոն հեռու վերինէն. ծովուն մօտ է բնակութիւնը. բայց նաւահանգիստը փոքր է, և միայն ամառը նաւ կրկենայ։ Ուր մօտ է Տէլիքլի թաշ. ուսկից կանցնի գետ։

58. ՎՐԻԹՐՕԶ, կամ Սեփորոն աւան, տասնըութ մղոն հեռու է. ունի նաւահանգիստ բաւական. բերանը փոքր կղզի մի կայ. ուր նաւ կըշինեն, և շատ գերան տախտակ կելլէ։ Ծովուն քով երկու հին բերդ կայ. մէկն արևելեան կողմն է, մէկալը արևմտեան։ Նաև չորս մղոն հեռու է Սալ տէրէսին. ուսկից կուգայ լաստափայտ։

59. ԳԻԱՐԱՂԱՃ, տասնըութ մղոն հեռու է. ուր կան խանութք և գետ. բայց գեղը վերն ըլլալով անշուք տեղ է։ Այս կողմն շատ ծառնոց կայ. և բո-

լար լեռները կանանչ անտառք ։ Արքունական հաս կը գնէ Ախմէճնա քաղաք, և Լագխացի հին ժողովուրդ ։

60. ՂՐԻՄԻԹԷ, ըստ յն. Տաւրանէկս Խ'սոս, այս քնքէն Սար կարամբիոյ, երեքտասներկց մղոն հեռու է վերինէն. որ է մեծ և բարձր սար դէպ 'ի հիւսիս երկնցած Խրիմի դէմ, և զանազան լեռներով կապ-ված ։ Շատ վտանգաւոր տեղ է նաւերուն՝ այս կողմս նաւահանգիստ չըլլալուն համար. ուր սարսափելի հով և ալէկոծութիւն կըլլայ ։ Այս սար քիթրօզէն կըսկըսի երկըննալ դէպ 'ի ծովը. և միայն արեւմտեան կողմը նաւ կրնայ կենալ դժուարութեամբ ։

Հին ատենը աւան և բնակութիւն կար ։ Պլինիոս կըսէ թէ կռունկները այս սարէն կանցնին դիմաց՝ աւելի մօտ ըլլալուն համար. և դրեթէ ամէն թըռչուն այս կողմերէն կանցնին Խրիմ, և շատ անգամ նաւերուն մէջ կիջնին ։

61. ՕԱՐԴԱՆԱ, կամ Օէրգանա, յն. Օճէքիոփ. տասնըութ մղոն հեռու է վերինէն. որ բերան ըլլալով կրնայ նաւն երկաթ ձգել. և ունի փոքրիկ գետ. ուրիշ երեւելի բան չի կայ ։

62. ԻՆԷՊՕԼԻ, կամ Աքեօբօլ. այսինքն նոր քաղաք. տասներկու մղոն հեռու է վերինէն. և է ծովեզերք Պաստամպօլուին. Թէպէտ չունի նաւահանգիստ. բայց Քերեմպէի ծոցն ըլլալով՝ նաւ կրնայ կենալ ամառը. ուր մենք դժուարութիւն քաշեցինք արեւելեան հովէն ։ Այս քաղաք փոքր է. բայց բարեկարգ. յունաց թաղն է արեւելեան կողմն. ունին երկու եկեղեցի. տեսանք նաև հին վանք լեռան վրա. որն որ գայ՝ ուխտ կերթան, և պատարագ կընեն ։ Իսկ արեւելեան կողմն է աւերակ հին բերդին. ուր տեսանք քթին վրա մնացորդ հին աղբիւրի և ջրանցք ։

63. Արեւմտեան կողմն կէս ժամ հեռուն է Պօյրան գետն. ուր կայ բերդի մնացորդ, և տներուն տակը մեծ խողովակներ և փոսեր. իսկ դուռն է ծովուն կողմը ։

Տեղացիք պատմեցին թէ Պօյար պէկ կը նստի եղեր հոն Ճենովեզին ատենը. որուն անուամբ Պօյրան ըսուեցաւ այս գետն ։ Իրեք ժամ վերին է Պաշքէօյ.

ուր կերեւնան քարէ սիւներ, և ծակ քարեր նաւ կա-պելու համար: Տեղացիք աւանդութեամբ պատմե-ցին, թէ Ստամպօլու բերանը չէր բացուած՝ ծովը հոն կը հասնէր. և նաւերը հոն կը կապեն եղեր (4): Ինէպօլիէն մինչև Իսթէֆան յիսուն մղոն է. հին ա-տենը շատ գեղեցիկ տեղ կը պատմեն այս կողմերս: Ինէպօլուի արեւմտեան կողմէն փոքր գետ կանցնի:

64. ԻՎՐԻՆԷ, իննը մղոն հեռու է Ինէպօլիէն. չունի նաւահանգիստ. միայն մէկ քանի տուն և խա-նութ կան: Տուներուն վրան տափակ քարերով ծած-կած են. երևելի բան չի տեսանք:

65. ԱԳԱՆԱ, կամ ըստ հն. Աղձնի, իննը մղոն հեռու է վերինէն. հին անունը չափաւոր քաղաք էր. հիմա անշուք տեղ է, որ կըսվէր Աղձնաբերդ: Ապանայի արևելեան կողմէն կանցնի Ագինեսիս գետ ըստ Արր". և կռռօգանէ փոքրիկ քաղաքն Ագինեսիս:

66. ԿԻՆՕԼԻ, տասներկու մղոն ասդին է. հին անու-նը կըսվէր Կինոլիս. որուն հին աւերակները կերև-նան. ունի փոքր նաւահանգիստ: Նոյնպէս իննը մղոն հեռու է Զաքաղ ջէյլին. որ է անշուք տեղ: Նաւերն այս ծոցին մէջ՝ մինչև Աղլիմանն շատ վտանգ կը քաշեն:

67. ԱՅԱՆՏՕՆ, իննը մղոն հեռու է վերինէն. ուր կայ հին եկեղեցի յանուն սրբոյն Անտոնի, և բնա-կութիւնք. ամառը միայն նաւ կը կենայ հոս:

68. ԻՍԹԷՖԱՆ տասներկու մղոն հեռու է. ունի սար կամ քիթ, որ դէպ 'ի հիւսիս ըլլալով նաւահան-գիստն ապահով չէ. թէպէտ նաւ կրնայ կենալ ա-մառը: Ուր տեսանք հին բերդ և եկեղեցի յունաց մեծ: Այս բերդ կռապաշտութեան ատենն ալ Սթէ-ֆանէ կըսվէր, որ շինողին անունը պիտի ըլլայ: Տես տախ. Է:

69. ԱՅԱՆՃԸԳ, իննը մղոն հեռու է. չունի նաւա-հանգիստ. կան բնակութիւնք. և տուներն անշուք շի-նած են: Իսթէֆանին և Ինճէին մէջ Ռօսդամի գետ, կամ տեղ կը յիշէ Արր":

70. ԿԵԳԻԼԻԴ, իննը մղոն ասդին է. որ է բերան փոքր գետի. կան բնակութիւնք յն. և տճ. երևելի

բան չի կայ․ ուր երբեմն նաւ կը կենայ ամառը ։

71․ ԻՆՃԷ ՊՈՒՌՈՒՆ, ըստ յն․ Լէբդէ ակրա․ այսինքն բարակ քիթ․ տասուերկու մղոն հեռու՝ երկայն բարակ սար է․ սարին վրա խոտալից և շատ զուարճալի է․ ծովէն շատ բարձր չըլլալով գեղեցիկ կերևնայ․ որ ծովուն մէջ երկննալով դէպ 'ի Այա սարը՝ ֆէր թէ կը բարևէ խորիմի կղզին, որպէս մէջք ձևանալով սև ծովուն ։ Այս քիթը տասներմէկ մղոն դառնալով դէպ 'ի արևելք, կուգայ Աղլիմանին բերանը ։

72․ ԱՂԼԻՄԱՆ, ըստ յն․ Ալիօսօս ալիէնօս կամ Լիմէն․ այսինքն աղի նաւահանգիստ, Ինճէ սարին գօգն է․ բերնին լայնութիւնը քիչ ըլլալով ներսն է պատուական նաւահանգիստ ձմերելու․ որ մինչև տասներհինգ նաւ կառնէ․ ուր չի կայ բնակութիւն ։ Պոմպոնիոս Մէլա առաջ քաղաք էր կըսէ․ բայց Պլինիոսի ատենը չի կար․ ուստի ուրիշները Սինապու գեղը կը համարին Աղլիման ։

Արդ՝ Իսթէֆանէն մինչև Սինապ է 50․ մղոն, և Ինէպօլիէն 100․ իսկ Ֆէնէրէն 480․ որ հասարակօրէն 500 կը սէպեն ։ Ահա ծ Սամն սև ծովու կատարեցինք, և հասանք Սինապ․ որ ըստ նախնեաց կըսվի Սինոպ, կամ Սինոպ ։

Բ. ԱՌԱՓՆ ՍԵՒ ԾՈՎՈՒ

73. ՍԻՆՈՊ, կամ Սինապ, ինը մղոն հեռու է Ղզ-ըլըրմաքէն. որ հին ատենէն 'ի վեր հռչակաւոր մայրաքաղաք է Պոնտոսի. որուն գաւառն առաջ կըսուէր Պաֆլագոնիա. ունի պատուական նաւահանգիստ աւրեւելեան ծոցին մէջ. նաև գործարան նաւուց հռոմայեցւոց ժամանակէն մնացած. ուր մեծամեծ նաւեր կը շինուին Օսմանեան տէրութեան: Պօլիբիոս և Ստրաբոն կըսեն թէ Սինոպ երկու լաւ նաւահանգիստ կայ, և շատ անուանի քաղաք է. որ մէկը պիտի ըլլայ Ղզըլըրմաքի նաւահանգիստը: Հին պատմիչներէն ոմանք կըսեն թէ այս քաղաքը շինեց Սինոպի անուամբ աղջիկն, որ ըստ Ապողոնիոսի էր դուստր Ասոպոսի, որ Յաւէրժահարսն ձայնեցին. ինչպէս կը բերէ նաև Վալերիոս, թէ Յասոն կամ Արգոնաւորդք երբոր հասան Քերեսմէ՝ տեսան Սինապու քաղաքն, որ շինած էր.

* Սոս քերէին առ բարձրաբերձ Կապադկեայ,
Ծորփէր 'ի ծով սառուեր մեծին Սինոպայ||:
Վաֆր. էր. Է. 109.

Ռոկէց կը հետևի թէ Սինապ շատ առաջ շինած էր. որուն շուքը ծովուն վրայ կերևնար: Իսկ ոմանք աւելի հաւանականութեամբ կը հաստատեն թէ Արգոնաւորդաց ընկերներէն Աւտոլիկոս շինեց այս քաղաքը. որուն արձանը կը պաշտէին Սինոպացիք. ուստի երբոր հռոմայեցիք տիրեցին, ծովուն քով տեսան արձան մի գեղեցիկ երիտասարդի և հաստատեցին թէ էր Աւտոլիկոսի արձանը, վերուցին Հռոմ տարին ըստ Պլուտարքոսի: Սակայն կերևնայ թէ նախ պըղտի քաղաք շինած էր. Աւտոլիկոս բերդը շինեց յունաց կերպով. և յետոյ Միլէզիացիք ձեռնակ ծովուն կողմէն հասուած եկան. տեսնելով տեղւոյն գեղեցկութիւնը և բնակչաց տկարութիւնը՝ իրենք բնակե-

ցան՝ քաղաքը շինեցին մեծցուցին, և բնակիչները կար-գաւորեցին. որոնք այնչափ ծաղկեցան և բազմացան, որ հատուած ղրկեցին Կերասուն և Տրապիզոն (105)։ Սուտէ Միլեզիացիք հիմնադիր համարեցան Սինա-պու. որ Միհրդատին վախուն շատ ամրցուցին այս բերդն, որ Պոնտոսի թագաւորութիւնը հաստատե-լով Սինապ ըրաւ թագաւորական քաղաք. բայց յե-տոյ հռոմայեցոց անցաւ։ Մեծերն և այլք կը հա-ստատեն, թէ Սինոպ էր տեղի ծննդեան Միհրդա-տայ և մայրաքաղաք թագաւորութեան նախնեաց նո-րա։ Հին ատենը սինոպցիք շատ զօրաւոր ըլլալով մեծ պատերազմներ ըրեր են. իրենց գլխաւոր կուռքն էր Պլուտոսի արձանը. նոյն էր կըսեն Սերապիս չաս-տուածին կուռքն, որ եգիպտացիք կը պաշտէին։

Սինոպցիք բերդին մէջ մեծ և փառաւոր կռատուն շիներ էին՝ որուն մէջ կը պաշտէին այս կուռքն, որ ըստ Տակիտոսի՝ Պտղոմէոս թագաւորն եգիպտոսի՝ Աղեքսանդրիա Սինոպու թագաւորին սիրտը շահե-լով այս արձանը եգիպտոս տարաւ։ Այս բանին համար իրեք տարի ետևէն եղաւ՝ շատ մեծ ընծաներ և դեսպաններ ղրկեց Սինոպ. մինչև ժողովուրդը խաբելով ձայն հանեցին, թէ կուռքն ինքնիրեն թը-ռաւ տաճարին մէջէն գնաց նաւը, և իրեք օրուան մէջ հասաւ Եգիպտոս. որուն համար մեծաշէն տա-ճար շինեցաւ Եգիպտոս։ Այս կուռքը շատ անուանի ըլլալով քուրմերն ալ գիտնական մարդիկ էին։ Հե-րակլիտէս պոնտացի փիլիսոփան այս կուռքին մէկ պատգամը կը բերէ. որ Երրորդութեան վկայու-թիւն կը բերեն։ Πρωτα Θεός, μετέπειτα λόγος, καὶ πνεῦμα σὺν αὐτοῖς ... Σύμφυτα δὴ τρία πάντα, καὶ εἰς ἓν ἐόντα. * Նախ աստուած, ապա բան, և հոգի ընդ նոսին ... երեքեան անմնելին համագոյնք և միաւոնականք॥։

74. Սինոպ կտրած հին դրամին մէկ կողմը կայ բաց գլուխ. կերևնայ թէ Նաւալիկասինն է. մէկալ կողմն է եզջիւր առատութեան. որ երկրին բարեբեր ըլլալն իմացընելու համար տպած են այսպէս (Ղեմ. ծան. 617)։ Ուրիշ հին սոսկ գտնըվեցաւ. վրան կայ Պը-

պլուտոսին չաստուած Ճոխութեան. զի անատենը շատ հարուստ է եղեր Սինոպ, որ կողինքի վրայ կէս ընկած կերեւնայ (Պեմ. ծան. 636)։ Նաեւ ուրիշ դրամի վրայ կայ ձուկն, որ նշան է թէ հոն ձկան առատութիւն է մինչեւ հիմա։

Հռոմայեցոց ժամանակը կտրած դրամներուն վրայ կայ. C. J. AU. SINOPE. այսինքն ՀԱՏՈՒԱԾ ՅՈՒԼԻԱԿԱՆ, ՕԳՈՍՏԱԿԱՆ ՍԻՆՈՊ։ Ուրիշ դրամի վրայ կայ. C. J. F. SINOPES. այսինքն ՀԱՏՈՒԱԾԻ ՅՈՒԼԻԱԿԱՆԻ ԵՐՋԱՆԿԻ ՍԻՆՈՊԱՅ։ Ասան զի Կայսերք հռոմայու իրենց հաստուածը կը համարէին Սինոպու բնակիչը։

Ստրաբոնի ժամանակը շատ գեղեցիկ էր բերդը. բայց հին բերդը քակուեր է, նորէն շիներ են յունաց ժամանակը՝ հին բերդին քակուածներէն. ոմանք կըսեն թէ Ճենովիզները շինեցին։ Ըստ Եւսեբիոսի Սինոպ շինուեցաւ Երեմիա մարգարէին ժամանակը 625 տարի Քրիստոսէն առաջ. կերեւնայ թէ երկրորդ շինութիւնն է բերդին։ Ուստի շատ տեղ բերդին պատերուն վրայ տեսանք քարերուն հետ հիւսած՝ մարդու արձան, կենդանեաց գլուխ, զարդեր, սիւներ. նաեւ այլազգեաց գերեզմանատունը պատուանդան, խարիսխ, եւ սեան կտորներ կան. որ են մնացորդ հին սրահին եւ ձեմարանին. որ կը պատմէ Ստրաբոն։ Այս մարմարեա զարդերուն մէջ յունարէն գրուածներ ալ կան. բայց հնար չեղաւ օրինակելու։ Աշտարակի պատին մէջ շատ հին բաներ կան. ուր մարմարեա կիսարձան մի կայ դէմքն աւրած. բայց վիզն ու մազերը կերեւնան։ Նոյնուն կողմը մարմարեա արձան մի կայ կողինքի վրայ ընկած, ձեռքը աման. ոտքին դին մերկ կին մի կայ նստած՝ ձեռքն ունի աման. հեռուն ալ տղայ մի փոսէն ջուր կը հանէ. նաեւ կնկանը քով կիսաբոլոր սեղան կայ եղնիկի իրեք ոտաց վրայ կեցած։ Անդին կայ աւերակ հին պատի. որ էր կռատուն։

Այս բերդին դիրքն է հիւսիսակողմն. ունի ներքնաբերդ հարաւային կողմն. մէկ դրան վրայ յունարէն գիր կայ, եւ երկու առիւծ Ճենովիզներէն մնացած. որ երկու պատնէշի վրայ կեցած են ամբողջ. բերդին շրջապատն է երկու մղոնէն աւելի. եւ պարսպացին

վրայ շինած ըլլալով մէկ կողմը կը հասնի արեւմտեան ծովեզերքը, և մէկալ կողմն է արեւելեան ծոցը. ուր է նաւահանգիստ և նաւատեղի մեծ։ Ներքին աւազանին վրայ ըլլալով այլազգները պատմեցին մեզ, թէ առաջ աւազով գոցված էր. ետքը կախարդութեամբ դիւանք բացին, ու աւազը Աղլիման տարին. որ է տառապել։

75. Պօղնէյէ, կըսուի թերակղզին Անատոլու. ըստ հին. Սկուտէրի. որ եղած է յունական քաղաքն Քրի-սոփի. այսինքն գլուխ կամ սար։ Այս տարին սկիզբն է նեղ պարանոց. որուն լայնք է ութհարիւր քայլ մէկ ծոցէն մէկալ ծոցը։ Տես աշխարհացուցին վրայ։ Ոմանք կըսեն թէ այս պարանոց առաջ բաց ըլլալով՝ ցամաքէն կամուրջ շինած էր բերդն անցնելու. ուկից փոքր նաւեր մէկ ծոցէն մէկալը կանցնէին։ Այս թերակղզիին շրջապատը տասնըութ մղոն կը դնեն. բայց բերդին ծայրէն առնելով այնչափ չի կայ։ Թերակղզիին վրայ տեսանք երեւելի ուխտատեղի, կամ վանատուն այլազգաց. ուր կայ գերեզման, և լուջուր. որ կըսեն Սէիտ պիլալ Խէտըէտի։ Մօտը կայ եռանկիւնաձև աւերակ. մէկ անկիւնն է դէպ 'ի Աղլիման. մէկը դէպ 'ի բերդը. մէկալը դէպ 'ի նաւահանգիստը. կերեւնայ թէ մատուռ էր։ Հռոմայեցւոց գերեզմաններն ամբողջ կեցած են. ասկից շատ անգամ հին քարեր և ստակներ կելլեն. մեր օրը փորեցին՝ քանի մի ոսկին գտան Միհրդատին։ Հռոմայեցիք իրենց գանձը, և մեհենական գրեանքը բերդին մէջ կը պահէին։ Խորենացին կը պատմէ, թէ Ափրիկանոս յերրորդ դարուն Անատոլու կատտանը մեհենական գրքերէն հանեց Հայոց թագաւորներուն պատմութիւնն, որ քուրմերը գրեր էին՝ երբոր Անատոլու կը տիրէին Միհրդատ և այլք։ Նաև այն գրքեանքը յետոյ Պոնտոսէն Ուռհայ տարեր էին. որպէս տեսեր էր Խորենացին։

Ստրաբոն շատ կը գովէ Անատոլու լեռներն, ու պարտէզները. և մինչև հիմա ծառերով զարդարած տեսանք չորս դին. Ստամպօլ կերթան այս կողմէն մեծամեծ նաւերուն փայտերը։ Ուր կայ կարմիր ըն-

տիր կաւ, որ բարակ ամաններ կը շինեն. ոմանք կը-
սեն թէ կանանչ կաւ ալ կայ Սինոպու լեռներն, որ
Սէնօփլ բառը կանանչ մէկնելով՝ ըսին թէ ասկէց ե-
լած է Սինոբ անունս. Կան նաև ձիթենիք. ուսկից
ձէթ կը շինեն. Ծովուն քովերը ափսինթի նման խո-
տեր բուսած են. որ հիները ափսինթ պոնտոսի կանու-
անէին. Կան ուրիշ բժշկական խոտեր Սինոպու
լեռներուն վրայ. Քրիստոնեայք բերդէն դուրս կը
բնակէին. և մինչև հիմա յոյները քաջ և խրոխտ են.
Հայերը շատ քիչ են, և ունին եկեղեցի. Երբոր
եւրոպացիք Սամամիօլ առին, Սինոպ եղաւ գլխաւոր
քաղաք Տրապիզոնի կայսերաց. Յետոյ առին Օսման-
ցիք. բայց Իսմայիլ պէկին ինքնագլուխ կը տիրէր Սի-
նոպ 1461էն. իսկ Շաթիր պէկին Սինոպու տարուէ
տարի տուրք կուտային Տրապիզոնի կայսերք. և ան-
կէ մինչև ցայժմ Օսմանցին կը տիրէ.

Սինոպէն շատ երևելի մարդիկ ելած են. ուր
ծնած էր Դիոգինէս փիլիսոփան 340. տարի Քրիստո-
սէն առաջ. որ Շնական փիլիսոփաներուն առաջնորդն
ըլլալով, որոնք աղքատ կապրէին, ինքն ալ շուն
կամ շնական ըսվեցաւ. որ անուանի իմաստասիրաց
մէկն է, թէպէտ կեանքն էր ողորմելի և կարատար-
նակ. Նայս փիլիսոփային գերեզմանին քարը գտնը-
վեցաւ. որ է հին մէրմէր. վերը նստեցուցեր են
շուն մի, և տակը կայ յունարէն գիր այսպէս.



(Հ). ԽՕՍԵԱ՛Ց ՈՒՐԵՄՆ ՇՈՒՆԴ ԶՈ՛ՅՐ ԳԵՐԵԶՄԱՆ
ՊԱՀՊԱՆԵՍ ԱՅԴՉԱՓ ԶԳՈՒՇՈՒԹԵԱՄԲ.

(Պ). ՕՇԱՆ.

(Հ). ԻՒ Ո՛Վ ԻՑԷ ԱՅՐԴ՝ ԶՈՐ ԴՈՒ ՇՈՒՆ ԱՆՈՒԱՆԵՍ.

(Պ). ԴԻՈԳԻՆԷՍ.

(Հ)․ ՈՒՍՏԻ՛ ԷՐ ԱՐԴԵՕՔ ՆԱ․

(Գ)․ Ի ՍԻՆՈԲԱՑ․ ԵՒ ՆԱ ԻՆՔՆ Է, ՈՐ ԵՐԲԵՄՆ ԲՆԱԿԷՐ 'Ի ԿԱՐԱՍԻ, ԵՒ ԱՅԺՄ ԱՍՏԵՂՔ ԵՆ ՆՈՐԱ ԲՆԱԿԱՐԱՆ։

Այս քաղաքէն էր սուրբ Փոկաս Հայրապետն սքան-չելագործ, որ քարոզեց նաև Ամասիա և Ամիսոն․ ուստի եղաւ եպիսկոպոս Սինոպայ, և հոն կատա-րեցաւ Տրայիանոսի օրը։ Այսպէս կըսեն թէ Անդրէաս առաքեալ Հերակլիա, և բոլոր այս կողմերս քարոզե-լով լուսաւորեց․ սակայն Կաթողիկեայ Թղթէն կե-րեւնայ թէ Պետրոս առաքեալ Անդրեայ նախորդէն ե-ւս եկաւ Գաղատիա, և բոլոր Պոնտոսի քաղաքները լուսաւորեց․ որոնց յետոյ Թուղթ գրեց՝ * Ի սփիւռս պանդխտացելոց *։ Սինոպայ սարին առաջը մղոն մը հեռու փոքր կղզի կայ ապառաժ․ որ այլազգը կանուանէ Պօ-զինպէ․ որուն մէջէն նաւ կանցնի․ վրան բան չի ան-սանիր։ Սինոպայ աշխարհագրական լայնութիւնն է . . . . 41°. 22'.
Երկայնութիւնն է 32°. 50'։

76․ ԱԻՐՉԷ, լատ Արմ․ Պարթենիա, հին քաղաք սառ-նըրութ մղոն հեռու է Սինոպէն․ ունի լաւ նաւա-հանգիստ բաւական քան նաւաց․ շատ առատ տեղ է․ ուր կայ հին բերդ, և գետ։

77․ ՉԱՅԱՂՁԻ, ինը մղոն ասդին է․ և մօտն է Ալօղ, կամ Փըռնըզ աղբն․ որ են գետի բերանները․ ուր տեսանք քիթ Գոստանդնուպոլսոյ ջրանցքի․ առջին նաւ կըր-նայ կենալ իբր նաւահանգիստ։ Հիներն այս տեղս կանուանէին Զագորա։

78․ ԳԸԶԸԼ ԸՐՄԱԳ, կամ լատ Հն․ Ալիս գետ հռչակաւոր հին ատենը․ ինը մղոն հեռու է վերի-նէն․ որ է կարմրագոյն և երագընթաց․ փոքր Հայ-աստանէն կելլէ Սեբաստիոյ կողմէն կանցնի կուգայ Ալիկաար․ և անկէ հիւսիս խոտորելով կը վազէ Պոն-տոս․ բերանը շատ լայն չէ․ զի երբեմն բուռն գա-լով աւազ կը լեցնի․ ուր երկայն ցամաք լեզու կայ դէպ 'ի արեւելք․ Խորենացին կըսէ թէ Ասողի-

կէս և Ալիս 'ի Սեբաստիոյ երկրէն, և ոլորեալ անկանի 'ի ծովն պոնտոս։ Ապպիանոս կը պատմէ թէ Միհրդատ այս գետին քով պատերազմեցաւ, և մեծ յաղթութիւն ըրաւ հռոմայեցւոց դէմ. յետոյ հանդիսաւոր զոհ ըրաւ այս կերպով. բարձր լեռան վրայ շատ փայտ շարեցին. և առջի փայտերը թագաւորն ու մեծամեծները բերին. անոր քով ուրիշ փայտակոյտ մ'ալ բարձրացուցին, որ վեր ելլելով կը նեղնար։ Առջի փայտակոյտին վրայ դրին մեղր, գինի, կաթն, եղ, և խունկ, որ ընծայեցին կուռքին։ Երկրորդին վրան ալ շատ կերակուրներ լեցուցին, ու կրակ տալէն այրեցին. որ հազիւր մղոն հեռուէն բոցը կերևնար. ահա այսպէս կատարեց հեթանոսական սնոտիապաշտութիւնն։ Այս գետին մօտ կը դնեն Ազատ աւանն, որ հին քաղաքի աւերակին վրայ շինած էր. նաև հոն էր աթենացւոց հատուածը։ Կ'ըսուի թէ այս գետէն մինչև Սամսոն կըսուէր Ամիսոս. զի այս տեղս աւելի կը յարմարի Սամսոնի (80)։ Խորենացին կը յիշէ նաև Գերմանուպօլիս հին մայրաքաղաք Ալիս գետին վրայ շինած, որ հիմա տեղը չի կայ։

Այս գետէն անդին է Խնձիր դաշտն. ուսկից կըսկըսի երկայնածառանոցն, որ Չարշը կըսուի։ Ասկէց մինչև Չարշամպայի քիթն է ծոց Սամսոնի, և մինչև Իւնէ կըսուի Էնոպոնոս։

79. ԳՈՒՄՃՈՒՂԱԶ, ինննսուն մղոն հեռու է Սէրչէն, և է ընդարձակ նաւահանգիստ ապահով. թէպէտ տեղ տեղ ծանծաղ է. որ ըստ հն. կըսուէր Ամիսոն նաւահանգիստ. ուր կայ հին բաղնիք և խանութ. չորս բոլորը ծառնոց է, ուրիշ բան չի տեսնուիր։ Ասկէց վերն է Գոքեսու. ուսկից կըսկըսի Ջէնիկ. ըստ մեզ Սինոփ. որ է ընդարձակ գաւառ և կը հասնի մինչև Պաթլամա բերդ (91)։

80. ՍԱՄՍՈՆ, ըստ հն. Ամիսոս, տասնըութ մղոն հեռու է վերինէն. որ է բարեբեր քաղաք, ունի հին բերդ և հին շէնքեր. նաւահանգիստն է ընդարձակ. ուր կայ քիթ, բայց առաջը բաց ըլլալով անյաջող է. Երևելի վաճառականութեան տեղ ըլլալով ամէն ազգ պակաս չէ. կան նաև հայեր։ Աղեքսանդրի ժամա-

նակը Ամասիոն ազատ քաղաք էր․ ինչպէս յայտնի է կորած սահմաններէն․ յետոյ Միհրդատ տիրեց, և թագաւորական տեղ շինեց Ասիա գաւառին քով ըստ Յոհ․ կաթողիկոսին ։ Ապպիանոս կը պատմէ, թէ Միհրդատ շինեց Եւպատորիա Ամասիոյ մօտ, և ըրաւ իրեն արքունիք․ ուստի երևելի տեղ էր անուա-տենը ։ Հոս բերին Պոմպէոսի՝ Միհրդատին մարմինը․ բայց Պոմպէոս չուզեց տեսնել, որ ծաղր ըրած չըլլայ․ այլ շուտով ղրկեց Սինոպ, որ մեծ պատուով թաղեն ։

Երեք մղոն հեռուն է Տէկրէնոս լեռը․ ուր գտան մեր օրը մեծ հոր արծաթի հանքի Գիւմիշխանէն մնա-ցած․ հանքը տեսանք կարմրադոյն և ծանր․ փորձեցին, որ ոսկի ալ կար մէջը ։ Ութը մղոն հեռուն է Ակդէկ լեռը բարձր․ վրան կայ առողջարար ջուր․ այս լեռն է նշան Խրիմէն եկող նաւերուն ։

81․ ՉԱՐՇԱՆՊԱ, գետ երևելի մեծ և զօրաւոր․ ըստ հին․ Ալիս կամ Իրիս․ այսինքն կամար․ և ըստ ոմանց Լիւկոս․ բերանը ծովուն խառնուելով կը լայնայ իբր նաւահանգիստ․ թէպէտ ծանծաղ է ։ Այս գետ կուգայ հայաստանէն, և Ամասիայի մէջէն անցնելով կը վազէ Սինոպանոս ։ Իրիթն է արևելեան կողմն․ որ կըսուի Չարշամպա, կամ Չարշի պազարի, նաև Աղաճ պաշի․ որովհետև այս գետէն կըսկըսի երկայն ծառնոցը, և երսուն մղոն երթալով կը հասնի Թէրմէի նաւահանգիստը ։ Այս գետին մէջէն կելլեն մեծամեծ ձկներ․ որուն վրա շինած է վերը Ամասիա քաղաքն, որ էր անուանի մայրաքաղաք Սինոպանոս գաւառին ։

Միհրդատ այս քաղաքն ընդարձակ պարսպելով կոչեց Տիեզերաշահման․ շատ երևելի շէնքեր շինեց արևելեան կողմն Ասիա գաւառին․ իսկ թագաւորական պալատը հիւսիսային կողմը շինեց ։ Լեռան վրա հին բերդ կայ․ նաև տեղ տեղ քարէ փորած խուցեր կան․ կերևնայ թէ քուրմերու տեղեր են․ հիմա Տէրվիշներ կը բնակին ։ Քաղաքը ջուր բերելու համար իրեք մղոն տեղ ապառաժ լեռը կտրեր են սոսկալի աշխատանքով ։ Այս քաղաքին դրամը

գանուի, որ գրած է AMAΣIAΣ MHTPOΠ. ΠONT. AMAΣEAΣ MHT: ΠPΩT. ΠONT: այսինքն ԱՄԱՍԻԱՑԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՊՈՆՏՈՍԻ. ԱՄԱՍԷԱՑԻ ՄԱՅՐ. ԱՌԱՋ. ՊՈՆՏ:

Այս քաղաքէն էր Ստրաբոն անուանի հնախօսը. նաև սուրբ Վասիլեոսն Ամասիայի եպիսկոպոսն էր. որ նահատակեցաւ 319ին. նմանապէս անկէց էր սուրբ Թէոդորոս զօրավարն, որ այրեց Ռհեա չաստուածուհւոյն կռատունն, որ կը պաշտէին ամասիացիք. անոր համար Գոդղիոս դատաւորն ողջ ողջ զինքն այրելով նահատակեց:

82. ԶԱՐՇԱՆԳԱ աւան, գետին բերնէն չորս ժամ վերն է. ուսկից կանցնի նոյն գետը. այս տեղ շատ գեղեցիկ է, դաշտերով, և պարտէզներով զարդարած. ուր շատ տուն կայ մեր ազգէն. ունին եկեղեցի: Կըսեն թէ հոս առաջ լիճ էր. յետոյ գետը ճամբայ բանալով ծովն է վազեր. ուստի Փերմաններուն մէջ կը գրեն Գէօլ եէրի: Այս աւան շատ ժամանակ չէ որ շինցաւ. և ամէն ազգաց շէնքեր շինվեցան:

Խոստուղանլը աւան մօտ է Զարշանգայի. բնակիչները են հայ հռոմէնու եկած. և ամէնքը զինուոր գրված են որդւոց որդի. և ունին զօրապետ հայ իշխան, որ զիրենք կը կառավարէ. մարդէ ահ չունին. միայն Տէրէպէկիրին հետ պատերազմ կերթան. և զօրաւոր մարդիկ են (144):

83. ԹԷՐՄԷ. լաւ յն. Թէրմոդ. այսինքն ջերմաբուղխ տաք ջուր. քառասունըչորս մղոն հեռու է Սամսոնէն. ունի գետեր, և գլխաւորն է Թէրմոդոն անուանի գետ հին ատենը. ուր հիմա նաւ չի մտնէր աւազով լեցուն ըլլալուն համար, ինչպէս փորձեցինք, թէպէտ լայն է. նաւահանգիստն է ընդարձակ և ապահով. քիթը կըսվի Գէլա պուռունի, որ արևմտեան հովը կը կտրէ: Գետը վերն ըլլալով ամէն շաբթու հոս վաճառ կըլլայ: Արրիանոս հոս Հերակլեան նաւահանգիստ կը կոչէ:

Թէրմէ հին ժամանակը շատ անուանի տեղ էր. իշխանն էր դեցաղն, որ կըսվէր Սոլիմօս. որուն դրամը գտնըվեցաւ. մէկ կողմն էր իր անունը ΣOΛIMOΣ. մէկալ կողմը TEPMHΣΣEΩN. ԹԷՐՄԻՍԷՕՆ: Թէպէտ

մինք հոս երեւելի բան չէ տեսանք․ սակայն հին ա-տենը շատ անուանի էր Ամազոնի կանանց համար․ որոնց գլխաւոր քաղաքն էր Թէրմէի գետին քով․ որ կըսուէր Թէմիսգօր․ և գետն էր Թէրմօդօն․ որ ա-մանք Ամասոն կանուանեն ։

Ամազոնք էին պատերազմօղ քաջ կանայք․ որ ըստ հին պատմիչներուն՝ ինքնագլուխ տէրութիւն եղան Թէրմէի մօտ, և՛ սև ծովուն եզերքէն մինչև Փարշ տիրեցին ։ Ասոնց սկիզբն էր Սկիւթացոցմէ․ որոնց մէ երկու կտրիճ արքայորդիք Իլին և Սկօլօպիտ աքսորվեցան մինչև Թէրմէ․ ուր տեղը բնակեցան․ բայց անհանդարտ ազգ ըլլալով քովի ազգերը Թշնամա-ցան իրենց հետ, մեծ պատերազմ բացին, և շատը բանե-ցին գերի ըրին․ Մնացածները ժողվեցան բոլոր տէրու-թիւր յանձնեցին կնիկներուն՝ իրենք Թշնամեաց դէմ պատերազմ գնացին․ իսկ կնիկները մեծամտելով սկսան անկեղեւ անարգել երիկմարդիկ․ և յետոյ Թշնամա-նալով կատղեցան ամենուն դէմ։ Երկու Թագուհի ունէին․ մէկը զօրքը կըռնայէր, մէկալը կառավարու-թիւնը․ վերջի Թագուհիներն եղան Մենալիպ և Օ-րիթիէ ։

Այս կանայք բոլոր զօրական ըլլալով չունէին երիկմարդ․ երբոր ուզէին քովի ազգերէն օտար մարդ կառնէին․ և երբ մանչ կը ծնէին կամ կըսպաննէ-ին, և կամ անկար կընէին՝ որ չէ կըռնան պատե-րազմիլ․ և երբ աղջիկ կը ծնէին աջակողմի ծիծը կը կտրէին, կամ կէրէին․ որպէս զի դիւրութեամբ ա-ղեղը նետեն․ և անոր զօրութիւնը Թեւին երկնալով աջ ձեռքերնուն շատ ուժով կըլլար․ ահա այս պատճա-ռաւ Ամազոն ըսուեցան, որ միաստինք կամ անծիծ ըսել է ։ Զգեստնին մինչև ծունկն էր․ ձախ Թեւերնին և կուրծքերնին բաց էր․ աղջիկները կը սնուցանէին ձիու կաթով և մանանայով․ որ շատ ուժով կըլլային ։ Հիպոկրատ կըսէ Թէ, օրէնք ունէին, որ աղջիկները չէին կրնար կարգըլլիլ, մինչև որ իրենց Թշնամիներէն ի-րեք մարդ չըսպաննէին ։ Ասոնք Տրոյայի պատերազմին ատենը օգնութիւն գնացին Պրիամոս Թագաւորին․ և վրէժխնդրութեան համար կողոպտեցին Աթէնքը

2750. տարի առաջ ըստ Եւսեբիոսի. նախ կոխեցին Ասիա, և երեցին երևելի կառատունը. որոնց գլուխը կամ թագաւորուհին կըսուէր Թալէսոդրիս: Կըսեն թէ Եփեսոս քաղաքը, և Արտեմեայ տաճարը առնոք շինեցին. նաև կուռքը զարդարած էր սոտեամբք. որուն ընծայ կընէին կտրածները: Հերոդոտոս կը պատմէ թէ յոյները յաղթելով Ամազոնից գերի բռնեցին ու իրենց նաւերը լեցուցին, որ տանին. և շատ կը զարմանային անոնց քաջութեան և կրակոտութեանը վրա. բայց հովը տարաւ զանոնք Սպաղայի կողմը ձգեց. երբոր յոյները շփոթած էին կնիկները զամէնքն սպանեցին. և դուրս ելածնուն պէս որչափ ձի գտան հեծան սկսան պատերազմիլ տեղացոց հետ. որոնք տեսան որ չըլլար, քիչ մը տեղ տըւին իրենց ու այնպէս միացան, և խառնակեցան (182): Ընկերակ սկսան էրկան հետ նստիլ. և հասկըցան, որ տուն տեղ ըլլալն աղէկ բան է: Ըստ ոմանց եղան Ամազոնիք նաև Ափրիկէի կողմը: Տես Հմտ. Ա. Դ. 284:

Թէպէտ ոմանք սուտ կը համարին այս պատմութիւնը. բայց շատերը կը հաստատեն. ինչպէս մենք ալ տեսանք այս կողմերս քաջ կնիկմարդիկ (95): Ովիդիոս այսպէս կը բերէ.

* Դու Թերմոդան իգաժողով խմբին ծանօթ.
Եւ դու Փասիս արանց երբեմն յունաց կարօտ||:
Ովիդ. Պոնտ. Դ:

84. ՆԻՆՈՒԷ. ըստ յն. Նինօ քաղաք տասնըութ մըղոն հեռու է Թ[illegible]րմէշէն. ծովեզերքն է լուսնաձև գեղեցիկ. հարաւային կողմը մեծ նաւեր կը շինեն. ութհարիւր տուն հոռոմ, և քառասուն տուն հայ կայ, ունին եկեղեցի. այլազգը շատ է. և երևելի շէնք է փաշային պալատը: Կէս ժամ հեռու հարաւային կողմն է բարձր լեռն փոքրիկ և սուր. վրան կայ ու նաւորիկ բերդ չորս պարսպով շրջապատած. լեռան գլուխն է վերջի պատը. ամէն շրջապատ ունի դուռն. վերջի շրջապատն երկու դուռ ունի. մէջը կայ եօթը ջրհորք (Սառնիճ): Այս բերդն է ձինվլիզէն մեա-

ցած․ որ[illegible]աւերը գոցելով անհրաժեշտ եղած էր․
տեղացի Տէրէպէկլիները գտան նորոգեցին։ Արեւ-
լեան կողմն է գետը, որ Փաշամոս կըսէ Արրիանոս։
Իսկ նաւահանգիստը անյաջող է ծանծաղ ըլլալուն
համար։ Արեւմտեան քթին վրա տեսանք սուրբ Նի-
կողայոսի եկեղեցին յունաց քարաշէն բոլորակ՝ հին
ժամանակէն մնացած․ որ ուխտատեղի է քրիստոնէից։
Այս Գուսա կըսվի Պոլեմոնեան պոնտոս․ որ հին
ատենը երեւելի նահանգ էր․ և Պօլէմոն թագա-
ւորին անուամբն այսպէս կոչվեցաւ․ վասն զի ըստ Ստ-
րաբոնի՝ Պօլէմոն և իր թագուհին Պիւթոդորիս այս
կողմս կըտիրէին մինչև Տրապիզոն, և մինչև Կողքիս
կամ Փարշ։

85․ ՓԱՑԱ, տասնըութ մղոն հեռու է Իւնեէէն․
ունի լաւ նաւահանգիստ ձմերելու․ որ է գետին բե-
րանը․ իրեք մղոն բացը փոքր կղզի կայ ապառաժ․
որ կըսվի Գուռշ տաշի։ Փաձայէն գետն է անուանի․
որ հին ատենը Սիտոծա կըսվէր։ Ասոր կը դնեն Պօ-
լամոն գետ․ և կար հին քաղաք․ այս գետ պզտի նա-
ւեր կրնան մտնել․ հոն մօտ են ինքնաբուղխ տաք
ջուր, բաղնիք, և հին եկեղեցի․ որ կերեւնայ թէ
հին Պօլէմոն քաղաքին մնացորդն են․ որպէս կը յի-
շեն հիները, որ շինած էր գետին քով։ Վերջի ա-
տեններս Փաձայէն մօտ փորեցին հին բերդ մի գը-
տան, և պատին մէջ խորանի նման շէնքեր կան։ Իսկ
ինը մղոն աստին ցամաքէն հեռու ապառաժին վրա
կայ հին բերդ, և մէջն եկեղեցի․ որ կըսվի Այա
գալէսի։ Կայ նաև ուրիշ հին բերդ արեւելեան դին։

86․ ԿԻԱՍՕՆ, ըստ հն. Կերասոս [illegible], տասնըութ
մղոն հեռու է վերինէն․ ունի նաւ կենալու տեղ․
թէպէտ առաջը քարոտ է։ Այս անունը Յասոնէն
առած է, որ Արգոնաւորդներով հօս հանդիպեցաւ
(36)։ Բերդին տակը տեսանք հին վանք, կամ մեծ
եկեղեցի Աստուածածնայ․ նոյնպէս լեռան վրա հին
բերդ Խօրեան գալէսի։ Այս կողմս շատ լորամարդի
կըլլայ․ զի Խրիմէն ասդին անցնելով կը հոգնին կիյ-
նին․ երբեմն ծովը հանդարտ գտնելով զգուշութիւ
կիջնին մէկ թեւով ծովուն վրա կը կըթընին հոգնա-

թիւն կառնուն. և նորէն կըսկըսին երթալ (60)։

87. ՍՕՆԱ, ինը մղոն է Սամսոնէն. որ ունի ա-ռանձին քիթ, և լաւ նաւահանգիստ. ուր ինչք տեղ նաւ կը կենայ ապահով, և շատ նաւեր կընան ձմե-րել հոն. բայց գեղը վերն է. ունի խանութներ և աղբիւր։ Սօնայի քթին տակը տեսանք հին բերդ Գօալէճիկ. նաև Պօռճագ գալէ։ Արրիանոս ասդին կը դնէ Մէլանթիոս, այսինքն Գարատէրէ։

88. ՌԷՐՃԷՆԳԷ աւաննոյն գոգին մէջն է Սօնայէն ասդին. ուր Արրիանոս կը յիշէ Պօդիդոր քաղաք. որ Սինոպացիք հաստուած ըրկելով շէնցուցեր էին. հոն հանդիպեցաւ Քսենոփոն, ուր կար նաւահանգիստ. որ պիտի ըլլայ Սօնայի մօտ այս ծոցին մէջ։

89. ՊՕԶԹԷՓԷ, չորս մղոն ասդին է. ունի սար և լաւ նաւահանգիստ։ լեռան վրայ հին եկեղեցի կայ սուրբ Գէորգայ. քովէն կանցնի գետ Պօռճագ տէ-րէսի. ըստ Արր. Փարմադէնոս։

90. ՕՐՏՈՒ, քսանըչորս մղոն հեռու է Սօնայէն, չունի լաւ նաւահանգիստ. ծովուն քով կայ հին բերդ պատուածին վրայ անառիկ, որ կըսվի Պօղուգ գալէ. որուն առաջը ծովուն մէջ մեծ թնդանօթ մի ձգեր են։ Առաջ հոս բնակութիւն չի կար. մեր օրը ձե-ռամբ Մահմուտի Աւտիք տրապիզոնցի իշխանին՝ բնակութիւն շինվեցաւ ամենայն ազգաց։ Օրտուին լեռանը վրայ հին բերդին աւերակը կերևնայ. ուր երկաթ դուռ կայ, որ շատ սանդուխով վար կիջնի մինչև գետը։

Օրտուէն մինչև Պօլամանձըք փազարի քսանըչորս մղոն է, ուր կան խանութք։ Այվասիլ քիթ մօտն է. որ ունի փոքր ծոց. ամառը կընայ նաւ կենալ։

91. ՊԱԹԼԱՄԱ բերդ հին, այվասիլէն ասդին է. տակէն բարակ ջուր կանցնի։ Ասկէց ասդին դէպ 'ի Տրապիզոն սախակ (Պիւլպիւլ) չանցնիր։ Ահա հոս է սահմանագլուխը Տրապիզոն նահանգին, որ կը հասնի մինչև Բէմէր (140)։ Ասկէ կըսկըսի Պոն-տոս կապադովկիոյ. ուր մինչև Փլադանա ապահով նաւահանգիստ չըլլալով նաւերը շատ կը վտանգին արևմտեան հովէն. երբեմն մինչև Ապադա տանի կը

ծղէ. ինչպէս գիտեմ տարաւ Լուկուլլոս ձգեց սաստիկ ալէկոծութեամբ։

92. ԿԻՐԷՍՈՒՆ քաղաք, քառասունըմեկ մղոն հեռու է օրտուէն. ըստ հն. Կերասուս, այսինքն Կերեզ. որ ըստ Արր". նախ Միլեսացիք շինեցին. որոնց տուրք կուտային Կիրէսունցիք. յետոյ Փառնակ որդին Միհրդատայ բերդը շինեց, կամ նորոգեց՝ Փառնակիա կոչվեցաւ. որ շինած է ծովուն մէջ բլուրին վրայ երկու ապառաժի մէջոց. Ապառաժին վրայ հին բերդ կայ քանդված. որ Տրապիզոնի Թագաւորները շիներ են։

Այն ատենը շատ վաճառականութիւն չի կար հոս, ինչպէս կերեւնայ դրամէն. որուն վրայ Ալծեմորդ մի կայ կայնած. աջ ձեռքը Զրագ, ձախ ձեռքը հովլիւի գաւազան. և միւս դին Մարկոսի Աւրելիոսի գլուխը. ասոր նշան է թէ փայտի, և ոչխարի առատութիւն կընէին։ Կիրեզ պտուղն առաջ այս քաղաքը շատ ըլլալով Կիրէսուն կոչվեցաւ. որ ըստ Ամմիանոսի հռոմայեցիք տիրեցին եւս Լուկուլոս տարաւ Հռոմ. և անկէ եւս Եւրոպա շատցուցին քերեզի ծառն. և հարիւր քսան տարիէն եւս Ինկիլթէռա տարին։

Կիրէսուն երկու նաւահանգիստ ունի. մէկը արեւելք Տէմիրգափու ըսածն. մէկալը արեւմուտք՝ Ձաձա ըսածն. որ ձմեռն ապահով չեն։ Իսկ սարին վրայ կայ լաւ բերդ հին. մէջը եկեղեցիներ կան։ Քաղաքին մէջ շատ տուն, և խանութ կան. բնակիչները են յն. հյ. և տճ. ընդ ամենայն հազար տուն կըլլեն. ուր առաջ եպիսկոպոս կը նստէր. իսկ հայերը քառասուն տուն կան, ունին եկեղեցի ապառաժ քարէ փորած. և այս ապառաժին վրան է հին բերդը։

Այս եկեղեցին յունացվէ առէն հարիւր տարի առաջ. և նուիրեցին սուրբ Սարգսին. որ առաջ էր Աստուածածնայ անուամբ. ծովուն քով կայ փոքր լիճ, ուսկից կելլէ Ագիդ կամ Ջաղըդ և Ալիհաւր քար. ունի շրջակայն լաւ պարտէզներ։

Կիրէսունի առջեւ, փոքրիկ կղզի Տէմիր գափուէն իրեք մղոն բացն է, որուն շրջապատն է իրեք մղոն.

վրան կայ վանք և եկեղեցի ։ Ըրիխանու այս կողմն կանուանի Ըստուծմբիլըր․ այսինքն աղօթեց ։

93․ ՊՕՂԱՃԸԳ, իրեք մղոն ասդին է Պէրէթու-նէն․ որ է լաւ նաւահանգիստ, և ունի փոքր քիթ․ նաւահանգիստն է իւր բերան, և իրեք նաւ կրնայ ձմերել ապահովապէս․ Քօտ է հոն Տէշլիպուռնի, Տէշայ, և Սօլաղըլի փոզայրի․ որ փոքր աւաններ են․ երևելի բան չի կայ ։

94․ ՕՒՖՐԷ, ըստ հն․ Օէֆիլոս, տասնըութ մղոն հեռու է Պէրէթունէն․ ունի նաւահանգիստ Տէշլիպուռնիին տակը․ ուր հին բերդ կայ, և քովէն ջուր կանցնի ։ Իսկ Լապիէ աւանը չորս մղոն ասդին է․ վերը ունի հին բերդ ։ Ըսոր վրան է Լահանօզ մանաստանն․ ուսկից շատ պղինձ կելլէ ։

95․ ԹԻՐԻՊՕԼԻ, ըստ հն․ Տրիպօլիս, տասնըութ մղոն հեռու է Օէֆրէէն․ նաւահանգիստը փոքր ըլլալով քանի միայն կրնայ ձմերել․ բայց բերանը քարոտ և դժուար է մտնը ։ Պաղաքը ծովուն եզերքէն ըլլալով գեղեցիկ երևցաւ մեզ․ բնակիչները են ․յն․ հյ․ եւ տճ ։ Պաղաքին ծայրը Օէֆրէի դին աւտանք փոքր կղզի, որ կըսուի Չիրանիմողլի․ մէջ ան-դէն նաւ կրնայ անցնիլ ։ Պիլլուէ պուռնին մօտ է․ վրան կայ հին ժամ ։ Թրիպօլի իրեք քաղաք ըսել է․ որ իրեք մասն կը բաժնուի, և իրեք բերդ ունի հը-նաց մնացած․ առջինը՝ Պալիպանիէ գուլէ․ երկրորդ բերդն է սարին վրա ծովուն մէջ․ իսկ երրորդ բեր-դը Պէտրոնա՝ իրեք ժամ վերն է․ որ է անառիկ սարա-ւածի վրա․ որուն մէջ քաղ կին մի Տէրվիշ Պէլէ՝ վերջ անիս պատմեցաւ մեր օրը փաշային հետ, և մնաց անյաղթելի նման Ըմպանեաց (83) ։ Յետոյ գնաց փաշային հետ հաշտըլեցաւ քաջութեամբ ։ Ըյս ապառաժին վրա դուր է․ հին ատենէն մնացած ջրջիղը (Սոունիճներ) կան ։ Բայլաղըն ատենը ա-տենը հոսանները հաւ տարինեզրով մնացեր են․ վա-րուցան ալ կընէին վրան ։ Նյլ այնչափ հողնեցուցեր են Ըյլաղըն, որ Պէթ տուն անուն գրեր են իրենց․ որ եղեր է Պէտրոնա ։ Ըրրխանուի ատենը իրեք մղոն ասդին կար Ըսյէրա, այսինքն արծաթահանք․ ուր

մինչև հիմա անմշակելի հանք կը գտնուի ։ Այս գաւառին կառավարիչն է Տէփլիզ գրուի քաղքին մէկնին ։ Արևմտոս Ախալքալաք է Կեօրելէյին մէջը կը դնէ հին բերդը Փիւլթագլա. որուն քովէն գետ կանցնի ։

96. ՀԱՆՁԱՎԱՆ ՓԱՇԱՐԻ, ինը մղոն ատրէն է. ձուսկից կանգնի Խարբութա գետ. վեց մղոն աղէն է Իմէրէթոյ ասանը. ուր կայ բնակութիւնք և խանութք ուսձկաց. իսկ ութ մղոն աղէն է Աշալը, Ջաւուշլի, ... մղոն ատէն Տիֆլիսէ փաշարի ։

Գուրպաղոսանան պմնատափ, Թօքիալօլիէն աստին երկայն կերևնայ. բայց ծոց և նաւահանգիստ չունի. ուր ապառած տեղեր ըլլալով աւազակաց բնակարան է. բան չի առնանք ։

97. ՄԻՕՐԷԼԻ, ըստ Արը". Գօրալա բերդ, վեց մղոն աղէն է հին ատենէն մնացած. ուր Իւչիւնձօղլի Ահմէտ փաշան քաղաքը շինած էր. վերջը քանդեցին. ունի քիթ Կէօրէլէ պէստն բոլոր մղոն աղէն. ուր հինները կը դնեն Հնդմոսա. որ երկու քաղաք էր ըստ Ստրաբոնի ։ Ասկէց կըսկըսի Խօռօզի ատըն երկննալ դէպ ի ծովը ։

Ըմնդրութեամբ կը պատմեն, թէ այս կողմի ժողովուրդն էր Ջըրա սէծաբերքէն. որ կըսուին Ջէքնի. որոնք կռապաշտութենէ մնացած զարմանալի բաներ ունէին. տարին անգամ մի մեծ ուրախութեամբ արք և կանայք միասին խաղալով, և գիշերն ամէն լոյսը մարելով գարշելի բաներով կանցընէին, և հին կռապաշտներուն պէս առանց իրար ճանչնալու և առանց ազգականից և քոյր որոշելու կը խառնակէին գազանի նման. Այս բանը հիմա վերցած է իրենց մէջէն. սակայն շատը նամազ չեն գիտեր. և արբեցութիւնն իբր օրինաւոր գործք համարելով շատ կարբենան ։ Պէտաթիւպ չէլէպին կը պատմէ թէ՝ * Այզ Թուրքաց լազերուն հետ խառն կը բնակին, և լեզուն է թուրքերէն և պարսկերէն. որոնք են ըստ աղանդոյ պարսից ‖ ։ Անոր համար թէ լեզուներն տարբեր, և թէ սովորութիւններն շատ արտաքոյ տեսանք այս կողմի բնակիչներուն. որոնց սովորաբար մօրուքը կարճ, և ատամներն բարակ է ։

98. ՊԷՕՑԻՒՔ ԼԻՄԱՆ, վեց մղոն առդին է. ունի դետ և գեղեր. նաև հին բերդ Գիւրէօ գալէսի, որ ըստ յն. քանալի ըսել է։ Ասա է հոն Չամլըգ և Փօլ աղզի փազարին. նաև Իսքէֆիէ փազարի. որ ունի գետ և խանութ։ Ասոնք փոքր տեղեր ըլլալով վաճառ կըլլայ. կերթան վաճառականներ այս կողմերէն։ Աւր տեսանք քիթ Օնյէթունի պուռնի. ասոր վրան է հին բերդը։

99. ԵՕՌՕԶ ՊՈՒՌՆԻ, տասնըութ մղոն առդին է Կէօրէլէէն. և է մեծ սար Տրապիզոնի դէպ 'ի հիւսիս ծովը մտած Ապաղայի դէմ. որ հին ատենը Հիէրօն կամ Իէռօն օռօս կըսվէր, այսինքն Արքայական լեռն. ուր կար մեծ կռատուն Աթենասայ, և գեղեցիկ պարտէզ։ Այս քիթ ապահով կընէ Աղճէգալէի և Փլադանայի նաւահանգիստներն արևմտեան հովէն, որ շատ վտանգաւոր է այս կողմերս. ծոցին մէջ այն երկու ապահով նաւահանգիստները կան. և փոքրիկ քնձիր լիմանի՝ քթին մօտ։ Արրիանոս Պոնտոսի նաւահանգիստ կը յիշէ այս կողմն։

100. ԱՂՃԻ ԳԱԼԻ, հինգ մղոն առդին է. ունի նաւահանգիստ ապահով արևմտեան հովէն, և հին բերդ. որուն վրայ արեան նշաններ կերևնան. զի առնըված ատենը շատ մարդ ջարդըվեր է, անոնց արիւնն է կըսեն։ Այս բերդ ծովուն մօտ բլուրին վրայ շինած ըլլալով՝ հեռուէն պատերը ճերմակ երևնալուն համար Աղճէ գալէ ըսվեցաւ։ Կը պատմեն թէ Տրապիզոն առնըվելէն ետև այս բերդին բնակիչները եօթը տարի պատերազմեցան Օսմանցոց հետ, ետքը տվին բերդը. որուն քով տեսանք հին կարասներ հողէն եղած. ուր առաջ բնակութիւն և այգիներ են եղած, հիմա աւրա են. ուսկից կելլէ լաւ թիւթիւն։

101. ՓԼԱԴԱՆԱ աւան, վեց մղոն առդին է Աղճագալէ ծոցին մէջ. որ կը նշանակէ քարտի (Պուալադ) ծառ. հին ատենը հոն կը պաշտէին այս ծառը. ոմանք Փօլաթխանա կըսեն, այսինքն գործարան երկաթոյ։

Այս անուանի նաւահանգստին ապահով և ընդարձակ ըլլալով՝ Փլադանան հին ատենէն 'ի վեր վաճառատեղի է, դիրքը զուարճալի, երկիրը լաւ և պա-

բարտ. ուր շատ ձիթենի կայ, և ձէթն ընտիր է. ունի չորս հարիւր տուն, և վաթսուն-չորս գեղ-յն. հյ. տձ: Սեր բաց 'ի քայքայած եկեղեցիներէն ուրիշ հնութիւն չի տեսանք: Հոս կիրակի օրերը վաճառ (Բազար) կըլլայ. և մեծ առուտուր կըլլայ ամէն տեսակ ապրանաց: Սերջի պատերազմիս ատենը մոսկովները նաւերով եկան փլադանա շատ զօրք' հանեցին, որ առնուն Տրապիզոն. բայց պոնտացիք մեծ քաջութեամբ պաշարեցին, և բոլորը ջարդեցին: Փլադանայէն ասդին են Գիւլանպիա, Սէրէզ, և ուրիշ փոքր գեղերը:

Սյս կողմերս շատ թիւթիւնի արտեր տեսանք, և ընտիր թիւթիւն կելլէ. որ կը տանին Սոտամպօլ և Մոսկով: Փլադանայէն վերն է Մաչգա, որ հարիւր յիսուն գեղեր են. ուր շատ մատուռներ կան ասդին անդին. այլազգները հոռմերէն կը խօսին, և յոյներն են պղնձագործ. որոնք Սուլ. Մահմուտին օրը Պիւմիշխանայի տակը մտան. բայց Տէրէպէկին ինքնագլուխ է, և ամէն դատաստան ինքը կը տեսնէ. ուսկից կելլէ ընտիր եղ, և պանիր. նաև քթան, և այլն:

102. ՏԷՎՐԷՆՑ, իբրեք մղոն ասդին ընդարձակ ծոց է, այլ չէ ապահով. ուր բարձր լեռան վրա տեսանք երկու ձերմակ սիւներ տնկած վրան չուանի նշան: Նաւորդութեամբ կը պատմեն թէ ծովը մինչև հոն ըլլալով առաջ նաւերը հոն կը կապեն եղեր. որ և կոչեցաւ Տէրղէնը, այսինքն դռնափակ կամ կապան (5):

103. ԱՕՍ ՍՕՓԻԱ, իրեք մղոն ասդին զուարձալի բլուր է ծովուն քով, և բոլորտիքն են այլազգի տուներ. որ կըսվի Այա սօֆիա ծոկալլըսի: Այս բլուրին չորս դին պարսպի մէջ առած է. թէպէտ հիմա շատ տեղը քակված է: Երկայնութիւնը հարիւր քայլ չափեցինք. Իսկ մէջ տեղն աւելի դուր ըլլալու համար բոլորտիքը մանր կամարներ շիներ են հաստատ քարաշէն, և վրան շինկըցուցեր են:

Հա այս շիտակ տեղն իբր կեդրոնի վրա կանգնած է' Այա սօֆիա եկեղեցին յունաց, մեծաշէն և պայծառ. որ Ալէքսիոս կոմնենոս նորոգեց. բայց բուն Յուստինիանոս կայսր շինեց կըսեն յունուն իմաստ

տութեանն աստուծոյ. ինչպէս զանգակատան խորանին կամարին մէջ Իմաստութիւնն աստուծոյ որդին միածին նստած կերևնայ :

Այս եկեղեցին այնչափ մեծագործ և ամուր շինք է, որ տեղէ մի քար չէ ընկած, թէպէտ հոգ տանող չի կայ. ընդհանուր շէնքն է քառակուսի. իրեք կողմէն ալ կամարաւոր գաւիթներ ունի երկերկու մէրմէռ սիւներու վրայ կայնած : Բայց արևմտեանն է կրկին գաւիթ. ուր է մեծ դուռն : Իսկ հարաւային դրան ճակատն ամենէն մեծագործ, և գեղեցիկ է. վրան զանազան քանդակներ կան՝ հրեշտակի, մարդու, և խաչի. նաև առիւծի գլուխներ. և վերն է կայսերական նշանն արծիւ : Եկեղեցին է յոյնական կարգով շինած՝ գրեթէ քառակուսի. խորանին տեղն ընդարձակ, գմբէթը բարձր և գեղեցիկ՝ չորս երևելի սեանց վրայ կեցած : Այս մէրմէռ սիւները տասներկու կանգունէն աւելի են՝ ճերմակ, և տեղտեղ գունաւոր գեղեցիկ, չորսն ալ միակերպ : Յատակն ալ մէրմէռ քարերով զանազան ձևեր ձևացուցած է. թէպէտ տեղտեղ աւրած է. և ուրիշ բան չի կայ մէջը. միայն Նամազի տեղ կայ հարաւային կողմն, որ առնըլված ատենը ճամի ըրեր են :

Հիւսիսային կողմը եկեղեցիէն քիչ հեռու՝ կայ քառակուսի մատուռ հաստատ քարաշէն և պատկերազարդ. մէջը քառակուսի բաժնած է քառակուսի սիւներով և դրներով : Նոյնպէս հարաւային կողմը բլուրին ծայրը քառակուսի շէնք մի կայ քարաշէն. կերևնայ թէ պահապանի կամ ժամկոցի տեղ է :

104. Արևմտեան ծայրը բլուրին՝ քառակուսի զանգակատունը ամբողջ կեցած է բարձր և գեղեցիկ. որ երկու յարկ բաժնած է. առջի յարկին ելանք քարաշէն սանդուխով, որ է փոքր մատուռ սեղանով. իրեք քայլ կայ մինջոցը. ամէն կողմը պատկերազարդ :

Զանգակատան բակին քով քայքայած տեղեր ըլլալով կերևնայ թէ հոն էր ուսումնարանը տրապիզոնցի Տիւքիկոս փիլիսոփային, որ Անանիա շիրակացուն ատենը շատ ծաղկած էր յամի տեառն 661. թէպէտ Շիրակացին որ եկաւ՝ Տիւքիկոս Սուգի-

նէսսի վկայարանն էր. Թուի Թէ յետոյ գնաց Այա սօֆիա վանն զուարճալի տեղւոյն: Ուր ութը տարի կարդաց և փիլիսոփայ անուանեցաւ Անանիա շիրակացին. ինչպէս որ ինքը կը պատմէ. * Գնացի 'ի կոստանդինուպօլիս.. ասացին ինձ էր յանձն առեր այնքան ճանապարհ աշխատիլ. և տիւքիկոս վարդապետն բիւզանդիոյ հուպ է առ մեզ 'ի ծովեզրն պոնտոսի, որ կոչի տրապիզոն լի իմաստութեամբ... տեսաք բազում ճանապարհորդս եկեալ առ նա վասն հզաւր գիտութեան նորա: Այլև այժմ նաւակից եղև մեզ փիլադր սարկաւագն հայրապետին կոստանդինուպօլսի և բազում մանկունս ածէր առ նա աշակերտութիւն... Եւ երթեալ իմ գտի զնա 'ի վկայարան սրբոյն եւգինեայ և պատմեցի... Սիրեաց զիս որպէս զորդի իւր. և պարապեաց 'ի յիս զամենայն խորհուրդս իւր... և կեցի առ նմա զամս ութ, և ուսեալ հմուտ եղէ գրոց բազմաց, որք ոչ էին թարգմանեալ 'ի մեր լեզուս.. քանզի չիք ինչ գիրք որ առ նմա ոչ գտանէր: Ասաց Թէ եւ 'ի տրապիզոն քաղաքէ մանկութեամբ կացեալ 'ի դուռն յոհաննու զաւրավարին.. և գտեալ զվարդապետ աԹենայ իմաստասիրաց.. կացի առ նա յուսմանն ամս ոչ սակաւ և կատարեալ իմաստութեամբ դարձայ 'ի տեղիս ||:

Արևելեան կողմէն կրսկրսի ընդարձակ հրապարակին ծայրը, որ կըսուի Գասըմ Փաշա. շատ զուարճալի տեղ է. քանի մի գմբէթաւոր հին շէնքեր կան տեղ տեղ մատուռի նման. որ թէպէտ հաստատ շէնք են, բայց որոշ բանի չի կրցանք նմանցնելու: Երկու կողմէն պարտէզ ընելով հազար քայլ տեղ՝ քիչ մի նեղցած է. իսկ բուն հրապարակին երկայնութիւնը չորս հարիւր քայլ կայ. ուսկից ծովը կերևնայ: Ուր կայ Թաղ տաճկաց և գաղապ մէյտանի Ճամին. որ Սիւլէյման պէկը շիներ է կըսեն:

Արդ՝ փլադանայէն մինչև Տրապիզոն է 9. մղոն. Սինոպէն 453. իսկ Փէնէտէն 933. որ մինչև սահմանագլուխը Պէմէր, կըլլայ հազար մղոն ստամպօլէն (140): Սակայն մենք նաւավարի չափմամբ դըրինք Փէնէտէն մինչև Տրապիզոն 909. մղոն:

Գ. ՄԱՍՆ ՍԵՒ ԾՈՎՈՒ

105. ՏՐԱՊԻԶՈՆ, է հին երեւելի մայրաքաղաք փոքր Ասիայի, եւ Կապադովկիոյ սեւ ծովուն վրա շինուած. որ Փլադամնայէն ինը մղոն հեռու է: Հին ժամանակը մեծ եւ բազմամարդ ըլլալով, ամէն տեղ հռչակաւոր էր, եւ վաճառականութեամբ ծաղկած. նաեւ կռատունն էր ուխտատեղի հեթանոսաց (112): Դիոդորոս եւ այլք կը հաստատեն թէ նախ Սինոպացւոց հատուած եկան այս քաղաքը շինեցին 2536. տարի առաջ՝ Եզեկիա Թագաւորին ատենը. ինչպէս կը պատմէ նաեւ Քսենոփոն. որ գնաց Տրապիզոն: Սակայն Եւսեբիոս երեսուն տարի առաջ շինուած կըսէ, Յովաթամ Թագաւորին օրը. Հռոմայ շինութենէն հինգ տարի առաջ:

Բերդը շինուած է բլուրի վրա երկայնաձեւ քառանկիւնի, որ ծովէն սկսեալ մինչեւ Պօղթեփէ լեռը կը հասնի հիւսիսէն դէպ 'ի հարաւ: Ասոր հին բերդը սեղանի ձեւ ըլլալով ΤΡΑ΄ΠΕΖΑ ԹՐԱ՛ԲԻԶԱ, կամ ԹՐԱԲԻԶՈՆ կոչեցին: Եւ ՕՒԶԻՆԻՔ կըսէին. իսկ բնակիչները մոռնացեր են:

Տրապիզոն կոչուած հին ստակներուն մէկ կողմը կայ Ապողոնին գլուխը. մէկալ կողմը նաւի գըլուխ եւ երկաթ այս խօսքով. ΤΡΆΠΕΖΟΥΝΤΙΩΝ, այսինքն ՏՐԱՊԻԶՈՆՑՈՑ: Ասկէց յայտ է նախ՝ թէ անոր ատենը տրապիզոնցոց գլխաւոր կուռքն էր Ապողոն չաստուած. երկրորդ՝ հին ատենը շատ վաճառականութիւն եւ շատ երթեւեկութիւն կար նաւերու:

Աւանդութիւն է բնակչաց՝ թէ Յաբեթի ցեղէն Յաբէթ անուամբ մէկն եկեր առջի բերդը շիներ է. կարելի է թէ հայոց նահապետներէն, կամ Հայկայ որդիքներէն ըլլայ: Մեր Խորենացին կը պատմէ թէ Վաղարշակ կարգէ դրաւ Պոնտոս. եւ յետոյ երբոր Պոնտացիք գլուխ քաշեցին՝ Արշակ հայոց Թագաւորը գնաց նորէն առնեց, եւ սեւ Ծովուն քովա-

ծան կանգնեց յամի աշխարհի 3875։ Որ մի արձա-նին քովէն անցնելով նիզակը զարկաւ անանկ ուժով, որ նոյն քարին մէջ գամեց, որ յետոյ պտնտացիք կը պաշտէին՝ իբր գործ աստուածոց. բայց ժամանակէն ետև նորէն ապստամբեցան, և նոյն քարը ծովը ձգեցին։

Այն ժամանակը զանազան տէրութեանց տակն էր Տրապիզոն. յետոյ Միհրդատին ձեռքն որ անցաւ՝ թագաւոր ըլլալով կրկին Պոնտոսի՝ շատ ծաղկեցուց. անկէ ետև հռոմայեցւոց անցաւ։ Ներոն Սևերիանոս կայսր յաղթեց պարսից՝ Տրապիզոնին ալ տիրեց։ Ետքը Միհրդատէն ետև պոնտոսի թագաւորները այնչափ չէին կրնար իշխել Տրապիզոնի. որովհետև հռոմայեցիք տարածիլեր էին այս կողմերս։

Զոսիմոս կը պատմէ թէ Վաղերիանոսի ատենը յամի տեառն 255. Գոթացիներն եկան պաշարեցին Տրապիզոն. որ թէպէտ ի պահապաններէն տասը հա-զար զօրք օգնութիւն եկան. բայց իրենք անհոգ կե-նալով՝ թշնամիները գիշերանց բերդը մտան շատ մարդ ջարդեցին, և մեծագործ կռատունը լեցուն գանձով կողոպտեցին։ Մաքսիմիանոսի ատենն, որ տիրեց Կապադովկիոյ և Տրապիզոնի, շատ նահատակ-ներ եղան այս կողմերը Լուսիաս դատաւորին ձե-ռամբն. որ բռնեց Եւգենէոս եղբայրին իր ընկերներ-րովը շատ տանջելէն ետև գլխատեց Տրապիզոնի մէջ (121)։ Ադրիանոս կայսր շատ բան շինեց Տրա-պիզոնի մէջ (120)։ Արրիանոս տեսաւ հոն Ադրիա-նոսի արձանը. իրեն ալ ձերմակ քարէ արձան շինել տուաւ թագաւորին համար հանդերձ մակագրութ.։ Փլաւիոս Յուլիոս Կոստանդին՝ թագաւոր կոչեցաւ պոնտոսի, և Տրապիզոնի մէջ կուսանաց վանք շինել տուաւ, որ Սոֆէֆլոսն կը կոչուէր. հիմա ճամի է։

107. Իսկ Վաղենտիանոսի ատենը՝ Տրապիզոնի իշ-խաններն անցան պարսից տէրութեան տակն, և շա-տը պարսիկ եղան։ ☞ Յուստինիանոսի ատենը՝ Բղա-դիոս պէկը Տրապիզոնի՝ գնաց Սամմօլ քրիստոնեայ եղաւ, պատրիարգին թոռը կին առաւ, և թագա-ւոր պսակուեցաւ Լազիստանու։

108. Այս կայսր Յուստինիանոս շատ բան շինեց, նորոգելով Տրապիզոնի պարիսպը, ջրանցք շինեց, բերդին մէջ ջուր բերել տալու Պօղլիէպօյին կողմէն, և Պօղպախանայի դրնէն դուրս հանեց ջուրը։

109. Ժ. Յովհաննէս Կոմնենոս Պէրֆիւռօժէն կայսեր ատենը Սպարտաս ապստամբելով յամի տեառն 1120 Տրապիզոն անկախ եղաւ. մինչև որ Անծաւ Տրապիզոնցին Թագաւոր եղաւ լազիստանու։ Անկէ ետև Տրապիզոն ինքնագլուխ Թագաւոր կը նստէր։

110. Ալէքսիոս Կոմնենոս յամի տեառն 1204. Փռէնկներուն Ստամպօլ առնելէն ետև կայսր կոչուեցաւ Տրապիզոնի։ Եղաւ որ վիշապ մի զարկաւ կը-տեն իր ձեռքով, յիշատակը մնալու համար պղնձէ վի-շապ շինել տալու Օրթահիսարի աղբիւրին վրադրաւ, որ մինչև հիմա կայ և տեսանք։ Իսկ 1260ին Միքայէլ Պալէօլօկ կայսր՝ երբոր միացաւ լատինացոց հետ՝ Յովհաննէս Կոմնենոս գլուխ քաշելով՝ ինքնակալ կայսր կոչեց զինքն Տրապիզոնի։

Ասոնք որդւոց որդի նստան մինչև Յովհաննէս կայսր։ Ասոր օրը Սուլթան Ճաթիր պէկը Տրապիզոնի վրան եկաւ. յետոյ հաշտութիւն ըրին՝ տարւէ տարի երկու հազար ոսկի տուրք տալով Օսմանցոց. զի անոնց ատենը Ստամպօլ առնըված էր։ Այս Թագաւոր մեռաւ 1456ին։

111. Դաւիթ պզտի եղբայրը տեղը նստաւ չորս տարի։ Բայց Սուլթան Մէհէմմէտ 1461ին եկաւ երեսունևերկու օր պաշարեց առաւ Տրապիզոն. և բռնեց Դաւիթ Թագաւորն իր ընտանեօքն Ստամպօլ տարաւ. յետոյ դուրս ղրկեց մեռցուց. և այսպէս վերցաւ Կոմնենոսներուն Թագաւորութիւնը 257 տարի տևելէն ետև։ Ասոնց ատենը շատ երևելի քաղաք էր երևելի մարդիկներով. անկէ ետև քանի գնաց անշքացաւ ամենայն կողմանց, և հին աղնուութիւնը վերցաւ։

112. Հին ատենը տասն հազար զօրքով Տրապիզոն գնաց Քսենոփոն, և անկէ մի կեցաւ Բիքսիդէս գե-տին քով դաշ ընելու համար Դիոսի և Հերակլեսի. ուր խաղեր ալ կը խաղային յամի աշխարհի 3615։

Արրիանոս հոն տեսեր էր Քսենոփոնին արձանը, և տաճարը կուոց (134)։

Հին բերդը կրկնապարիսպ էր, ինչպէս կը պատմէ Զոսիմոս. հիմակուան բերդն անոր տեղը շիներ են, ըստ որում քարերէն և սիւներէն յայտնի է։ Այնչափ զօրաւոր էր որ մերձակայ ազգերը իրենց հարստութիւնը հոն կը պահէին։ Շատ տեղ ապառաժի վրայ շինուած է պարիսպը, և խրամները տեղ տեղ լայն և խոր են։ Բերդին շրջապատը մէկ ժամէն աւելի կը քշէ։

Երեք կը բաժնուի բերդը. Աշաղի հիսար, Օրթա հիսար, Գուլլէ. ուր կը պահեն զէնքերը. առաջ հոն էր կայսերաց դահը. ետքը միջնաբերդը փոխեցին. ինչպէս տեսանք դահին տեղը։

113. Գուլլէ կամ Միջնաբերդ, է վերի գլուխը և ծայր բերդին, որ աւելի բարձր ըլլալով կըսուի Եօգարի հիսար. և Պօզթեփէ լեռան արեւմտեան կողմէն կըսկըսի կը հասնի մինչև Միջնաբերդը. առաջին է ընդարձակ դաշտ, որ կըսուի Գուլլէպօշի։ Հոս բերդին ծայրը նեղ կը վերջանայ. պատերը լայն են. և զարմանալի բազմապատիկ ճամբաներով քարոտ մէջ պարիսպներ են. և միջոցները խրամներ կան, ընդարձակ տեղ. ուր պարիսպներէն 'ի զատ ուրիշ բնակարան չի կայ. կերեւնայ թէ ամրութեան համար այսպէս շիներ են։

Այս բազմապատիկ խրամներուն մէջ փորած տեսանք. զի Եւրոպացիք տէրութեան հրամանաւ գանձ գտնելու համար փորեր են. բայց պարապ ելեր են։ Անկէ ետև կըսկըսի բնակութիւնը Գուլլէին. բայց վարը ներքնատան պէս զարհուրելի քարաշէն տեղեր կան, ինչպէս տեսանք. որով կերեւնայ այս բերդին հնութիւնը. տեղ տեղ ալ պարսպին մէջ խորանի նման բաներ կան. գրեթէ ամէն տան մէջ հին առենէն մնացած շէնքեր, և պահարանի պէս տեղեր կան. մէկը աւրած, մէկը դեռ կան։ Վերի ծայրն աւելի բարձր ըլլալով կրկին սանդուխով վեր ելանք. ուր է մեծ աշտարակ քառանկիւնի. ուսկից կընետեն թնդանօթ. և առջևէն կանցնի Պօզղուն տերէ։ Սա

հապատները նեքընատանց մէջ կը խղդեն. և գլուխ-նին բերդին դրան առաջը կը դնեն. ուր որ տեղ կայ շինած։

Այս բերդին մէջ քիչ բնակութիւն կայ. և շատը պահապան են բերդին, որ կըսվին Պէշլի. զի Սուլ. Մէհէմմէտին ժամանակէն դրված են, և օրն հինգ-սաակ կառնուն. անոր համար ըսվեցան Պէշլի. որոնք Խորպէլէթէն մինչև Խասըմ ամէն գիշեր պա-րիսպներուն վրա պտըտելով կը կանչեն Եա՛ հաֆըզ ալ-լահ. այսինքն Աստուած մէկ է։ Ասոնք առաջ շատ ազատութիւն ունէին և շատվոր էին. հիմա այնչափ չեն։ Ծերերը կը պատմեն թէ առաջ Սպագայի կողմէն գիշերանց աւազակներ կուգան կը կոխեն ե-ղեր քաղաքը՝ խածապա նաւերով. Պէշլիներն իմա-ցում տալով՝ քաղաքացիք բերդը կը փախչէին կազա-տէին (139)։ Դուռն է Պոռուլլի համամի, նաև Իմարէթ հա-մամի իմարէթին կողմը. որ է շատ երևելի հին շէնք ընդարձակ՝ զանազան խուցերով զատված, և մեծա-մեծ սիւներով և քարերով շինած՝ հանդերձ մեծ գմբէթով. կը կարծըվի թէ յունաց առենէն մնա-ցած է, և այլազգը ձևը փոխեր բաղնիք շիներ է։ Այս բերդին դրսի դուռն է հարաւային կողմն, որ կիջնի Պուզզուն տէրէն (118)։

114. Ո՛րտահիսար, այսինքն միջնաբերդ, որ անմի-ջապէս Ներքնաբերդէն կըսկըսի. ուօկից պարսպով և դռնով զատ է. երկու բերդին մէջ տեղն ըլլալով դիրքը դուր է, և կը հասնի մինչև վարի բերդը. բայց կըկին պարսպով, և երկաթ դռներով զատ է. իսկ արևմտեան կողմն է Օ՛ազանոս գաբուսի. և ա-րևելեան կողմը՝ Բապախանա գաբուսի։ Միջնա-բերդին մէջ կան բաղնիքներ, երևելի պալատներ, և շատ տներ խանութներ, նաև ճամիներ. կան որ քաղաքն առած ատենը շիներ են. կան ալ որ եկե-ղեցի էին առաջ. ինչպէս է Ո՛րտահիսար ճամին, Կեավուր համամին և այլն։ Արևելեան կողմն է հին պալատը Փաշային. որ է ընդարձակ և բարեձև, չորս կողմն են խուցերը. սակայն հնութիւն չի կայ։ Իսկ հիմակուան պալատն է մեծաշէն՝ միջնաբերդին.

դիմացը կեցնի Խամբէթի դրանը մեծ՝ վարի բերդին ծայրը. որ էր պալատ բերդակալ իշխանին։

Որդանէսար ճամփէ, մէջ տեղն է բերդին փառաւոր և մեծագործ շէնք. որ էր յունաց եկեղեցի. և կըսուէր ΧΡΥΣΟΧΕΦΑΛΟΣ ΠΑΝΑΓΙΑ այսինքն ՈՍԿԵԳԼՈՒԽ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ. կերևնայ թէ Յուստինիանոսի ատենը շինուած է, և Ալէքսիոս Կոմնենոսը նորոգեր է. թէպէտ յիշատակարանը չի գտանք։ Տաճարին ընդհանուրը ձևն է աղուոր և մեծաշէն. աւագ խորանին տեղն է ընդարձակ և պայծառ՝ բոլոր մէրմէր քարերով պատած պատերը և յատակը. Հարաւային կողմն է թագաւորին գահն աւանդատան կողմը. իսկ աւանդատունն է կամարաշէն գեղեցիկ հարաւային կողմը. որուն մօտն է Միհրաբն փառաւոր։ Մերնատունն է քառաշէն մեծ. վերնայարկին չորս կողմը կամարներով սրահներ ձևացած են, և դրներով զատուած են։ Եկեղեցւոյ մէջ տեղն է բարձր գմբէթ զարմանալի. և բոլորտիքը վանդակաւոր վերնատուն բոլորելով վերնայարկէն ճամբայ ունի ելլելու. որ է մեծ կաթուղիկէ, և խեր երրորդ յարկ տաճարին. ուր վարպետութեամբ շինուած լուսարաններ կան շրջանակին, որ կը լուսաւորեն վերէն վար։

Այս եկեղեցի խեր իրեք մասն կը բաժնուի. առաջի մասն է խորանին տեղը հանդերձ աւանդատնով և դահով. ուր կան լուսարաններ արևելեան կողմն. Հիւսիսային կողմն է քառաշէն տեղ սանդուղքն երկրորդ յարկն ելլելու։ Անկէ ետև կը յաջորդէ աւանդատան դրնէն բուն եկեղեցւոյ մէջն լայն և ընդարձակ. որուն վրայ է մեծ գմբէթը. և հիւսիսային կողմն է մեծ դուռն. ներսի երկու կողմը երկու մեծամեծ սիւներ կան հին մէրմէր. կերևնայ թէ կռատանը սիւներէն են. այս դրնէն դուրսն է գեղեցիկ գաւիթը։ Իսկ վերջի մասն է՝ արևմտեան կողմն տաճարին, և վրան է վերնատուն. որ է նոյն շարունակութիւն տաճարին ամփոփատակ. ուր է արևմտեան դուռը, ասկից լաւ կերևնայ բոլոր ընդարձակութիւն տաճարին. որուն երկայնութիւնը հարիւր յիսուն ոտնաչափ կայ, և լայնութիւնը յիսունէն աւելի է։

Մերնատունն է կանանց տեղ ընդարձակ և լայն․ ունկից երկրորդ յարկը կերթայ․ և երկու կողմէն եկեղեցնայ մէջ կը նայի․ և անկէ երրորդ յարկը կելլէ։ Այնպէս մակաբերեցինք, թէ այս երկրորդ յարկը մեծամեծ տիկիններու տեղ է թագաւորական զարմէ․ ուր դրներով զատ են իրարմէ․ իսկ բուն վերնատունը ամէն հասարակ կանանց տեղն էր։

Աւագ խորանին կամարը բարձր պատին վրայ տեսանք դրսէն աւետման պատկեր Մ՝օզայիք մանր գունաւոր քարերով շինած ձախակողմն խորանին․ աջակողմն ալ կար՝ խանգարեր է, բայց տեղը կերեւնայ։ Եկեղեցնայ առջին է ընդարձակ հրապարակ քարայատակ․ ուր կան բոլորտիքը խանութք, սուսամարան, աղբիւր, շատրուան, և ջրհոր բարեջուր՝ հին ատեններէն մնացած։ Աղբիւրն է արեւելեան կողմն անձև շինած․ որուն վրան է արձանէ մկշառն, որ Աղէքսիոս կայսր դրեր է (110)։ Իսկ ջրհորն է հիւսիսային կողմն․ որուն առաջը տեսանք միակտուր աւազան․ որ էր գլուխ հին մեծ յոնիական սեան․ որ հին շէնքերէն մնացած է, և տակէն մէջը փորեր հոն դրեր են։

Արեւելեան կողմն հրապարակին՝ տեսանք բաւակուռ հին շէնք մէրմէրէ՝ սիւներու վրայ շինած․ նոյնպէս ճակատը մէրմէրէ խաչազարդ․ շէնքին կէսը հոն տան մէջ մնացեր է․․ կերեւնայ թէ առաջ բոլոր հրապարակ էր մինչեւ փողոցը, և ժամատունը միւս կողմն էր։ Իսկ արեւմտեան մասը շէնքին՝ հրապարակին վրայ է․ ուր գտան եւքի ատեններս մարմին նահատակի․ Թուի թէ հոն էր գերեզման մարտիրոսաց, և այն մարմին Նուգինեանցը պիտի ըլլայ (118)։ Ինչպէս կայ նաև արեւելեան կողմն առաջինին՝ Սողոմոնի դրան մօտ կամարաշէն մատուռ, ուր կերեւնայ դագաղ․ կըսեն թէ մէջը կայ նահատակի մարմին․ բայց այլազգը պատուով կը պահէ թէ այս, և թէ սիւնազարդ շէնքին մէջինը։ Ուր դրեր են դագաղ, և վրան պըլազդերէն գիր․ որ հրապարակին մէջէն կարդացինք այսպէս․ ՍՈՒԼԴԱՆ ՂԱԶԻ ՄՈՒՀԱՄՄԷՏ ԽԱՆ ԻՊՆԻ ՄԻՒՐԱՏ ԽԱՆ ՀԻՃ․ 865․ Որ է Սուլ․ Մէհէմ

մէտ. և այս գրվածը քաղաքն առած ատենը դրեր են 1461 ին:

Միջնաբերդը ներքնաբերդէն շատ մեծ է. և ձևն է իբր քառանկիւնի. ուր մեծամեծ տներուն մէջ կան մատուռներ, և քարաշէն տեղեր: Զարմանալի շէնք է բաղնիքն, որուն մեծ մասը գետնին տակն է. կերևնայ, թէ հին ատենի բան է. այլազգը զատեր երկու բաղնիք ըրեր է. անոր համար կըսվի Չիֆթէ համամ: Հոս մօտ է հիւսիսային դուռը միջնաբերդին, ուսկից կերթայ վարի բերդը: Թէպէտ ամէն դռները բերդին՝ ջուխտ են և աշտարակներով պատսպարած են. նաև պարիսպները բարձր ըլլալով՝ աշտարակ ձևացած են: Զաղանոսի դրան մօտը բանտ ըլլալուն համար ըսվեցաւ Զնտան գափուսի. կերևնայ թէ առաջ տաճարին հրապարակը մինչև հոս կը հասնէր, որուն դուրսն է խոր խրամ: Հոս այս դռնէն կըսկըսի մեծ կամուրջը և կը հասնի մինչև Իմարէթին դուռը, և Ալէքսիոսին աշտարակը:

Այս արևելեան և արևմտեան երկու խրամները շատ ամրութիւն տվեր են բերդին. ուստի արևմտեան կամուրջն իբր պարիսպ եղած է վարի բերդին. ուր միայն վարը դրան պէս միջոց կայ, ուսկից կանցնի գետակը: Կըսվի թէ քաղաքն այս կողմէն առնըված է. և մեծ պատերազմն Գաւագ մէյտանին մէջ եղած է. ուստի այս պարսպին դուրսը գերեզմաննոց է այլազգաց: Հոս կը պատերազմէր նաև երևելի փաշան Սուլ. Մէհէմմէտին՝ Զաղանոս անուամբ. որուն համար այս դուռը կոչվեցաւ Զաղանոս գափուսի (118):

115. Իսկ արևելեան դուռը միջնաբերդին նոյնպէս կրկին ըլլալով՝ դրսի դրանը վրան շինած է պահապանի տեղ. և նոյն դրանը շէմը դրած է հին շէնքերէն եկած սիւն մի, որ մաշած է. Ճակատը կերևնայ յիշատակարանի տեղ. և այս երկու դրան միջոցը բարձր պարիսպներով ամրցած է: Ներսի դրանը քովն է բարձր կամար՝ հանդերձ դրան վրայով. այս կամարներուն վրա շինած էր առաջ փառաւոր եկեղեցի յունաց, ուսկից ծով ցամաք կերևնայ: Խորանին տեղը դեռ կեցած է արևելեան կողմն. և քարա-

չէն սանդուխով վեր կելլեն . ունի վարը բակ ։

Այս աքանչելի քարաշէն եկեղեցի՝ զանազան խու-ցեր բաժնելով՝ հիմա դատաստանարան ըրեր են . ուր կը նստին այլազգ կարգադրողներ ։ Դրապախանայի այս ներսի դրանը ճակատն է դրսի կողմանէ՝ յիշա-տակարանը Յուստինիանոսի կայսեր . որ Դուռնըֆօր վերջի տողը չի կրցաւ կարդալու . նաև տեղ տեղ ալ լաւ չի հանելով սխալ տպեց , անոր համար չի Թարգ-մանեց ։ Արդ ահա ամբողջ յիշատակարանը հանդերձ Թարգմանութեամբ . որ է հազար իրեքհարիւր եր-սունըվեց տարուան գիր՝ ճերմակ քարի վրա փորած ։

ΕΝ ΟΝΟΜΑΤΙ ΤΟΥ ΔΕΣΠΟΤΟΥ ΗΜΩΝ
ΙΗΣΟΥ ΧΡΙΣΤΟΥ ΘΕΟΥ ΗΜΩΝ , ΑΥΤΟΚΡΑ
ΤΩΡ ΚΑΙΣΑΡ ΦΛΑΒΙΟΣ ΙΟΥΣΤΙΝΙΑΝΟΣ ΑΛΑ
ΜΑΝΙΚΟΣ ΓΟΤΘΙΚΟΣ ΦΡΑΓΚΙΚΟΣ ΓΕΡ
ΜΑΝΙΚΟΣ ΑΤΤΙΚΟΣ ΑΛΑΝΙΚΟΣ ΟΥΑΝ
ΔΑΛΙΚΟΣ ΑΦΡΙΚΟΣ ΕΥΣΕΒΗΣ ΕΥΤΥ
ΧΗΣ ΕΝΔΟΞΟΣ ΝΙΚΗΤΗΣ ΤΡΟΠΑΙ
ΟΥΧΟΣ ΑΕΙΣΕΒΑΣΤΟΣ ΑΥΓΟΥΣΤΟΣ
ΑΝΑΝΕΩΣΕΝ ΕΝ ΦΙΛΟΤΙΜΙΑ ΤΑ ΔΗ
ΜΟΣΙΑ ΚΤΙΣΜΑΤΑ ΤΗΣ ΠΟΛΕΩΣ
ΣΠΟΥΔΗ ΚΑΙ ΕΠΙΜΕΛΕΙΑ ΟΥΡΑΝΙΟΥ
ΤΟΥ ΘΕΟΦΙΛΕΣΤΑΤΟΥ ΕΠΙΣΚΟΠΟΥ
ΙΝΔ. Γ. ΕΤΟΥΣ ΤΠΓ.

ՅԱՆՈՒՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍ-ՏՈՒԾՈՅ ՄԵՐՈՅ, ԻՆՔՆԱԿԱԼ ԿԱՅՍՐ ՓԼԱՒԻՈՍ ՅՈՒՍ-ՏԻՆԻԱՆՈՍ ԱԼԱՄԱՆԱԿԱՆ, ԳԹԱԿԱՆ, ՓՐԱՆԿԱԿԱՆ, ԳԵՐՄԱՆԱԿԱՆ, ԱՏՏԻԿԵԱՆ, ԱԼԱՆԱԿԱՆ, ՎԱՆԴԱԼԱ-ԿԱՆ, ԱՓՐԻԿԵԱՆ, ԲԱՐԵՊԱՇՏ, ԲԱՐԵԲԱԽՏ, ՓԱՌԱ-ՒՈՐ, ՅԱՂԹՈՂ, ՅԱՂԹԱՆԱԿՈՂ, ՄՇՏԱՍԵԲԱՍՏՈՍ, ՕԳՈՍՏՈՍ, ՆՈՐՈԳԵԱՑ ՊԱՏՈՒԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ ԶՀՐԱ-ՊԱՐԱԿԱԿԱՆ ՇԻՆՈՒԱԾՍ ՔԱՂԱՔԻՍ ՋԱՆԻՒՔ ԵՒ ՎԵ-ՐԱԿԱՑՈՒԹԵԱՄԲ ՈՒՐԱՆԻՈՍԻ ԱՍՏՈՒԱԾԱՍԷՐ Ե-ՊԻՍԿՈՊՈՍԻ. 'Ի Գ. ԸՆԴԻԿՏԻՈՆԻ. ՅԱՄԻ 483։

116. Վարի բերդը միջնաբերդէն պատուած է հաստատ պարիսպներով, և կրկին երկաթ դռներով. Նմանապէս միջնաբերդը ներքնաբերդէն պատուած է երկաթ դռնով. դրանը մօտ կայ կամար քարաշէն, որ կըսուի Պ.եկեր ամէն: Ասոր՝ վարի բերդը միջնաբերդին միանալու տեղը նեղցած է. իսկ Ս. Ազատեան դռնէն մինչև արևմտեան պարիսպն է լայնութիւն վարի բերդին. ապա միջնաբերդը արևմտեան կողմէն վարի բերդին մէջ մտած է. և դրան Թաղը կըսուի Տէրէ Ծակալլըքէ, որ կը հասնի ծովը:

Ծովուն կողմէն վարի բերդին լայնութիւնը երեք հարիւր քայլ չափեցինք. որ է հիւսիսային կողմը. պարսպին լայնութիւնը տասներկու քայլէն աւելի է տեղ տեղ. ուր կրկին քարաշէն սանդուխով վեր ե-լանք: Արևելեան ծայրը տեսանք պարսպին մէջ փոք-րիկ մատուռ. ուր հինգ պատերազմական բաներ կը գտնէն: Այս պարիսպը կը շարունակի բերդէն դուրս երկու կողմէն, և կը հասնի ծովը. և անկէ կը շարունակէ նաւահանգստին շէնքը ծովուն մէջ մղոնի չափ երկու կողմէն: Այս ահագին պարիսպը պատուած ըլլալով բերդին պատէն նեղ ճամբայ բաց-ուած է, և կըսուի Պարճ. որ պարսկերէն բուրգ կամ աշտարակ ըսել է. ասկէց կանչուի Մ՝ղօղէն պատուար-ձանը: Հոս տակը կայ մեծ աշտարակ, որ կործանած է. ինչպէս կերևնան աւերակները, և ահագին հին արևելեան դին:

Այնպէս միւս ծայրի պարիսպն ալ պատուած է բեր-դէն, և անանկ ծուռ հաստատ կեցած է. գլխ քարերն անանկ միացեր են իրարու հետ, որ իբր միակտուր եղած են: Այս անձևական կերևցնէ, թէ աւրիչ շէնք ալ կայ եղեր պարսպին ծայրը. ուր դրան կամ պատուհանի կամար կերևնայ բարձրէն. որուն մօտ է Ս. Թովմայի դուռը: Այս միջոցն է սև աւազուտ ընդարձակ՝ բերդին առաջը. ուր ձկներ նաւ կը քա-շէն. ասոր կանչեն Իշիկլէտօզ գետակը. և հոն է մոլորին դուռը. և Թնդանօթներ կան դրանն ա-ռաջը ծովուն դէմ հանդերձ պատանէշներով:

Վարի բերդը միջնաբերդէն շատ ընդարձակ է.

ուր կան շատ տներ, շուկաներ, խան, աղբիւրներ,
Ճամի, ուսումնարան, բաղնիք. նաև տներուն մէջ
մատուռներ, և այլն: Ան ունի չորս դուռ. մէկը ա-
րևելքէն, մէկը արևմուտքէն, մէկը հիւսիսէն, մէ-
կալը հարաւէն. բայց հարաւայինն է դուռ միջնա-
բերդին երթալու. իսկ արևմտեան դրան կողմն է
ներքնարանն հնաշէն կամարակապ, և կրկնայարկ.
վրան քարաշէն՝ խոր մանք է. տակն է կամարաշէն
տեղ, երկու կողմէն հին մերմեր սիւներու վրայ շի-
նած հաստատուն. որ շատ բարձր պիտի ըլլայ. վասն
զի մէջը հող լեցուցած է մինչև վերնախարիսխը սիւ-
ներուն, ուստի և հաւասար է գետնին. զի խորը
շինած էր շէնքը, որ շատ հին կերևնայ. կարելի
է, թէ հին ժամանակը քուրմերու տեղ էր., յետոյ
ուրիշ բան շիներ են յունաց ժամանակը. զի ոչոչ բա-
նի չի կրցանք նմանցնելու: Դրսի պատին վրայ տե-
սանք հին գիր յունարէն, շատ տեղն աւրած. որ է
513 տարւան յիշատակարան յայն կայսերաց: Այս
շէնքին մօտ դէպ 'ի հիւսիս կայ քառանկիւնի աւե-
րակ հանդերձ հրապարակաւ. որ կըսեն Մէյտան ա-
րոտի:

Այս բերդին վերի ծայրն է հիմնկեան գերեզմա-
նիր պալատը փաշային. որուն մէկ կողմէն կանգնի
գետակը, մէկալ կողմն է արևմտեան պարիսպը բեր-
դին. իսկ հարաւային կողմն է Իսմայէլի դուռը.
ուր կան մեծամեծ ամբարտակներ, և աշտարակ, որ
ամրութեան համար շինած են յունաց ժամանակը.
նաև վրան ելլելու ճամբայ կայ: Հոն մօտը տան մէջ
տեսանք աւերակներ, և քայքայած տեղեր. որ է ներ-
սի կողմն արևմտեան պարսպին. ուր բարձր ըլլալով
բոլոր ծովը տեսնի է, և միջնաբերդին բարձրու-
թեանը կը հաւասարի. ուսկից կըսկըսի մեծ կամուր-
ջը Օղանոսի դրան, և կը հասնի մինչև բերդին
դուռը:

117. Ընդհանուր ձևը Տրապիզոնի բերդին կը նը-
մանի սիրամարգի. զի վարի բերդն աւելի ընդարձակ
ըլլալով պոչին նման բացված է, և կը հասնի միջնա-
բերդը. որ արևմտեան կողմէն քիչ մը ներս քաշվե.

լով մարմինոյն կը նմանի. իսկ ներքնաբերդն է նման պարանոցին. որ շեղ կը վերջանայ աշտարակն, որ է իբր գլուխ։ Այս դիրքը բերդին կերևցնէ, թէ հին շէնք է, և տարածեալ ըլլալով մեծագործ կերևնայ՝ գոլով երկու կողմէն խրամներ և հրապարակներ։ Այլազգները Խռուսէէզին բառը չգիտնալով Խռոսոր-պօղոն ստուգաբանեցին բերդին անունը՝ յունաց զօրքն ուրբվելուն համար։

118. Բերդին ներսի դռներն իրեք են. իսկ դըրսինները վեց, կամ վեց ջուխտ են. որ ծովէն սկըսեալ առաջին դուռն է Մուղղ գափուսի, որ է հիւսիսակողմն ծովահայեաց. երկրորդ՝ Սեմեղա գափուսի՝ արևմտեան կողմը. երրորդ՝ Օսմանու, կամ Օքսման գափուսի՝ նոյնպէս արևմտեան կողմն. չորրորդ՝ Պօսղաք գափուսի՝ հարաւային կողմը. ուր ներքնաբերդը մըտնելու ուրիշ երկաթ դուռ կայ. դուրսն ալ լեցված փոքր դուռ կայ. որ բերդն առնըված ատենը անեծքով փակեր են՝ կըսեն. հինգերորդ՝ Պաղաղխանա գափուսի՝ արևելեան կողմն. վեցերորդ՝ Փաշար կամ Մոժխանէ գափուսի՝ նոյնպէս արևելեան կողմն ծովուն մօտ. դրանն առաջը քարաշէն կամուրջ կայ, տակէն գետակը կանցնի, և վրան խանութներ կան։

Եօթներորդ դուռ կը համարի Խմպէլի գափուսի հարաւային կողմը վարի բերդին. որ է երկրորդ դուռ Օսմանոսին. քովը կայ մեծ քառակուսի աշտարակ, և բարձր են պարիսպները. այս աշտարակին դուրսն հարաւային կողմը կայ յունարէն յիշատակարան. որ բարձր ըլլալով այսչափ կրցանք կարդալ. ՑՍ ԱՀՏԱՐԱԿ ԱԼԷՔՍԻՈՍ ԿՈՄՆԵՆՈՍ ՇԻՆԵՑ։ Ասկէց մինչև Օսմանոսի դուռն է ընդարձակ և խոր խրամ. վրան բարձր և մեծ կամուրջ. որ երկու կողմէն մինչև կէսը քարաշէն է շատ հաստատ՝ իսկ մէջ տեղը փայտով շինած. որ պատերազմի ժամանակ կը վերցընեն եղեր. ուստի այս կողմէն ապահով կը մնար բերդը. զի պարիսպը ոչ միայն է թանձր և հաստատ, այլև շատ բարձր է հող՝ պատճառաւ խրամին։ Այս կամուրջին տակէն կանցնի փոքր գետ, որ տեղացիք Ուշկելէպօղ կը կոչեն։

Այս խրամին համեմատ լայն և խորունկ խրամ կայ Պտապախանայի դրան առջին. վրան նոյնպէս մեծ և բարձր կամուրջ կայ հաստատ քարաշէն, մէջ տե-ղն փայտաշէն. վրայէն կանցնի ջուր Յուստինիանոսի ջրանցքէն (108), և տակէն գետակը Պռղգուն տերէ. ուր կը բանին խաղախորդք (Պապախ)։ Հոս մեծ տեղը տան մէջ մատուռ ըլլալով՝ ժամանակով մէջը գտան մարմինք սրբոց կըսեն. և իմացվելով այլազգն առաւ այլևայլ տեղեր դրաւ կը պատուէ (114)։ Կը կարծըվի, թէ են Տրապիզոնի նահատակ-ներուն մարմինը. Եւգինէոսի, Մակարիոսի, Վա-ղերիոսի, Կանդիտոսի, և Ակիւղասայ։

Այս անուանի բերդին հին ատենի նշանն է նաւի երկաթ. թուի թէ հին բնակիչները քարաշէն նա-ւահանգիստը շինելէն ետև այս նշանը դրին՝ շատ նաւեր հոն յաճախելուն համար (120). ուստի թէ՛ բերդը և թէ բոլոր քաղաքը հին ատենէն 'ի վեր շատ փոփոխութիւններ տեսեր է. և շատ թագաւորներ շէնքեր շիներ և նորոգութիւններ ըրեր են. անոր համար մինչև ցայժմ հաստատուն է բերդը. և տները են ամուր քարաշէն, թէպէտ շատ բարձր չեն, մա-նաւանդ քրիստոնէից. որոնք բերդին մէջ տուն չեն կրնար գնել և բնակիլ։

119. Իմարէթ, արևմտեան կողմն է բերդին՝ Պուլ-ըէին դիմացը, և Օղանասի երկրորդ դրանը մօտ. որ նոյն տեղին համար ըսվեցաւ Իմարէթ գաբուսի։ Ուր կայ բլուր և վրան շինած է Իմարէթն, որ կը նշա-նակէ վանատուն, աղքատանոց, և ուսումնարան։ Այս շինուած պարսպապատ՝ ունի երկու դուռ. մէջ տեղն է ջամին փառաւոր և մեծաշէն գմբէթաւոր. մէջը պայծառ և լուսաւոր. հիւսիսային կողմն է դու-ռը և գաւիթը գեղեցիկ մէրմէռաշէն՝ վրան գիր այլազգերէն գրած հիճ. 952. որ նորոգութեան թուականը պիտի ըլլայ։

Առաջն է ընդարձակ հրապարակ մէջը շատ-րուան. իսկ չորս բոլորը խուցեր շինած են ուսանողաց համար. հարաւային կողմն է գերեզմանատուն. և արևելեան կողմն է մատուռն. որ է առանձին Թիւրբ-

պէ. ուր կայ Նաւլուղ Սուլ. Մելիտին մօրը գերեզմանը. դրանը վրա կարդացինք այլազգերէն յիշատակարանը գրեալ հիճ. 911։ Նոր անուամբ այս ճամին կըսուի Խոյաբանէկ. ուր կար խոհարան և փուռն, առաջ օրն երկու անգամ կերակուր և ապուր կեփէր աղքատներուն, և մէտրէսէն կարդացող տղոցն համար, հիմա չի կայ. որուն Մուխթեսէմլին կը դնէ Կուրզլար աղասին։ Մեզի երևցաւ թէ այս տեղս առաջ էր վանք, թէպէտ յիշատակը չի գտանք. բայց յոյնք պատմեցին, թէ առաջ էր եկեղեցի որոյն Յովհաննու, յետոյ ճամի ըրին. և իրեք հարիւր քսանըչորս տարի առաջ վանատուն եղաւ Սուլդանին հօգոյն համար։ Պարսպէն դուրս հարաւային և արևմտեան կողմն է բոլոր պարտէզ, որ կը հասնի մինչև Կապազ մէյտան, և մինչև Թզանոցն, որ կըսուի Խնձիրլիք, և Կապանփեշճեան մահալլէսի։

120. Հին նաւահանգիստն է հիւսիսակողմն բերդին. որ հիմերը շատ մեծագործ կը պատմեն, ինչպէս որ կերևնայ. զի խոր ծովուն մէջ սարսափելի հիմ դրեր են, և այնչափ տեղ ծովը ներս են առեր իբր լիճ. որուն լայնութիւնն ըստ լայնութեան բերդին իրեք հարիւր քայլէն աւելի է. աւերակները պարի նման իրեք կողմէն ծովուն մէջ կերևնան. բերանն է արևելեան կողմն՝ բաւական լայն նաւ մտնելու չափ. երկայնութիւնը մղոն մի կայ. մէջը յիսունէն աւելի նաւ կրնար կենալ ապահովապէս։ Շատ երևելի գործք է. կերևնայ թէ հին բնակիչներն նոր շինէր ահագին աշխատանքով և գանձով Քերսոնէսէն շատ առաջ։

Արրիանոս կը պատմէ, թէ ես աղաչեցի Ադրիանոս կայսեր, որ շինեց այս նաւահանգիստը մեծամեծ ամբարտակներով. բայց կերևնայ թէ Ադրիանոս նորոգեց. որով շատ ծաղկած էր վաճառականութիւնը Տրապիզոնի. ինչպէս յայտ է հին սատակներէն (105)։ Արևմտեան կողմն՝ ծովուն մէջ կայ փոքր կղզի ջրոյն հաւասար. որուն վրա նշան կը դնեն նաւերու համար. իսկ արևելեան կողմն մինչև Չէօմլէկճի նաւահանգիստը տեղ տեղ բնական ապառաժներ կան ծովեզերքը։

121. Սուրբ Իրինէոսի եկեղեցին արեւելեան կողմն է ներքնաբերդին դիմացը՝ և Պօղթէփէ լեռան արեւմտեան ծայրը։ Այս եկեղեցին շիներ է Յուստինիանոս կայսրն Իրինէոս մարտիրոսին անուամբն, ինչպէս կը պատմեն հիները. որ է մեծաշէն և ընդարձակ՝ վրան բարձր կաթուղիկէով. ուր կար վկայարան, և վանատուն. ինչպէս տեսանք քակված տեղերը, և դրան տեղը. թէպէտ քովերը տներ շիներ են։ Ասոր կար ուսումնարան Տիւքիկոս փիլիսոփային, և հոն դտաւ զինքը Անանիա շիրակացին. ինչպէս կը պատմէ (104)։ Աստի առաջ երևելի տեղ էր հոս. բայց Սուլ. Մէհէմմէտ քաղաքն առնելէն ետև առջի ուրբաթն հոն վճարեց Նամազը, և անուանեց Այէնի ճիւմաղա ճամիսի. և նոյն թաղն ալ կոչվեցաւ Այէնի ճիւմաղա մահալլէսի։ Հոս մօտ է՝ երբ Պուղդուն տէրէին վրա՝ հին փոքրիկ եկեղեցին յանուն սուրբ Գէորգայ, որ կըսվի Խտրէլէզ. ունի ինքնաբուղխ ջուր (Այազմա), ուխտատեղի քրիստոնէից և այլազգաց. օրն որ գայ՝ բոլոր քաղաքն հոն կը թափի։

122. Ներքին երկու կողմն ալ արուարձան (Վարօշ) կայ. և երկու հրապարակ։ Արեւմտեանն՝ է Պազար մէյդան մեծ (104). արեւելեանն է Աթմէյդան մէյդան երկայն 278 քայլ, և լայն 180։ Հին ատենը ձիընթացի տեղ էին. նաև հիմա Փաշաներն երբեմն կելլեն ձի կը խաղցընեն։ Այս գեղեցիկ հրապարակին չորս բոլորը տներ և խանութներ կան. արեւելեան կողմն է մեծ ճամին և աղբիւր բարեջուր. իսկ հարաւային կողմն մէկ դծով են հայոց տները պարապալից պարտէզներով. անկէ վերն է Աւաքսէի թաղն, ուր առաջ Տէրվիշի բնակարան կար. որ է առք Պօղթէփէին։

Այս հրապարակին կեդրոնը՝ շինեց հաճի Ապտուլլահ փաշան մեր օրը՝ գեղեցիկ շատրուան չորս հին մէրմէր սեանց վրա. բայց վերջի պատերազմին Մոսկովն որ եկաւ թնդանօթ նետեց քաղաքին վրա, այս շէնքն ընկաւ կործանեցաւ, տեղը մնաց անշուք։

Արեւմտեան արուարձանը երկու թաղ կայ Սօխլու

և Փարօղ բնակութիւն տաճկաց, և յունաց. իսկ առ-բևեկեանը քաղաք կը կոչեն. որ է ընդարձակ և կար-գաւորեալ քաղաք շուկաներով և խաներով. ուր կան բաղնիքներ և երևելի ճամիներ. շուկային մէջն է Չարսի ճամին մեծ, որ առաջ եկեղեցի էր. քովը կայ քառակուսի հին շէնք: Քրիստոնեայք բերդը չեն կրնար բնակիլ, հոս կը բնակին. նաև շատ այլազգներ ալ կը բնակին հոս, որ կրակրսի բերդէն և կը հասնի մինչև Չէօմլէկճի թաղը, և մինչև Պօղթէփէ. իսկ միւս ծայրն է ծովեզերքը. ուր են բնակութիւնք յունաց և երեք գլխաւոր թաղ կան շատ հին ժամե-րով Գանիթա, Մէյտէր գայա, ուր կայ ապառաժ կա-մարաձև, Գասսըլը չէշմէ, ուր կայ աղէ աղբիւր.

123. Հին ատենը ամէն օրուան մէյմէկ եկեղեցի շիներ էին յունաց մեծամեծները. ուստի 365 եկե-ղեցի կար միայն Տրապիզոնի մէջ: Բայց հիմա յու-նաց ձեռքը քսանըչորս եկեղեցի կայ. և գլխաւոր-ները են եօթն: Կան նաև վանքեր, հիւրանոցներ, և շատ աւրած փլած ժամեր: Տան տուներու մէջ մա-տուռներ կան. կըսեն թէ յոյն մեծամեծները իրարու վրայ գժտութիւն ունենալով, իրենց տուներուն մէջ մատուռ կը շինէին, որ ժամ չերթան. և մինչև հիմա նոյն գժտութիւն կայ մէջերնին: Յունաց եպիսկո-պոսը կը նստի Այ Գօրգօր եկեղեցին՝ Գուզլի չէշ-մէ թաղն. որ է հին շէնք. ուր անմիջապէս ծովուն ապառաժին վրայ շինած է եպիսկոպոսարանը. և հոն է Կիւռճիներուն վերջի թագաւորին գերեզմանը. և մօտ է իրենց մայր դպրատունը: Յունաց եպիսկոպոսը Տրապիզոնի՝ է Խալտիայի այսինքն վեհապետ որ միս չուտէր. նոյնպէս Կողքիսու եպիսկոպոսները: Երե-կուն առաւօտ ամէն առաջ հայոց և յունաց ժամկոչ-ները կոչնակ կը զարնեն, որ ժողովուրդը եկեղեցին երթան: Այլազգն ալ ունի մարդ որ շուկային մէ-ջէն կանչելով կիմացնէ Նամազին մօտ ըլլալը, որ պատրաստուին:

Գլխաւոր եկեղեցիներուն անուանք եօթը թաղ բաժնըված է քաղաքը Փերմաններուն մէջ. ա Այ գօրգօր Մոնոպսայէտ. բ Այ Եօրկի. գ Խրիստոս. դ Այ Թե-

րեալի. Է Ս. Հանել. Է Գասող. Է Մօսիսա: Իսկ Չեօս-ւեյնի և Ս. Գեւորգայ Թաղերն են արևելեան վերջի ծայրն քաղաքին (132):

Սոյլասիկի եկեղեցին է բարձր հաստատ չորս մեծ ծաւալ մերմեր սեանց վրայ կեցած. սիւներուն բարձրութիւնն իննը կանգուն կայ, և հաստութիւնը իննը թզաչափ. որ շինված է հազար իրեքհարիւր երսուներինը տարի առաջ՝ Յուստինիանոսի ժամանակը: Սյանանց դրան վրայ կայ այս յիշատակարան.

ΑΥΤΟΚΡΑΤΩΡ ΚΑΙΣΑΡ ΦΛ. ΙΟΥΣΤΙΝΙΑΝΟΣ
ΕΥΣΕΒΗΣ ΝΙΚΗΤΗΣ ΤΡΟΠΑΙΟΥΧΟΣ
ΜΕΓΙΣΤΟΣ ΑΕΙΣΕΒΑΣΤΟΣ ΑΥΓΟΥΣΤΟΣ ΠΑΡΕΣΧΕΤΟ
ΙΝΔ. ΑΙΤΟΥΣ ΥΠ.

ԻՆՔՆԱԿԱԼ ԿԱՅՍՐ ՓԼ. ՅՈՒՍՏԻՆԻԱՆՈՍ՝ ԲԱՐԵՊԱՇՏ ՅԱՂԹՈՂ ՅԱՂԹԱՆԱԿՈՂ ԱՄԵՆԱՄԵԾ ՄՇՏԱՍԵԲԱՍՏՈՍ ՕԳՈՍՏՈՍ ՇՆՈՐՀԵԱՑ. ԸՆԴԻԿՏԻՈՆ ՅԱՄԻ. 480:

124. Այս Թաղին մէջն է սուրբ Սոֆիայի եկեղեցին հնաշէն բարձր, և խանգարած. դրանը վրայ մեծ մերմեր քար կայ՝ վրան զանազան դէմք տեսանք արած: Կերևնայ թէ այս քար կռատանց քարերէն է. վասն զի վրան որոշեցինք Թևաւոր պատկեր կնիկմարդու և զանազան ուրուական դէմքեր, որ հեթանոսական բան կերևնան: Այս տեղ է բարեդիր, որ ծովուն և բերդին դէմն ըլլալով կարելի է թէ հին տաճնը կռատուն էր. եօթըն եկեղեցի շիներ են:

125. Սուսանաց վանքն է հարաւային ծայրը քաղաքին՝ անմիջապէս Պօղթէփէին տակը, և բարձր ըլլալով ամէն տեղէ կերևնայ իբր փոքրիկ բերդ. ուր մինչև ցայժմ կուսանք յանաց կը բնակին: Եկեղեցին է Աստուածածնայ բոլոր ապառաժ քարէ փորած. մէջն ինքնաբուղխ անուշ ջուր, և դուրսը գաւիթ նոյն լեռնէն փորած. վրան լեռ ըլլալով եկեղեցին խոնաւ է: Սանքին պատերը բերդի նման հաստատ են, և ապառաժին վրայ պարիսպները հաստա-

տած են. մէջը զանազան խուցեր և ներքնատան մէ-
ջնարաններ կան աղքատ կերպով շինած. Հարա-
ւային կողմը Պօղթէփէ լեռը բնական պարիսպ եղած
է վանքին. իսկ Հիւսիսային կողմը տեսանք Ալէք-
սիոս կայսեր գահին տեղը բարձր և պարսպապատ.
որ ամառը երբեմն հոն կը նստի եղեր. միայն ալ
վանքն էր մնած։ Եկեղեցւոյ գաւիթին մէջ Յիսու-
սի պատկերքին քով կայ այս յիշատակարան վառ գրով։

ΑΛΕΞΙΟΣ ΕΝ Χ͞Ω ΤΟ ͞ΘΟΠΙΣΤΟΣ ΒΑΣΙΛΕΥ͞Σ ΚΕ ΑΥΤΟ-
ΚΡΑΤΟΡ ΩΣ ΠΑΣΙΣ ΑΝΑΤΟΛΗΣ Ο ΜΕΓΑΣ ΚΟΜΝΗΝΟΣ
ΘΕΟΔΩΡΑ ΧΥ ΧΑΡΙΤΙ ΕΥΣΕΒΕΣΤΑΤΗ ΔΕΣΠΗΤΑ ΚΕ ΑΥ-
ΤΟΚΡΑΤΟΡΗΣΑ ΠΑΣΙΣ ΑΝΑΤΟΛΗΣ
ΗΡΙΝΗ ͞ΧΥ ΧΑΡΙΤΙ ΜΗΤΗΡ ΔΕ ͞ΤΟΥ ΕΥΣΕΒΕΣΤΑΤΟΥ ΒΑΣΙ-
ΛΕΟΣ ΚΥΡΙΟΥ ΑΛΕΞΙΟΥ ΤΟΥ ΜΕΓΑΛΟΥ ΚΟΜΝΗΝΟΥ.

ԱԼԷՔՍԻՈՍ ՔՐԻՍՏՈՍԻՒ ՀԱՒԱՏԱՐԻՄ ԱՍՏՈՒԾՈՑ
ԹԱԳԱՒՈՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԻԲՐԱՒ ԱՄԵՆԱՅՆ Ա-
ՐԵՒԵԼԻՑ ՄԵԾՆ ԿՈՄՆԵՆՈՍ։
ԹԷՈԴՈՐԱ ՔՐԻՍՏՈՍԻ ՇՆՈՐՀՕՔՆ ԲԱՐԵՊԱՇՏՕՆ ԹԱ-
ԳՈՒՀԻ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼՈՒՀԻ ԱՄԵՆԱՅՆ ԱՐԵՒԵԼԻՑ։
ԵՐԻՆԷ ՔՐԻՍՏՈՍԻ ՇՆՈՐՀՕՔՆ ԴՇԽՈՅ ՄԱՅՐ ԲԱՐԵ-
ՊԱՇՏ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՏԵԱՌՆ ԱԼԷՔՍԻՈՍԻ ՄԵԾԻ
ԿՈՄՆԵՆՈՍԻ։

Այս վանքէն վարն է Պօղթէփէի թաղն բնակու-
թիւն տաճկաց. ուր կան խանութներ և մեծ ջամի՝
որ կըսուի Թասանիյէ, ունի բարեհամ ջուր. որ է Հարա-
ւային կողմը վերջի թաղն. անկէ վարն է փոքր հրա-
պարակն. որուն բոլորտիքն է թաղն Զէյթինլիք մա-
հալլէսի. ուր կայ ջամի և ուսումնարան՝ յունաց ա-
տենէն մնացած. անկէց կերթայ Թէքքէի թաղն
(122)։ Իսկ արևմտեան կողմն վանքին կան զուարճալի
տեղեր դաշտեր և պարտէզներ, որ կըսուի Կիօլ չայիր։
126. Պէզէստէնն է շուկային մէջ՝ հնաշէն և
բարձր քառակուսի, չորս երկաթ դռներով շինուած
մէկմէկու դէմ. մէկը արևելք, մէկը արևմուտք,
մէկը հիւսիս, մէկալը հարաւ. մէջ տեղն է հին ջըր-

հորը բարեջուր, եւ մէջի փողոցը չորս բաժնուած է ճամբաներով։ Արեւելեան դրան վրայ հին գիր տեսանք խանգարուած. Ճէնովիզի գիր է կըսեն. չի կըրցանք լաւ որոշելու։ Այս շէնք բարձր է, եւ առաջ էր կրկնայարկ, չորս սեանց վրայ հաստատուած էր վերնայարկը. սիւները կան, բայց կրակէն ետեւ միայարկ շինուեր են խանութները։

Հին շէնք է մաքսատունը բարձր՝ ծովուն վրայ շինուած կրկնայարկ հանդերձ քարաշէն սանդուխով. ուր մօտը կայ նոյնպէս քարաշէն խան կրկնայարկ։ Հոն մօտը խանութի մէջ կօթող մի կայ հին առեւտրէն մնացած. բայց վրան գիր՝ չի կայ։ Արեւելք է Պոտչխանը շուկային մէջ, հին, կրկնայարկ, եւ կամարաշէն. ուր առաջ բոլոր հայ վաճառականներ էին հարուստ, որ աճէմի առուտուր կընէին. հիմա աղքատ են։ Կան նաեւ զանազան խաներ եւ ճամիներ. ինչպէս է Միւֆթի խանը եւ ճամին, Աալը խանը, Փաշա համամի, Պոպախանա ճամիսի բարձր քարաշէն, եւ այլն։ Կան տեղ տեղ պորփիւր սիւներ ընկած, որ հին շէնքերէն մնացած են։

127. Հայոց եկեղեցիներն են չորս. որ Սէր Աէքսին առենքը շինուած են. ա Աստուածամայր. բ Զուարթափան. գ Սուրբ Օգսենտ. դ Սուրբ Յովհաննէս։ Աստուածամայրն է հինգ խորանով. ունի գաւիթ եւ զանգակատուն. գաւիթն հաստ պատով պատուած է. կերեւնայ թէ այս պատին վրայ էր եկեղեցւոյ կամարը. իսկ զանգակատունը գաւիթին խորաններուն կամարին վրայ շինուած է հաստատ. նոյնպէս խորաններն են հաստատ կամարաշէն։ Եկեղեցւոյ վրայի քարաշէն կամարը եւ ծածկը քաղաքն առնուած ատենը փլած է, ինչպէս տեղը կերեւնայ. յետոյ գերանով շիներ են, թուի թէ Յաւուզ Սուլ. Սէլիմին օրը։ Գաւիթին մէջ սուրբ Յակոբայ խորանին վրայ այսպէս գրուած է. ՓԱՌԱՑ ՏԱՃԱՐՍ ԱՍՏՈՒԱԾԱՑԻՆ ԿԱՆԳՆԵԱԼ ՅԱՆՈՒՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻՆ ԻՇՏԿ ԱՂՐԻԳՃԻՆ ԵՒ ԾՆՈՂԱՑ ԻՒՐՈՑ ԹՎ ԳՃԳ ԻՆ". 1414։

Իսկ գաւիթին մէկալ խորանին մէջ այսպէս գրուած է. ՇԻՆԵՑԱՒ ԼՈՒՍԱՋԱՐԴ ԽՈՐԱՆՍ ՅԱ-

ՆՈՒՆ ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՍՊԱՍԱՒՈՐԱՑՍ ԳՐԻԳՈՐ ՔՀ· ՅՈՎԱՆԷՍ ՔՀ· ՅՈՀԱՆ ՔՀ· ՍԱՐԳԻՍ ՔՀ· ԵՒ Ա՟Մ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ, ՈՐՔ ԱՍՏ ԱՇԽԱՏԵԱԼ ԵՆ 'Ի ԹԱԳԱ-ՒՈՐՈՒԹԵԱՆ ԿԻՐ ՄԱՆԱՒԼԻ ԵՒ ԿԻՐ ԱԼԷՔՍԻ ԵՒ ԹՎԻՆ ՀԱՅՈՑ Պ՟ԿԳ ԵՒ Ք՟Ի ՓԱՌՔ ՅԱՒ"· 1414 ։

Բուն եկեղեցւոյ յիշատակարանը չի կայ. միայն զանգակատանը ետևն կայ յիշատակարան Խաչերեսին Մ՚ելիքին Յովհաննեսին և այլոց. որ խօճա Ստեփա-նին ցեղէն էին. Թվ. Պ՟ՀԸ. 1429 ։

Եկեղեցւոյ չորս դին ընդարձակ գերեզմանատուն է. բայց շատ տեղն առեր տուն շիներ են արևմտեան և հարաւային կողմը. ուստի ժամուն մեծ ջրհորը մնաց քովի տանը մէջ. ուր սովորութիւն էր, որ ոտ-չափ եկեղեցի պիտի շինվիր, նախ ջրհոր կը բանայ-ին, յետոյ կըսկըսէին շէնքը. անոր համար ամէն հին եկեղեցի ջրհոր ունի ։ Արևմտեան կողմը գերեզմա-նոցին մէջ քարաշէն խորան մի կայ. ուր պատարագ կընէին ժամը չի լմնցած. վրան խաչ և հայու Գիր կայ. բայց խանգարելով չի կարդացվիր ։ Ժամուն մօտ տան մէջ գերեզման մի գտան քարաշէն, մէջը ամանով ածուխ. կերևնայ թէ մարդու երած մար-մին է. որ կռապաշտութեան ատենէն մնացած պիտի ըլլայ ։

Այս եկեղեցի ունի երկու դուռ. մէկն հիւսիսայ-ին կողմը. ուր կայ բակ և նահատակի գերեզման երիտասարդի. որ հաւատքի համար շատ տանջանք քաշեր նահատակվեր է. բայց շատ հին չէ, իբր հա-րիւր տարւան գիր կայ. մէկալ դուռն է հարաւա-կողմը կամանց համար, ուր է վերնատունն կանանց. իսկ բուն մեծ դուռն եկեղեցւոյ՝ է ձամբուն վրայ ։ Այս դրան դիմացն է Ժամատունը հանդերձ դպրա-տունով. որ շինեցինք 1818*ին ։*

128. *Զարխափան, է եկեղեցի Յիսուսի անուան, ինչ-պէս ծերերն աւանդութեամբ կը պատմեն. բայց աւագ խորանին Աստուածածնայ պատկերը ըլլալուն հիմա Աստուածածնայ եկեղեցի կըսվի. իսկ շինված ժամանակը վրայէն մարդ է ընկեր, և անճիտս մնա-լուն համար Զարխափան ըսվեցաւ. ունի չորս խորան,*

փոքրիկ ուանդատուն հանդերձ խորանով, և զանգակատուն բարձր. բուն եկեղեցին պատով զատված է գաւիթէն և կանանց տեղէն. ուստի և հաստատ քարաշէն է վրան։ Խորանին ետևն կայ այս յիշատակարան. ԶՎԵՐՋԻՆ ՇԻՆՈՂ ՍՈՒՐԲ ՏԱՃԱՐԻՍ ԶԽՃ ՇԱՄՇԱՏԻՆ ԵՒ ԶԻՒՐ ԿՈՂԱԿԻՑՆ ԵՒ ԶԱՒՆՈՑԻՆ ԶՊՐ ԽԱՉԱ ՅԻՇՔ 'Ի ՍՈՒՐԲ ՅՂԹՍ ՁԵՐ. ԹՎ ՀՑ ՊՁ. 1431։

Այս եկեղեցին քիչ մի խորը շինած է, ուստի կանանց կողմը և վերնատունը շատ լուսաւոր չէ. և բակին հետ պատկից է յունաց հին քանդված եկեղեցին. որուն պատերը և խորանին տեղը կան։

Ձորխափանին ունի առաջին ընդարձակ գերեզմանատուն. որ առաջ Խաչքակլին հետ մէկ էր. վերջը Իսկէնտէր փաշան ճամբայ բանալով զատվեցաւ, և քարաշէն խորանը մնաց Խաչքակլին մէջ. որ է հիւսիսային կողմը. բոլորտիքը տներ կան։ Այս խորանին վրա գիր չի տեսանք. այլ կան խաչեր քարէ փորած, և ձիաւոր սուրբի արձան խանգարած. եկեղեցին չշինած հոն պատարագ կընեն եղեր. իսկ Ջրհորը ժամուն կռնակը դուրսն է մնացեր։ Առաջ ժամուն մեծ դուռը խաչքակլին դիմացն էր, հիմա արևմտեան կողմն է։

129. Սուրբ Օգսենտ, ըստ տճ. Սուլու մանաստր, շինած է անուամբ սուրբ Օգսենտիոս մարտիրոսին՝ որ է հիմա Առաջնորդարանի եկեղեցին. ուր կայ հրաշագործ հին պատկեր Աստուածածնայ յունաց ձեռօք՝ Յիսուս գիրկը՝ նման Վենետիկու հրաշագործ պատկերին, թէպէտ անկէ մեծ է, որ կըսեն թէ Ղուկաս աւետարանիչ քաշեր է։ Այս եկեղեցին թէպէտ փոքր է, բայց ունի երեք խորան և գերեզմանատուն. որուն մօտն է Առաջնորդարանին ծովահայեաց ընդարձակ և բարեդիր, որ էր տուն Բժըշկեանց։

Սուրբ Յոհաննէս, է փոքրիկ եկեղեցի շուկային մօտ, և ունի փոքր գերեզմանատուն, բակ, և զանգակատուն վրան փլած. դրանը վրա կայ հին գիր փորած հայերէն, նաև զարդեր. բակին մէջ կան յունաց

եւ Հայոց տներ. անոր համար կըսեն թէ յունացած տուներ են :

Գիւղերն ալ կան փոքր եկեղեցիներ Հայոց՝ որ Խաչփոր կըսեն : Ասոնք Համշէնէն եկած են (144). բայց քաղաքացիք Ունի քաղաքէն են. ուստի գեղացիներուն լեզուն և հնչմունքը շատ տարբեր է քաղաքացիներէն. սակայն քաղաքին մէջն ալ կան Համշէնէն եկած հին տներ. որոնք տարւէ տարի տուրք կուտան Համշէնցոց հեռ հին ժամանակէն 'ի վեր. իբրեւ՝ Թագաւորին. առաջը վճարած մուրհէմմին առնոնք կուտան. ինչպէս գրուած է Թագաւորական դիւանը : Քաղաքացիք երկու հարիւր տուն հազիւ կ՚ըլլեն, առաջ շատ էին. իսկ գեղացիք հինգ հարիւրէն աւելի են. որ իբր զօրք են ամէնը Տէրէպէյիներուն, որոնք խորամանկ և շատ պատերազմող մարդիկ են :

130. Ախնաւէրէնէ, վանք պարսպապատ մէկ ժամ հեռուն արեւելեան կողմն քաղաքին բլուրի վրայ շինած է հաստատ՝ համդերձ խուցերով և վերնատնով : Եկեղեցին ընդարձակ քարաշէն է համդերձ Գմբեթով. և ունի իրեք մատուռ. Ա Աստուածածին քառակուսի քարաշէն և գեղեցիկ արեւմտեան կողմը. ուր էր առաջ հրաշագործ պատկերը (129). Բ Սուրբ Յովհաննէս փոքրիկ արեւելեան կողմը համդերձ պարտէզով. և Գ Սուրբ Երրորդութիւն, որ է զանգակատան մէջ արեւմտեան դրան ժամուն՝ բարձր : Այս զանգակատան վրայի մէկ մասը դեռ կեցած է : Հին յիշատակարանին մէջ այսպէս կը գրէ. *Այսմ պատ-տուարին հիմն նորոգեցաւ շինահաստատուածն. Ի Ծ ողորմ. աստ-ուածապատուր աբեղին որ շինհաստատողն նորոգեց խուցն նո-րոգեաց* :

Վանքին շինողն է խօճա Սահփանն, որ արեւելեան կողմէն եկած ըլլալով Ճէնիւէրլէ անուն դրուեցաւ. մտ զի Ճէնս արեւ ըսել է՝ կամ Թերեւս պարոն Ճամշաշին անուամբը կոչեցին : Հրովարտակներուն մէջ այսպէս կարդացինք. ,,Պրապուլուն ձէ Նեժոյէ էրմէնեան մանասթըր Ճէնիւէրլէ,, : Աջի Փէրմանն է Բ Սուլ. Պայեզիտին. առաջ. որդին Սուլ. Սէլիմ գրեց

Հօրը Փէրմանն հանեց որ քակված տեղերը շինվին, Շէմշէտին որդուն խնդրելովը. զի անատենը աւ քայորդիք Զօրապիզոն կը նստէին ։

131. Եկեղեցնայ դրան վրայի մեծ միակտաւր մէջ մէջ վիմին վրա գրած է այս յիշատակարանը.

ՓԱՌԱՑ ՏԱՃԱՐ ԱՍՏՈՒԱԾԱՑԻՆ
ՅԵՐԿՐԻ ԴՐԱԽՏ ԿԵՆԱՑ ՓԱՅՏԻՆ
ԿԱՆԳՆԵԱԼ ՅԱՆՈՒՆ ԱՄԵՆԱՓՐԿՉԻՆ
'Ի ՈՒԹՆ ՀԱՐԻՒՐ ԹՈՒԱԿԱՆԻՆ
ԵՕԹԱՆԱԱՍՈՒՆ ԵՒ ԵՐԵՔԻՆ
'Ի ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԱՑ
ՏԷՐ ՊՕՂՈՍԻ ՈՒՂՂԱՓԱՌԻ
'Ի ԺԱՄԱՆԱԿՍ ԲԱՐԵՊԱՇՏԻ
ԿԻՐ ԱԼԷՔՍ ԹԱԳԱՒՈՐԻ
ԽՕՃԱՑ ՍՏԵՓԱՆՆՈՍԸՆ ՊԱՏՈՒԵԼԻ
ՇԻՆԵԱՑ ՏԱՃԱՐՍ ՀՐԱՇԱԼԻ
ՅԻՒՐ ՅԻՇԱՏԱԿ ԱՆՋՆՋԵԼԻ
ԵՒ ԾՆՈՂԱՑ ԻՒՐ ԿՐԿՆԱԿԻ
ԵՒ ԿԵՆԱԿՑԻՆ ԻՒՐՈՑ ՄԵԼԻՔԱՑ ԽԱԹՈՒՆԻՆ
ԵՒ ԶԱՒԱԿԱՑ ԻՒՐՈՑ ՄԵԾԻ ԵՒ ՓՈՔՈՒ։

* Բայց՝ նա խօճայ Ստեփաննոս տապանաց ՚ի հալալ արդեանց իւրոց շինեալ վանացս [illegible], եւ [illegible] գիրք տաճարս յիշատակ հոգւոյ իւրոց, եւ ՚ի փրկութեան ծնողաց [illegible] ։

Այս եղաւ միաբանից սուրբ ուխտիս նա խօճայ Ստեփաննոս եւ իմ որդիսս. զի հաստատ ամենայն [illegible] է վանքս, եւ [illegible], որք բնակեալ են ՚ի սա. եւ աստուածոյ տուեալ. եւ ոչ ոք ունի իշխանութիւն ոչ յիմոց եւ ոչ յօտարաց իբրեւ զմարմնաւոր հայրենիս իշխել ՚ի վերայ վանացս ։ Այլ ազատ է [illegible], եւ աստուածոյ տուեալ. այլ միայն [illegible], եւ [illegible] սուրբ վանացս [illegible] ։

Սուրբ նշանս աստուածընկալ յիշատակ է խօճայ Ստեփաննոսին եւ որդւոց իւրոց [illegible], եւ [illegible] սուրբ [illegible], եւ [illegible] յիշատակ [illegible] եւ [illegible] իւրոց եւ ամենայն ազգականաց ։

Աւելի յիշատակարանը հայ վանքերին աղբիւրեն, [illegible]

Լուսաղբիւրին վրայ, որ դէպ 'ի հարաւ քիչ մը հեռուն անընդհատ կը վազէ պատուական ջուր. ուր քաղաքացիք ուխտ կերթան: Այս աղբիւրներն հին ժամանակը շինուած են. վանքին մէջի աղբիւրին համար այսպէս կը գրէ հին գրով յիշատակարանը. * Ի Թ՟ ողորմ ոսկերիչ նորոգեցին որ շինեց աղբիւրս. Ի Թ՟ ... տարին էր ջրին խմելուն ջրմուղին ղեկավ, որ հրէին շինեց աղբիւրս յիշատակ իւր անուան ||:

Առաջ լուսաղբիւրին քով շէնք կայ եղեր ուխտաւորներուն նստելու համար. ըստ որում վանքի յիշատակարանին մէջ կը յիշէ, թէ ուձըլին շինուեցաւ. * Աստուած ողորմի ... իւր ծնողացն ... հոգւոյն. և իւր ... տանկոյն. աստուած ողորմի իւրեանցն հոգւոյն. որ լուսաղբիւրն մէջ ... շինեց. աստուած շինողին անփորձ պահէ ամէն ||: Նոյնպէս կը յիշէ վանքին մէջի շինութիւններն. որ հին գրով գրած է այսպէս. * Ի Թ՟ ողորմ ... շարայքն հոգւոյն որ շինեց ... ժամատուն յիշատակ իւր հոգւոյն. Ի Թ՟ տարին ... շարայքն դռնատուն տարան խանուն որ եկեղեցւոյն պարսպին շինելը ... ողորմ երեք իւր հաւր հոգւոյն համար: Ի Թ՟ տարին ... խոհակերն որ ... հրէին ծածկեց նշխարով ||: Պատճառ կը յիշէ թէ Սահակայ խաթունին խուց շինեց. իսկ Աղեքսի առաջերն առաջ շինեցեր էր, յետոյ խոհա Կարապետն շինեց կամ նորոգեց տնտեսատունը, դարպասը, վերնատունը. նաև պարիսպը նորոգեց: Նմանապէս մեր օրը նորոգեցաւ այս վանք ձեռամբ Մահտեսի Ղարսեղ ալթունակալեան ծախքով քաղաքացւոց: Առաջ առանձին խուց կար Աթուակալ իշխանին. ինչպէս յիշատակը հին գրով գտանք, որ կըսէ. * Ի Թ՟ ... խուցս ... որ շինեց ... խուցն իր հոգւոյն համար ||:

Այս վանքին երկիրներն առաջ այնչափ շատ էին, որ մինչև քաղաքին ծայրը Այ Ֆիլիպպօ կը հասնէր. հիմա շատ տեղն յափշտակեր են: Փերմաններուն մէջ բոլորը կը նշանակէ և շատ ազատութիւն կուտայ Աբեղաներուն, որ միշտ վանքին մէջ կը բնակէին. ինչպէս կը յիշէ յիշատակարանը. * Ի Թ՟ ՌՃԿԵ ... ...

տաճարուր աւէնդան||։ Ուր մինչև ցայժմ կան աւերա-ներուն խուցերն եկեղեցւոյ քովերն առանձին պար-տէզով. իսկ ուխտաւորաց վերնատունն և տնտես-տունն դատ են պատով։ Այնպէս դատ է Յարու-թեան պարտէզն, որ եկեղեցւոյ հիւսիսային կողմն է։ Առաջ շատ շէն ըլլալով լեցուն էր վանքն յիշա-տակներով. ամէն տեսակ բան կուտային բարեպաշտ-ներն, հիմա գրեթէ բան չի կայ։ Յիշատակարաններ մէջ անհուն բան կը յիշէ տվօղներուն անուններովը. զորօրինակ. *ՌՃ ողորմ հայրապետ չէլէպոյն, որ ղրկեց ՃԾ սորչի (կամ ղուշէ) խաչն մի իւր հօրն հոգւոյն Եղիկէն չէլէ-պոյն. Այլև ողորմ մօրն հոգւոյն որ ղրկեց կանանչ ժիմոյ զումրխտէ մի և զարնէզան մոմալ։ ՌՃ ամ ամեն ղիւրձ յա-ղուպլին պուտուրին շահսահայ խաթուն. որ եղեր ա բոկիծ և ղեձ նկեմարն յիշատակ իւր հոգւոյն 'ի սուրբ վանքս||։ Հին գրով սկիզբը գրած է. *ՌՃ ողորմ մղրեսի յասար հո-գոյն. որ զամենայն ինչս իւր եր 'ի սուրբ վանքս. և զինչ ինքրեց 'ի սուրբ եկեղեցին գտաւ. և եղեր ղեձ արծաթի խաչն յիշատակ։ ՌՃ ամ ողորմ էպոնէղ պարոնարգէ հաւրն հոգոյն, որ եղեր ա. Գիրք. 'ի սուրբ եկեղեցի դրաւն. և Ե. Գիրք 'ի մայրն ելորց։ ՌՃ թուին ղիւրձ պաղալազին. որ եղեր ծա-ռանքն իր որդոյն արևուն ազատածառին 'ի սուրբ եկեղեցին դրաւն||։

Այնման. ԺԸ սուրբ Մամաս, էր Թաղ հայոց՝ վան-քին վար քաղաքին կողմն. ուր կը բնակէին հայք, և ունէր եկեղեցի սուրբ Մամասայ. մինչև հիմա աւե-րակները կան բլուրին վրայ։ Հին տանը անկից ճամ-բայ կայ եղեր գետնին տակէն, որ կելլէր վանքին խորանին տակն։

Այս եկեղեցի առաջ կապուած էր վանքին. ինչպէս կիմացուի հին յիշատակարանէն, որ կըսէ. *ՌՃ ամ ամեն ղիւրձ միրիճանն այս մատն համար ա Գիրքն 'ի սուրբ եկեղեցւ ... ղիւրձ ղոհարին որ դյարուփեան ղպարբեաղն շրջապատ նկրէն ըննեց. ամ ամեն ղիւր որդին որ եղեր Ճ ողորմակ այս մատն համար յիշատակ 'ի սուրբ վանքս||։

Այս յիշատակարաններուն հին անուններէն կի-մացուի թէ Տրապիզոնի հայերը չէ միայն Անի քա-ղաքէն, այլև Աճեմստանէն ալ եկած են. ինչպէս

յայտնի է Սուլէյմաներուն անուանեն, և ուրիշ բաւական-
զոր օրինակ. *Ըստ Յն ողորդ պղղրդածն ձօյն փողս խա-
լաւանքն, որ երեք ա Քաղաք ոսկի առին 'ի տարբ երկինք ::

152. Ղիօմիւշխանէ Թաղն է արևելեան ծայրը Տրա-
պիզոնի. հռչակ բրուտներ են բնակիչներն. ուր ա-
ռաջ հայեր ալ կային : Նշանաւոր կոչուած է միւս աւան-
ձին Թաղն Ըս Քէլքիդը. ուր էր առաջ յունաց եպիս-
կոպոսանիստ եկեղեցին մեծ քարաշէն, հիմա ձաւթ է.
որուն հին պաշխաղը կը յայտնէ հնութիւնն ու ընդ-
արձակութիւնը տեղւոյն. ուրիշ հին բան չի տեսնուիր.
անոր զաւթի և առաջին հայաստանի : Սոս է աղբիւ-
րը բարեխօսը նոյն անուամբ. անոր յիշատակարան հին,
1500 տարուան. որ անտառներու եղական աղջիկն
է շինել տուեր : Այս արաբերէն վերակացութեան
Փերմանը հայոց տրված էր, ուր բնակութիւն և
ասնէին. որ արտ մի տակին վանքեր. ինչպէս զառանք
յիշատակարանը հին գրով. * Ըստ ողորդ ղամայ խօսլա-
նին հոգոյն որ երեք կարօղ տեղ այ Քէլքիդն վերև յիշարակ է
տարբ վանս ::

Այս Թաղէն վեր կըսուի հանք ոսկոյ ոսկեղէն. ուր
կայ նոյն անուամբ հօր բարեխօսը. հօր առաջ բնակու-
թիւն կար մինչև Ալէքսաս. և երկու կողմը խա-
նութներ կային. ինչպէս աւերակները կերևնան.
մօտը արտին մէջ կայ նաև քառակուսի աւերակ, որ
կըսեն թէ բաղնիք էր : Կարծլը է թէ քաղաքին ծայ-
րը մինչև գետը կը հասնէր առաջ. ուր կար կա-
ռուց Պղտորի և Ճերմակլեայ շատաւածներուն ան-
ուամբն (112): Ղիօմիւշխանէ Թաղէն առաջին է այժմեան
նաւահանգիստն ամառուան, որ ծանծաղ ըլլալով ան-
յարմար է ձմեռուան. բայց ընդարձակ և բաց է :
Արևմտեան կողմն է ապառաժ սարն, որուն վրայ Ս.-
կիւնձօղլի Ս. Հմէօս փառաւոր եկեղեցի պայծառ շինել տը-
ւաւ պարապարագատ բարձր գեղեցիկ և զուարճալի
1748 ին. առաջին անոր ընդարձակ հրապարակ և պար-
տէզը տեղ. բոլոր շինուած է երկու մեծ քարտաշ,
Հելլենացին և Հայաստանցին. բարեխնամ քարաշէն կըր-
նայարկ՝ ապառաժին վրայ հաստատած զարմանալի
ամրութեամբ վայելէն մինչև վեր : Շէնքին բուն ձա-

կառն արեւելք նայելով Լաղիստան կը դիտէ. արեւմը-
տեան կողմէն Խօռօզ կը տեսնէ. իսկ հիւսիսային
կողմէն ծովը կը նայի: Գուռուն է արեւելեան կողմն,
ուր կան քարաշէն տեղեր գմբէթաւոր, եւ դուրսն
աւերակներ: Շատ տեղն աւրած է. որ վերջի պա-
տերազմիս ատենը Մոսկովն եկաւ նաւով քակեց թըն-
դանօթով պատերը հիւսիսային կողմանն:

Ռուջեւի ծովը քարոտ ըլլալով ուզեց փաշան որ ծո-
վը լեցընէ արեւմտեան հովը կոտրելու համար. որով
ապահով կըլլար նաւահանգիստը, բայց ժամանակ
չունեցաւ. նաեւ արեւելեան կողմն ալ կայ քիթ գե-
տէն անդին, որ կըսուի Խուրֆոտ դուռանի. ուր տեսանք
քակուած հին եկեղեցի սուրբ Աթանասայ:

Այս թաղ առաջ կըսուէր Ֆընտըկար. ուր ֆընտըկ-
ներ կը բուսնէին եղեր ժամանակով, հիմա կըսուի Ալե-
քսի տէրոյ պալատին անուամբ: Երեւնայ թէ հոս բնա-
կող ֆընտըկները ժամանակ անցներէն եւս հայա-
ցեր են. բայց անուանին կը պահէին. Ինչպէս կիմաց-
վի վանքին յիշատակարանէն, որ կըսէ. * Ի Ռ.Ծ ...
... որդին ..., որ եղեւ ... յե-
շատակ ՚ի սուրբ ... ||:

133. Պօլօնէզը, երեւելի լեռն է Տրապիզոնի բարձր՝
ամենաջայլես հարաւային կողմն, որ հարաւային հովը
եւ գետին օդը կը կտրէ, թէ չէ աղէկ չէր ըլլար
օդը. վրան ընդարձակ խոտաւէտ եւ զուարճալի է.
ուր կայ մատուռ հին Ս. Հրեշտկն անուամբ. եւ ու-
րիշ մատուռ, որ ունի խոռոչ. ուսկից քարափոր ճամ-
բայ կայ եղեր զարմանալի ՚ի Պալաթայ վար
իջնելու: Այս լեռան վրա կատուի նման փոքր կենդա-
նի կայ շատ, որ Զանգալ կըսուի. ձմեռ գիշերն երբոր
աշխարհի օդը պարզէ հետեւեալ օրը՝ իրիկունը մեծաբերան
կըսկըսին ռռնալով ձայն հանել: Արեւելեան ծայրն
լեռան վարը Նշէսայի դիմացն է վիմափոր մատուռն
հանդերձ խարանով, որ կըսուի Պողոսեայ. մէջը կան
պատկերք եւ Ս. Յակոբ. բայց դժուար է վեր ելլել.
Սուրբ կայ ուրիշ մատուռ վիմափոր՝ քարէ փորած խո-
րանով. ուր առաջ կար եկեղեցի սուրբ Սավայի: Երե-
ւնայ թէ այս ընդարձակ եւ զուարճալի դաշտին մէջ

ղխտի ըլլալ՝ երևելի վանք յունաց, ինչպէս մատուռ-ներէն և աւերակներէն յայտնի է։

Ալեմտա. այսինքն ողորմած, է քիթ և ապառաժ. բլուրին վրայ կայ քայքայած եկեղեցի սուրբ Աստուածածնայ. խորանին տեղը դեռ կեցած է, ուր տեսանք մնացորդ պատկերաց։ Հիւսիսային կողմը դաւակար. որուն կէս կամարը դեռ կերևնայ, որ սանդուխով մինչև ծովը կիջնէր, ուր մանր նաւեր կուգան եղեր։ Հեքիմ օղլու Ալի փաշան դերղացոց համար վարէն ճամբայ բանալով՝ եկեղեցւոյն ճամբան աւրեցաւ։ Ուր գտան մեր օրը քարաշէն գերեզման մեծամեծ ոսկորներով. մօտը կան բարեջուր աղբիւրներ։ Ասկից կրոկրոտի ընդարձակ սև աւազուտը և կը հասնի գետը։

134. Տէյիրմէն տէրէսի. ըստ յն. Բաթինիաս, այսինքն տօսախ (Շիմշիր), չափաւոր մեծ գետ է. որ կուգայ Ալիւմիշխանայու մօտէն. ուր տեղ առաջ տօսախ շատ կայ եղեր. որուն վրայ կայ մեծաշէն կամուրջ հինգ կամարներով ահագին բարձր։ Այս գետ երբեմն տռատանալով մեծ քանդմունք կընէ. որուն ջուրը ախտասակար չէ՝ լաւ է. կը բերէ Ալաբալըզի, Սազան, և այլն. գետին վերը թումբեր շինած են, որ ջրաղացներուն ջուր կը բերեն դարձընելու համար. որով գետին անունը փոխուեցաւ Տէյիրմէն տէրէսի։

Հոս առաջ շէնք և կատուններ կային. ինչպէս տեսաւ Արրիանոս։ Այս գետ բուռն գալով՝ անդադար ծովեզերքը քարով և աւազով կը լեցընէ. որ Արր". Իսոս գետ կը յիշէ։ Ակէչէւ ջուր Խուբենաբուղի՝ աւելի վերն է. որ պղպջալով գետնէն կելլէ, ուր առաջ ռամիկներն հրաշք կարծելով ուխտ կերթային։ Ասոր վերն է Տէլիկլի տաշ. ուր լեռը ծակած է դիմացէ դիմաց գետին ջուրը քաղաք վազցընելու համար։ Շատ զարմանալի հին գործք է չափաւոր մեծութեամբ աղեղնաձև ծակած միակերպ. որ Յուստինիանոսէն շատ առաջ պիտի ըլլայ. զի այս թագաւոր գուլլէյին կողմէն ջուր բերել տուաւ քաղաքը (108)։

Յամի տեառն 1022 Պետրոս կաթողիկոսն Յովհաննէս Բագրատունի հայոց թագաւորին հրամա-

նաւ Տրապիզոն եկաւ. բայց ջրօրհնէաց օրը Մաւրիկ կայսր ուզեց, որ Հայոց ծիսով օրհնել տայ ջուրը։ Սրբազն Պետրոս Հայրապետ այս գետին քով ջուրը կօրհնէր, գետը մնաց անշարժ, և հրաշալի լոյս երևցաւ. անոր համար Պետրոս Գետադարձ կոչուեցաւ ըստ պատմութեան Արիստակեսի։ Գետը ձգած ոսկի խաչը տեսանք, որ աւանդութեամբ կը պահեն։ Ոմանք կըսեն թէ այս Հայրապետ վանքը նստաւ. ուստի անատենը վանքին տեղը պիտի եղած ըլլայ փոքր վանք մի. որ չորս հարիւր տարիէն ետև եկաւ խօճա Ստեփաննոսն յունացմէ գնեց տուաւ հայ կրօնաւոր աբեղայից, ուր առաջ կը ճգնէին. ինչպէս կը մակաբերպի եկեղեցւոյ դրան վրայի յիշատակարանէն (131)։

Իսկ հին տաճարը Դաժնոփան ամիս մի կեցաւ այս գետին քով տասն հազար զօրքով, և Գիասի կատան մէջ ուխտը կատարեց գնաց։ Այս տեսանք հողէն ելած փոքրիկ կուռք մի զուտ ոսկիէ թափած. որ էր գեղեցիկ պատանի մերկ թևաւոր՝ ոտքի վրա կայնած. ոտքին տակը կար պատուանդանի տեղ. որ կամ Բաքոսի, կամ Ապողոնի, և կամ Կուպիդոնի կուռքը պիտի ըլլայ։ Տես Ձեռ. 643, 661, և 662։

Տրապիզոնի հինաւուրց մեծ նաւահանգիստն է Ջեօմլէկճին (132). իսկ փոքր նաւահանգիստներն են՝ Գաւնիոս, Գուզլի չէշմէ, Գավուշ տիրէկ, Դէմէր գայա, Մումխանէ էօնիւ. ուր է քաղաքին բուն վաճառատեղին նաւակաց. նաև Մոլոզ՝ որ է բերդին առաջն։ Այս շատ երթևեկութիւն կըլլայ նաւերու, և ամէն տեսակ ապրանքի առուտուր կըլլայ. իսկ ցամաքային գլխաւոր առուտուրն է քթանի. որ կը գործեն ընտիր կանեփէ, և կը ղրկեն Հալէպ, Շամ, Պաղտատ, և մինչև Հինտ։ Այլև գինին, թութունը և կաղինը կերթայ Սևաստոպօլ, և Մոսկով։

135. Խօշօղլան, կամ Ողանճողլի, է իբր վերջի ծայր և սահմանագլուխ քաղաքին հարաւակողմն Պօզթէփէի. որ է բարձր դաշտ լերանց, կապան, և անցք ցամաքի ճամբային. ուսկից պիտի անցնին ամէն ճամբորդք. ուր կան քննիչք փաշային, որ կը նային ճամ

բարդներուն Թուղթը․ ունի գեղ Խօշօղլան անուամբ․ Հոս շէնք շինուեր էր ժամանակով գեղեցիկ երկաստարդ մի․ որ փոխադրմամբ գլխատեց Սուլ․ Մէհէմմէտ․ և յետոյ լսելով անմեղութիւն երկրպագութեան ըսեր է Սուլ․ խօշ օղլան․ ասկէց կըսեն այս տեղը կոչուեցաւ Խօշօղլան ։

Մերզիֆօն, է հռչակաւոր վանք յանուն Խօշօղլանեան մեր Տրապիզոնի և Կիւմիշխանայի մէջ․ որ է հին շէնք ուր լեռան ծայրը շինած ապառաժին մէջ, նեղ առակալի ամփոփուելով մնայն մեր կերպն․ և այն մէջն մեր տուած է ուապականներուն վանքէն․ երբոր ուխտաւոր կերթայ կը դնեն մեր կառանուն ։ Եկեղեցւոյն մէջն է Աստուածածնայ հրաշագործ պատկերը սևադէմն և հին․ ուր ամէն ազգէ ուխտ կերթան․ և շատ հրաշք կըլլայ ։ Այլազգք ևս ասորէ ատքի մամ կը ղրկէ, ինչպէս իւրենք պատմեցին․ ուր կան երկու մեծամեծ կերպարներ գերանի նման․ որ Սուլ․ Միւրատին ընծան են․ զի անկէ անցած ժամանակը կըսեն ապաշխարեր է, թէ որ յաղթութեամբ դառնայ Պաղտատէն, ոսկեով վառեն պտուտէ․ իսկ երբոր դարձեր է մէջի կրօնաւորներուն աղաչեր են, որ կապարով դոցէ․ և անատենը կերպններուն ալ ղրկեր է ։ Ապառաժէն պատուական ջուր կը կաթէ բաւական բոլոր վանքին ։ Սօտը կան երկու մեծ վանքեր յանաց․ բայց գլխաւորն է Մեղրէմենան․ ուր հեռաւոր տեղերէն ուխտաւոր կերթայ ։

Կիւմիշխանէ, մօտն է Պատմութ և օրուան ճամբայ հեռու Տրապիզոնէն հարաւակողմն․ որ թէպէտ լեռնային տեղ է․ բայց լեցուն է հանքով․ և անոր համար ըսուեցաւ Կիւմիշխանէ․ Պատարին մօտ մեծամեծ փապարներ կան հանքի․ փոքր գետին քով աւառ հանք դատն․ բայց գետին ջուրը մէջը լեցնելով անգործ մնաց ։ Քաղաքը շինած է լեռան կողը․ ուր հազար մեց հարիւր տուն կայ․ հայերն երկու հարիւր անէն աւելի են․ եկեղեցին է մեծ և վայելուչ սուրբ Աստուածածնայ անուամբ ։ Մէկ ժամ հեռուն է վանքը սուրբ Սարգսի․ ուր կը նստի Առաջնորդն ։ Յոյներն աւելի են․ մանաւանդ գեղերը․ որ են

վաւթուն․ որոնց մէջ ցեղ մը կայ, որ Արմէնծի կըս-ւին, բոլորը կէսկէս են․ զի․ ներսէն ամէն քրիստո-նէութեան պարտքը կը կատարեն․ դրսէն այլազգ են, և երբեմն այլազգութիւն ալ կընեն երբոր հար-կադրին․ և որդւոց որդի այսպէս կերթան․ իրենց Իմամն ալ այսպէս է, և ոչ երբէք կը փոխուին։

Յետոյ տակէն կանցնի Սիւլմիշխանայի գետը․ որ փոքր գետին հետ խառնըվելով կերթայ Սիւրմէնէ կը թափի։ Այս գետին երկու կողմն ալ գեղեցիկ պարտէզներ են, մինչև չորս ժամ կերթան․ հարա-ւային կողմը կը հանի Սօուսա պաղչէալին․ իսկ հիւ-սիսայինը մինչև Խոռոզ։ Գետէն կելլէ Սարի պա-լըգ։ Ուր շատ զանազան տեսակ տանձի կայ գլխա-ւորն է Հաճի կանչու արմուտ․ խնձորն ալ շատ ազնիւ է․ որ հեռաւոր տեղեր կը տանին, և մեծ առև-տուր կըլլայ։

Հին ատենը շատ երևելի և բազմամարդ քաղաք էր Տրապիզոն, փառաւոր մարդիկ և փառաւոր շէնքեր ալ շատ կային․ Սուլ․ Ահմէտին ժամանակը տաս-նըութ հազար տուն կար, առաջ շատ աւելի էր․ բայց հիմա հազիւ կէսը կելլէ։ Տիւքիկոս փիլիսո-փայէն օրը շատ երևելի մարդիկ ելեր են՝ ըստ պատ-մութեան Շիրակացւոյն (104)․ Նաև տասնըհինգե-րորդ դարուն ծաղկեցան Հռոմ Գէորգ Տրապիզոն-ցին և Կարդինալ Բէսարիոն։ Գէորգ եղաւ ատե-նադպիր Ե՛ Նիկողայոսի քահանայապետին, որ առաջ դասատու էր Ճարտասանութեան և փիլիսոփայու-թեան։ Նոյնպէս Բէսարիոն էր գիտնական կարդի-նալ․ և շատ իմաստուն գրվածք ունի․ որ իր երևե-լի գրքատունը կտակաւ թողուց Վենետիկի տէրու-թեան։

Այս իմաստուն Կարդինալ առաջ էր արքեպիս-կոպոս Նիկիոյ․ բայց Յովհաննէս Պալէոլոգ կայսրն յունաց զինքը Հռոմ ղրկեց եկեղեցական կարգա-դրութեան համար․ որ գնաց Ֆիորէնցայի ժողովը․ և իր խելացի գործքերուն համար Դ՝ Եւգինէոս հայ-րապետը զինքը անուանեց Պատրիարք Ստամպօլու․ և կարդինալութիւն տուաւ 1439ին․ նաև պետի Հռ-

ռոմայու հայրապետ նստեցնելու. թէ որ չի մեռնիր 1472ին։ Եւրոպացիք կըսեն, թէ այնչափ ուսումնա-սէր, և փառաւոր մարդ էր, որ իր պալատը լեցուն էր գիտուններով, և արժանի է յաւիտենական գո-վեստի։

Սակայն ինչպէս որ այն հին վայելչութիւնն ան-ցեր է Տրապիզոնի. այնպէս բնակչաց բարեկարգու-թիւնն ալ նուազեր է. թէպէտ բնական յարմարու-թիւն ունենալով ուսման, և ամէն բանի՝ երբ օտար տեղ կը կրթըվին, երևելի ուշիմ մարդիկ կ'ելլեն ամէն ազգէ. որպէս էր Շադիր փաշան բարակա-միտ. Մուռիզ պէկէրը. նաև մեր Հայր Յովհաննէս վարդապետը Սարգիսեան. և այլք։

Հաւանական կերևնայ, թէ Պետրոս առաքեալ Անտիոք աթոռը հաստատելէն ետև՝ եկաւ Պոնտոս և մինչև Տրապիզոն քարոզելով լուսաւորեց. ինչպէս կը մակաբերվի Կաթուղիկեաց թղթէն. որ սկիզբը կը դնէ, * 'Ի սփիւռս պոնտացւոց ... և կապա-դովկեցւոց ||։ Տրապիզոնի աշխարհագրական լայնու-թիւնն է . . . 37°. 2'. 5''.
Երկայնութիւնն է 41°. 24'. 5''։

136. ՊՈԼԱԹԱ, վեց մղոն հեռու է Չէօմլէկճիէն. ուր է նաւահանգիստ ամառուան. ունի գեղեր, գետ, և տեղ տեղ հին եկեղեցիներ։ Անոր հօս կուգան Տրապիզոնի նաւերը, և կաղին կը բարձըվին. հոն մօտ է Շահնա գետը, և կաղինը անուանի է. ուր կայ չափաւոր գետ։

137. ՍՈՒՐՄԷՆԷ, տասնըութ մղոն հեռու է վերի-նէէն. որ է պատուական նաւահանգիստ. շատ նաւ կրնար ձմերել հոն ապահով թէ որ մանր որդ չըլ-լար, որ նաւը կապականէ (150)։ Աւերը տեսանք հին եկեղեցի Անյվասիլ. նաև քակված բերդ։ Նոյնպէս սարին վրան ալ կայ հին բերդ և եկեղեցի։ Ուր կան գետեր, և Մահոնա գետ. որ է սահման Օֆին։ Այս կողմն տասուերկու հին եկեղեցի կայ յունաց, և քառասուն տուն հոռոմ. նաև շատ քայքայած հին տե-ղեր տեսանք։ Սուրմէնէի բնակիչներն են աւազա-կաբարոյ. ամէնքը հայէ և հոռմէ դարձած են. հայ-

ները համշէնու եկած են. մինչև հիմա հայերէն է ի-րենց մականունը և լեզուն. կան ծերեր որ գիտեն քրիստոնէութիւն, կը պատուեն խաչը, և ծածուկ ողորմութիւն կուտան ժամերուն: Երբ քանի մի տուն հայ քրիստոնեայ կայ: Հասարակօրէն մաթթու-նովլեց գեղ կայ կըսեն հոս: Բուջի աւանը Բաֆալի է. մօտն է Խամծօլի գետը: Մուրմէնէի եղը շատ անուանի է. որ ընծայ կերթայ մինչև Ստամպօլ. ուր ամէն շաբաթ օր վաճառ (Բազար) կըլլայ. շատ ցո-րեն կը բերեն Բաբերդէն, որ մօտ է. իսկ ասկէ կելլէ մանած, քթան, և գլխն ձկան եղ. որ բոլոր այս կողմերս և լազիստան այս եղը կը գործածեն ճրագի, և մեծ առուտուր կըլլայ:

158. Օֆ, ըստ Տրր". Օֆեա. այսինքն օձ, զի օձի նման պտոյտ են ճամբաները. որ տանըրութ մղոն հեռու է վերինէն. միակարգ և անմատչելի լեռներ են մինչև Բաբերդ, որ կըսվի Չենկէլփորան: Նաւա-հանգիստն է անյարմար, նաև կենալու տեղերն են Սօլաքլը, Օրթա փազար, Խակի փազար, Ռօպէթ: Նշանաւոր է Օֆ տէրէսի, կամ Գալաքօթամա. այս-ինքն լաւ գետ. ըստ Տրր". Գալոս, և Պարա տէ-րէ. ունի քիթ քարոտ Ֆըչէ պուռնի կամ դաշի: Սա-լաքլին առջին տեսանք հին բերդ աշտարակաւոր ծո-վուն մօտ: Որչափ դժուար և պտոյտ է Օֆին ճամ-բաներն որ անհնարին է առանց առաջնորդի ներս մանել, թէև հազարաւոր մարդիկ ըլլան կը մնան անելանելի ճամբաներուն մէջ. ինչպէս եղաւ Հա-ճի ալի փաշային. որ տասը հազար մարդով գնաց բան չի կըցաւ ընելու: Մէջը կան գեղեցիկ դաշտեր և շէնքեր, նաև հին եկեղեցիներ:

Բնակիչներն են հին Խաղտիք խօրամանկ. առաջ ութսուն հազար տուն կը գնէին. բայց այնչափ չի կան. քսան հազար տուն հազիւ կելլէ. որոնք քրիս-տոնէից դարձած են, յունարէն կը խօսին. կան հռ-ոմներ ալ: Այլազգաց մէջ շատ բարակամիտ կար-դացող մարդիկ կան. կախարդական բաներու շատ վարպետ են. հնարագէտ են նաև սուտ խօսելու և ամէն բանի: Արրիանոս ասկէց անցելն Աղջիա կը-

նէ. տադէն Թէսանէր։ Եփրոր ալլարդը հոս հասեր է, իրենց իրեք բան առաջարկեր է. կամ ոսկ, կամ հաւատք, և կամ տուրք։ Օֆցիք հաւատքին ընդունէր են, այս միջոցով որ երեսմանց միայն ազատութիւն ընկեն. բայց հիմա շատ հաստատ կարգացող են։ Սոնոր համար քիչ տարբեր կռուած Մեծատէ հնդկերէն անուամբ։ Ասինչափ առելութիւն սիրող մարդիկ են, որ որդւոց որդի կը տեւէ իրենց Թշնամութիւնը. շատ մարդ կայ որ կը ծերանայ՝ դրնէն դուրս չելլէր. ելածին մէջ՝ իրար սպան զարնեն. միայն իրենց կնիկները կերթան կաշխատին։

Սակայն դրսէն Թշնամի եկածին պէս ամէնը մէկ կըլլան կը ծեծկըվին եղբօր պէս. եւ երբ կուգան անտերնին կը փակվին գիւղեր ցորեկ կըսպասեն որ իրար զարնեն։ Ասոր է երիկ վիմանի։

139. ԲՐՈՒԶԷ, բաժ Հն. Սանտոս, փոքր քաղաք՝ քառաւերկու միղոն անդին է Օֆէն. որ է խաղողի կամ լավ զինատան։ Ասոր նաւահանգիստ և հին բերդ լեռան վրա՝ տուն և խանութ։ Սաւաջ ամէն հայեր շատ կային, որ Բոզի Թաղը կը նստէին. ունէին փառաւոր եկեղեցի, ուր Ճաշոց մի գրեր են. որ մայրաքաղաք կանուանէ այս քաղաքը։

Գետը Մըսըսիս կը կոչէ Սարխանա. կերևնայ Թէ առաջ հոն բրինձ կը ցանէին, որ Մըրեզի ըսվեցաւ։ Մե երեք միղոն անդին է Սակարող երևելի գետն, ուր փոքր նաւեր կը մտնեն։ Հինեւն Սպատրօս գետ կըսեն, և Սփրա քաղաք կը ժըշեն հոս։ Պեղեցիկ են հոն բաւաստանք լեմնի և նարինջի։ Սաև քԹանը շատ ազնիւ և բարակ է, որ ամէն աշխարհ կերԹայ, և ամէն տեղ անուանի է։ Տեղացի այլազգիները ուրեւորդու պաշտօն ըլլալով այնչափ կը վախնան գիւղէն, կամ փէրինէն. որ ամէնուն գիշերը դուրս չեն ելլեր. երեկուան եղածին մէջ ամէն մարդ ստանալով ներս կը քաշվի։ Երևելի էր Մեծաշէն պալատը Պուլղարի օղլուին. որ էր կուսակալ լավքատամնաւ այնչափ զօրաւոր, որ խեղ Թագաւոր կը տիրէր. մէր օրը գլխատվեցաւ։ Մըրեզէ ունի շատ գեղեր և պատուական երկիր։

Երկու ժամ վերը Սաս քեցյին լեռանը վրան ծակ

քար կայ. անդանօր պատմեցին թէ առաջ նաւերը հոն կը կապէին եղեր։ Մերը հին եկեղեցի կայ, որ ժամի ըրած են։ Պօլէմոնիք մօտ է Իւնիէյէի. իսկ Մա-բաւըրի աւանն անդին է. ուր կայ բնակութիւն լա-զերու, նաև գետ և հին եկեղեցի։ Օլունու մօտե-րը հին աւերակէն մնացած բարձր աշտարակներ կան քառակուսի հաստատ դրներով։ Աւազակներն ա-ռաջ խոծադայ նաւակներով կուգան կը կոխեն եղեր այս կողմերս մինչև Տրապիզոն. անոնց դէմ շինուեր են Օսմանցուն ատենը։

140. ՌԻԶԷ, ինը մղոն հեռու է վէրինէն, որ է ծակ ապառաժ ծովուն մէջ. որուն մէջէն փոքր նաւ-ւեր կանցնին. ուր կայ փոքր քիթ։ Հոս է Տրապի-զոնի նահանգին սահմանագլուխն, որ կը հասնի Պաթլամա բերդն (91). և հիմա հոս կը դնեն բուն Լազիստանու սահմանը։

Այս կողմի բնակիչներուն համար այսպէս կըսէ Ռեւաթիոս չէլէպին, թէ բոլոր մեծի մասին Լէզկիք են. որ համարակօրէն Լազ կըսուին. և կուգան հին Սոզքիացոցմէ. այս պատճառաւ բոլոր աշխարհը Սոզ-քիոն կըսուէր և գաւառը՝ Խաղտիք. սակայն բուն Լէզկիք Կովկասու լեռներն են. իսկ Լազերը ծովե-զերքն են. որոնց լեզուն և սովորութիւնը շատ տար-բեր է. թէպէտ կը ջանան, որ այլազգ երևնան։

Լազիստան է լեռնային. Տրապիզոնէ սկսեալ մին-չև Վրաստան են բարձր մեծամեծ լեռներ. ուսկից կուգէ թել, մեղրամոմ, մեղր, կոզի, պանիր, ընձան, նարինջ, և ձէթ ձկան։ Բայց այս կողմն տեսակ մի մեղր կայ, որ կըսեն Տէլի պալ. զի ուտողը կը գի-նովնայ և կը ցնորի խելքը, ինչպէս կը պատմէ նաև Քսենոփոն. որուն զօրքն անզգուշութեամբ կերան Տրապիզոնի նոյն մեղրէն գինովցան, քանի չօրս ժա-մէն ետև խելքերնին գլուխնին եկաւ։

141. ՍՕՂՈՒԳՍՈՒ. յն. Փոխիոս. այսինքն պաղ-ջուր, երկուքն մղոն հեռու է Ռիզէէն. և ունի լաւ նաւահանգիստ. գետ և բերդ։ Սօղուգսուի սարին դիմացը ծովուն մէջ կայ կղզի մըն քառակուսի աշ-տարակ Ջէնովիզէն մնացած. որ կըսուի Գըզ գալէսի։

որ ազնուական աղջիկ մը շինել տուեր է կըսեն ։

142. ԱԹԻՆԱ, վերջ մըզոն հեռու է. ունի փոքր նաւահանգիստ և բնակութիւն. ուր կայ պղնձէ դուռ մը հին ժամանակէն մնացած. թուի թէ կատարեալ դուռն է. զի հոս էր հին տաճար Աթենաս չաստուածուհւոյն կատարունը ։ Արգոնաւորդք երբոր հոս հասան՝ շուլերցին Աթենաս քաղաքին անուամբը կոչելու, Աթենաս կամ ըստ ոմանց Ադրիանոս բերին այս անունին ։ Բնակիչներն են լազ, կամ կողքիսայի. որ աւուրտուրի ճարպիկ մարդիկ են, և գերիի առևտուր կընեն ։ Այս կողմն կան նաև քրիստոնէութենէ մնացած բաներ, մատուռներ և փլած տեղեր ։

143. ԼԱԶԿԻ ՏՐԱՊԻԶՈՆ, մօտ է վերինին. որ է պատուական տեղ մը, և բոլոր ստուգանի նման քաղաքատակ. որ հեռուէն բերդի կը նմանի կլոր ձևով։

Կը պատմեն թէ նախ հոս են որոշեր շինելու Տրապիզոնի բերդը, բայց տեսնելով թէ օդը լաւ չէ՝ ձգեր են ։ Այլազգիք աւանդութիւն ունին, թէ վարպետները բանած ատեննին զիրենք Տրապիզոն դրան, և հոն դրին հիմը ։

Փութթունա տէրէսին քովէն կանցնի, որ մեծ ձայնով և բռնութեամբ ծովը կը թափի, ուր Արբիանոս երկու գետ կը դնէ Պաղատիա և Ռուխոսանիս ։

144. ՀԱՄՇԷՆ, կամ Համամշէն, օրուան ճամբայ վերն է Պարխալ լեռան քով, զանազան գեղեր են. ուր կայ հին վանք. որուն մէջ գտան չափազանց մեծ խաչկին, և զարմանալի ճանապարհ, որ լեռնէն փորած մինչև Փութթունա գետը կը հասնի ։ Ուր կայ Սըզմիտի գետ, և Խյաչեփանայ գետ. ունի մեծամեծ անտառներ հայոց թագաւորներուն ժամանակէն մնացած՝ շատ տեսակ ծառերով և բոյսերով լեցուն հանդերձ հայու անուններով. ուր կըլլայ հատ տոսախ. բնակիչները տարւէ տարի երկուհազար հօխա մեղրէն մոմ կուտան թագաւորին. ուր շատ մոմ կըլլայ ։ Գլխաւոր աւանը կըսուի Պազ համշէն. որուն մէջէն գետ կանցնի, և լեռան գլուխը փոքր բերդ կայ ։ Այս լեռան վրայ սաստիկ ձիւն կուգայ. երբեմն ճամբորդները չեն կրնար անցնիլ, կը թաղեն զիրենք

ձեռանը մէջ և օրհնեալ ջուր կը ծախեն, զի սուրբ է ձիւնին տակը. որոնք յետոյ անմիտս կ'ելլեն:

Իյաչիքեար վանքը մեծ ուխտատեղի է Հայոց և այլ ազգաց. այս վանքին քով գտնուի մեծ զանգակ մը. ուր կայ մեծ գերեզման արջառ, վրան գրուած է թէ այս արջ հաւատարիմ ծառայութիւն ըրեր է վանքին տասներկու տարի. Հայ և տաճիկ վրան ուխտ կ'երթան մինչև հիմա անմոռութեամբ, և սատկած օրը վրան կ'երթան աղօթք կ'ընեն: Հաճընցիք կէս կէս են. շատը դարձած են. բայց քրիստոնէութեան սովորութիւնք կը պահեն ժամուց և ողորմութիւնը պակաս չեն ըներ. գրեթէ ամէնքը վարդապետին և վերափոխման կ'երթան եկեղեցին մոմ կը վառեն և մատաղ կ'ընեն իրենց պապերուն հոգուն համար. բոլորը հայերէն կը խօսին: Ասոնց մէկ մասը Իւրուշունլի և Միւրմէնէ գնացին. Իւրուշունլի գնացողները քրիստոնեայ մնացին (82): Պէտուինին տակէն գտան հին տաճիկ դէնքեր, և շատ մոմ: Այս տեղս Հայոց Համամ իշխանն է շիներ, որ շատ երևելի գաւառ էր հին ատենը. ինչպէս շէնքերէն յայտնի է. և կ'ըսուէր Տամէրա:

Ասնի հին բերդ ապառաժի վրա շինած, որ կ'ըսուի Օնչայի. մէջը կայ զարմանալի կամարաւոր շէնքեր հին ատենէն մնացած, և մեծ աշտարակ. վարի ծայրը կը համնի մինչև Ֆրաթուսա գետը. ուր կան ուրիշ բերդեր, հին եկեղեցիներ, և մատուռներ լեռներուն վրա. նաև փլած տեղեր:

145. ԼԱՐՕՋ, կամ Արօճ, վեց ժամ անդին է Աթինայէն. ունի փոքր նաւահանգիստ և քիթ: Աստ է հին Ճէնլէ, որ ունի գետ. նաև Պուլէյա կամ Պուլէյա, և Կասիխրա, որ պզտի տեղեր են փոքր նաւեր կենալու: Արքխանա հոս կը գտնէ Բերիդանիա գետն. որուն մօտ էր Անդխալոսի պալատը (148):

Հոս գետին բերանը երկու ցամաք կղզի ըլլալով երեք կը բաժնուի. աջին Թեք Մաստավ հին բերդը կերթայ, և վեր երթալով Սրէբոս բերդին քով կը միանան գետին բերանները, ինչպէս կերևնայ աշ-խարհացուցին վրայ :

196. ՍԻՐՄԱՆ ԳԱԼԻ, կամ Չերքեզ քիրմանի՝ աւե-րակ վերին է. տես վարը (198): Հիւսիսային կողմն առ-կայ դիմացը Սիրման կամ Սրճէբոս, որ բերդ եղել է, Թաթարներուն ժամանակէն շինված են, և խա-ղաղները կը բնակին հանդերձ ուրիշ ազգերով:

197. ՏՕՆ, կամ Տանայիս, ըստ ազ. Թանէն [illegible], երևե-լի մեծ գետ՝ կը բաժնէ Ասիա Եւրոպայէն. գլ առ-կէց մինչև Տեղոս գետին եզերքն՝ է Ասիա: Այս գետ կելլէ Իվան օզէրօ լճէն Ռուսաստանու, և հիւ-սիսէն հարաւ, նաև արևելք երթալով վեց գետք հետ

կը միանայ ; և շատ պտոյտ ընելով երեք բերան կը բաժնըվի և կը վազէ Ազախու ծովը. Ջուրն է պղըտոր և անշահ. բայց շատ ձուկ կը բերէ, մանաւանդ մեծամեծ մուրաննաներ, որ կը բռնեն խազախները : Տօնաւիս գետոյն աշխարհագրական լայնութիւն է 47°. 5'.
Երկայնութիւնն է . . . . 39°. 40':

198. ՉԵՐՔԵԶ ՔԻՐՄԱՆ. այսինքն չէրքէզի բերդ, է գլխաւոր քաղաք խազախաց, Տօն գետոյն վրա շինած է մէջը. որ երբ կը բարձրանայ ամէն գին ջուր կը կոխէ. ուր շատ վաճառականութիւն կըլլայ, ութը հազար տնէն աւելի կայ : Ասկեց ելան թաթարք ու շինեցին Նոր Քիրման, և շատ տեղ տարածվեցան :

Այս քաղաք է աթոռ խազախներուն Ատամանին. ուր կը պահեն իրենց զէնքը, և ամէն պատերազմական բաները. ուր կայ վեց եկեղեցի : Բայց Տօնաւիս գետոյն քովի բնակիչները կըսվին Տօնաւուեան խազախ. որ են Մոսկովի ազգէն, ինչպէս իրենց բարքը լեզուն և կրօնը կերևցնէ. վասն զի առաջ ինքնագլուխ ըլլալով զատվեր են Մոսկովստանէն, և եկեր են այս կողմերս՝ խազախ թաթարներուն երկիրներն առեր տիրեր են առպատակութեամբ. և անոնց հետ խառնըվելով Խազախ ըսվեցան իբր զատ ազգ. և որովհետև խազախ թաթարներէն յափշտակելով աղջիկ կառնէին՝ իրենց դէմքն ալ թաթարի նման է, և շատ դիմացկուն և պինդգլուխ մարդիկ են. երբոր մօրքերնին բան մի դնեն՝ կտոր կտոր ըլլան իրենց խօսքը պիտի ընեն. գողութիւնն ու աւազակութիւնն իրենց մէջ քաջութիւն կը սեպվի. և շատ վարպետ են, ինչպէս տեսանք : Գրեթէ ամէնքը մօրուքաւոր են : Իրենց երկիրն է ընդարձակ. մէկ ծայրը կերթայ Տնեպէր. առաջ խիստ շատ էր. ունին իբր հարիւր յիսուն փոքր քաղաք, որ Ստօղօփ կըսեն. և իրենց իշխանը կըսվի Ատաման, իսկ սպարապետը կամ կոմսը Հէթման կըսվի : Որոնք հիմա Մոսկովի տակն են, և զանազան ցեղ կը բաժնըվին. զորօրինակ Սեպերեան խազախ, Թէրքեան խազախ, Եկէպէնեան խազախ, և այլն :

199. ՆԱԽԻՋԵՒԱՆ, ինը մղոն վարն է Քիրմա-

նէն, որ Քէֆէի կամ Խրիմու հայերը շինեցին լե-ռան վրայ 1780 ին. ուր կան 2300՝ տուն հայոց, և վեց եկեղեցի. գլխաւորն է հրապարակին մէջ անուամբ սուրբ Լուսաւորչին. ունի վանք անուամբ սուրբ Խաչ, նաև դպրատուններ: Առաջ այս տեղս կըսվէր Դիմիտրիէֆսքի ամրոց. որ բերդ ըսել է: Ունի զանազան գետեր. և շատ երկիր ավար Ռոստովը սահման այս քաղաքին: Որովհետև Խրիմ առնըվելէն ետև մեր կողմնանի մէջ նախ հոս եղաւ Խրիմէնց բնակութիւնը՝ Նախիջևան անուանեցին հին Նախիջևանին յիշատակ ըլլալու համար: Սակայն օդը ծանր ըլլալով շատ մարդ մեռան. հիմա աղէկ ծաղկած է: Մօտն է Աքլօպօտա, այսինքն Նոր գեղ. և ինը մղոն վերն է Ազօվայ սամանը, ուր կը բնակին զանազան ազգեր:

200. ԱԶՕՎ, ամուր բերդ է Տօն գետին աջին թևին վրայ հիւսիսի կողմը. բայց մոսկովները 1696 ին քակեցին. նոյնպէս Թուրքերը բերդն ալ քանդեցին, որ Պետրոս Թագաւորն էր շիներ. բայց յետոյ նորէն շինեցին, և հիմա լաւ զարդարած է:

201. Թայղան, կամ Թաղանրօգ քաղաք, ազախու ծովուն երևելի նաւահանգիստ և վաճառատեղին է. երկու հազար տուն կայ յորս մոսկով խառն. ուր կայ գործարան մոսկովի նաւերուն, և է նաւատեղի Նախիջևանու, և այլ ցամաքի քաղաքներուն: Ասկից կելլէ երկաթ, ձուկ, խաւեար, և այլն:

202. ՊԷԿԼԻՉԿԱ, կամ Պորքէյա քիթ՝ Թայղանէն վար է. առաջին ծանծաղ և սուպէ քիթ ըլլալով նաւե-շանի լաւ բացեր են հոն. և գետ կը վազէ մօտը, որ կըսուի Փէթրուշքա:

203. ՄԱՐԻՕՊՕԼ, կամ Մարիամպօլիս, է փոքր քաղաք յունաց և մոսկովաց. ուր շատ վաճառականութիւն կըլլայ. ունի քիթ, որ ոմանք Բէրէս գայա կանուանեն: Այս տեղս վաթսունըութ մղոն հեռու է Թայղանէն և գեղեցիկ քաղաք է:

204. ՊԱԼԷՑՏՐԱ, հարիւր յիսուն մղոն հեռու է Թայղանէն, որ է խոր ծոց. բերանը Փէնեա դրաւ մոսկովը նաւերու համար: Այս կողմն արևմտեան դին ցամաք լեզու կայ ծովուն մէջ, որ կըսուի Պէտ-

[illegible], կամ [illegible] ։ [illegible] ։

205. [illegible] ։

206. [illegible] ։

207. [illegible] ։

208. [illegible] (228) ։ [illegible] ։

209. [illegible]

ղոյ. Բերդն է քարաշէն և զօրաւոր՝ պարանոցին բերանը շինած. որ Մոսկովը չորս անգամ առաւ. Իրեք անգամ ետ տուաւ, վերջին անգամ մնաց ձեռքը. Պարանոցին մօտն է նեղ, որ կըսկըսի Մեռեալ ծովուն վերի ականջէն, և կը հասնի մինչև միւս կողմը բերդին. և այս պարանոցով Ղրիմ կըլլայ ցամաքակղզի։ Պարանոցին երկայնութիւնն Մեռեալ ծովուն վերի ականջէն գնելով կըլլայ իբր տասներկու մղոն. բայց բերդին քով իրեք մղոն կըլլայ հողին լայնութիւնը։

Իսկ բերդին առաջը խոր և լայն խրամ բացած է, որ կը հասնի մէկ կողմէն Սասըխ ծովը. մէկալ կողմէն Մեռեալ ծովը, և պարապով ամրցած է։ Միջոց տեղն է կամուրջ քարաշէն խրամին վրայ, մէջ տեղը փայտաշէն, որ կը վերցընեն. քովը հին բերդ, նաև աշտարակներ կան պատուարին ամրութեանը համար. Մէջը կայ քառակուսի աշտարակ մը մեծ, որուն մէջէն դռնէն ճամբայ կայ, որ քաղաքը կերթէ։

210. Ա՛րդ՝ ազախու ծովուն արևմտեան կողմն է Սասըխ ծովը և Օռ գափուն. վասն զի Սասըխին մէկ ծայրն է Օռին քով, մէկալ ծայրը Արաբատ, որ ծուռ ձևով դառնալով՝ հարաւային կողմն Քէֆէին կը մօտենայ իբր երեսուներեք մղոն հեռու ցամաքի ճամբայով։ Տես աշխարհացուցին վրայ։

211. Ա՛ՐԱԲԱՏ բերդ՝ Ճէնիչէի երկայն լեզուին միւս ծայրը շինած է. ուսկից կըսկըսի նոյն ցամաք լեզուն և կը հասնի դիմացի ցամաքը, որ բոլոր աւազ է. տեղ տեղ լիճ կայ, որ ամառը աղ կըլլայ։

212. ԳԱԶԱՆ ՏԻՊԻ, երևելի քիթ է Արաբատէն առջին, և ունի բերան կամ գօգ՝ իբր նաւահանգիստ, ուր նաւ կը կենայ. առաջ քաղաք կար հոս։

213. Ա՛ՑԱՆԷ, կամ Ա՛Կընէր պուռնի; քառասուն մղոն առջինէ Արաբատէն. անկէ կուգայ արևմտեան կողմէն նորէն Սօզօրու կամ Սուտղլէթի բերանին, որով կը լմննայ ազախու ծովուն շրջանը. որ Տանայիս գետէն սկսեալ մինչև հոս իբր 532 մղոն է. իսկ նաւու ընթացքով առանց եզերքը մօտենալու պակաս կըլլայ։ Արրիանոս 9000 ստադի կը դնէ բոլոր շրջապատը Ազախու՝ Թերևս անոր ծոցերը համրելով։ Ա՛շ-

խարհագիրները կը դնեն երկայն 100 փարսախ. լայն 25. և շրջապատն 700 մղոն. որ չէ [illegible]դ.

214. ՄԻՆՈՐ ԿՂԶԻ, կամ Մենօրգ, է [illegible]րուաւոր երրդ. Սպանիոյ բերդերին արեւմտեան կողմն զանազանեցին շի-նած 'ի Հիւս. 1114ին: Մաւոնն է նաւահանգիստ. բայց շատ ծանծաղ ըլլալուն համար բեռնաւոր նաւ ներս չի կրնայ մտնել, մինչև որ չի թեթևնայ: [illegible] իրեք մղոն հեռուցին ներսն է. ուր կայ հին բերդ և եկեղեցի. առաջ չէին աւերք էին:

215. ՍԻՐԱ, կամ Սիրոս. ըստ յն. Պատինէծ, կամ Փոքր ունգանէծի քաղաք, երբ մղոն հեռու է մերձինեն բարձր պարապով լեռան կողը շինած է. բնակիչներն են ամէն ազգէ և իրեք հարիւր տուն կեղլեն: Շատ զո-րաւոր և հաստատ է բերդն արեւելեան կողմն եօթն աշտարակով. ունկից կանգնեցին Տ. Հազր դասող Եկող նաւերը (186): Այս բառ հայոց կերպ անուանեալ ե-լած է. որ կը նշանակէ նեղ անցք. զի հոն ցամաք լեզուն նեղցուցեր է անցքը: Քով տասը մղոն առաջին է Պօտիկշ պուանի. որ երևելի տեղ չէ, բայց կան անշուք տներ: Կարելի թէ պատմած հին Թագաւո-րանիստ քաղաքն այս կողմերն էր, որ յիշեցինք (29):

216. ԹԱԳԼԻԹ ՊՈՒՌՆԻ, բերանն է նեղուցին, և է երկայնութիւն նեղուցին. որ ամենքը տասնըութ ժամու հեռու կը դնեն Սյանէէն. բայց ճիշդ չա-փած չէ. այս քիթ Թամանին դիմացն ըլլալով բուն Թագլիթին բերանն է Խրիմու կողմէն. ունի նաւա-հանգիստ, բայց ծովուն մէջ քար կայ: Երը մղոն առ-ջին է Ճաձիլար լիմանի, որ է սև ծովուն վրայ: Սևե-լի առջին է Արէտէն գայն. որ է ապառաժ կղզի իրեք մղոն ներս ծովուն մէջ: Նորին ուրիշ քար կայ Իմամ գայ. ուր կայ Սէւէրոս, այսինքն աղեհամ Խրիմու ցամաքին մէջ, որ Օդասարին կը քաշանայ:

217. ՃԵՆԱՎԻԹԱ ՊՈՒՌՆԻ, կամ Թաղուխա, քառա-սունևերկու մղոն դէպ 'ի արևմուտք է, տասը գոգին մէջըն է Քէֆէ: Երբեմն այս տեղերս աւրած դաստ. ուր առաջ երևելի քաղաք կար, որ Ջենովա-ցիները շիներ էին կըսէ: Հոս կը դնէ Պտղեմէոս քաղաքը:

Սրդ՝ ազատու ծովուն, և տօնաւոր գետին բոլոր-

տեղն եղած աշխարհներն սկսեալ ապազայէն մինչև դունա՝ կըսվին ընդհանուր անուամբ Սարմատիա, որ է Թաթարաստան. զի յունական բառս Սարմատ՝ մողէսակն ըսել է, որ է փոքրակն. զի թաթարներուն աչքը մանր է, երեսը բոլոր, և քիթը տափակ. նաև այնչափ ընդարձակ ազգ է, որ մեծ Թաթարին ծայրը մինչև Չինումաչին կը հասնի։

Փոքր Նօղայ կըսվին անոնք, որ կը բնակին Խրիմու կողմերը. ոմանք վրանաբնակ ըլլալով տեղէ տեղ կը շրջին դաշտերուն կամ անապատին մէջ. և ոմանք գեղերը և քաղաքները կը բնակին. որ չորս ցեղ կը բաժնըվին. Պուճաղ Թաթար. Օզու Թաթար. Պըրըմ Թաթար, կամ Պուազան Թաթար. Նօղայի Թաթար. ինչպէս իւրաքանչիւրն իր տեղը կը պատմենք. որոնք ամէնը շատ աշխատաւոր և առողջ մարդիկ են. բոլորը խաշնարած և երկրագործ են։

218. ԽՐԻՄ, ըստ տճ. Գրըմ, և ըստ յն. Դաւրիքօս. հին ժամանակը կըսվէր Տաւրիկեան ցամաքակղզի. և ծովը կըսվէր Սկիւթացոց ծով. ուր արևմտեան և հարաւային կողմէն Սև ծով պատած է Խրիմու կղզին, արևելեան կողմէն Ազախու ծովն է պատած. իսկ հիւսիսային կողմէն մնացեալ և հատած ծովերն են պատած. ուստի Խրիմ միայն Օռին պարանոցով փակած է մոսկովստանու ցամաքին. ինչպէս կերևնայ աշխարհացուցին վրայ։ Ուր կան քանի մի միջակ գետեր. զորօրինակ Պարսուս, Խայչէ սու, Ալմա, և այլն. նմանապէս կան և լեռներ. ինչպէս են՝ Ալա տաղ, Ալըս տաղ, Չատըր տաղ, Պապա տաղ, Աղրըճը տաղ. այս վերջի լեռան ծայրը խոր և մեծ վիհ կայ։ Խրիմու սարերն և նաւահանգիստներն իրենց տեղը կը պատմենք համառօտ. զի հիմա շատ տեղը քանդած է, քիչ քիչ կը շէննայ։

Խրիմու կը տիրէին առաջ սկիւթացի Թաթարները. իսկ Տօնաւիս գետէն մինչև Կովկասու լեռը վօսբորոսեան յունաց ձեռքն էր. որոնք շատ նեղութիւն քաշելով Թաթարներէն մտան Միհրդատին տակը. յետոյ յոյն թագաւորները տիրեցին. վերջը Ճինիվիզներուն անցաւ։ Ապա յամի 1471. առին Օսման-

ցիք և դրին Թաթար խան կառավարիչ։ Յամի 1698. Մոսկովցիները կոխեցին Օզին բերդն առին նորէն առին. անկէ ետև շատ անգամ ելան Խրիմու վրան։ Վերջա-պէս Ռուսին կնիկ խանն հանդէսով ավառ Խրիմու կղզին Մոսկովի Թագաւորուհին 1779ին. ապր. 21. մինչ դեռ Միրզաները և գլխաւորները երդում ըրին, որ հնազանդ և հաւատարիմ մնան Մոսկովի Թագա-ւորին. և ով ամենէն ետև Օսմանեան տէրու-թիւնն ալ տիրեցաւ ընդունելու. և այսպէս մինչև ցայսօր մնաց Մոսկովներուն ձեռքը։

Թաթար խանը կ'ընտրէր Ս. Սէյիդ խան. այսինքն դե-րագոյն տէր, և կը նստէր Պաղչէ սէրայ գլխաւոր քաղաքը. բայց ՚ի զանազան իշխանութիւններէն իրեք իշխա-նաւորներ ունէր. որ խանին տունէն ցեղէն ըլլալով կը-մէջին Խալդղա. առջի գլխաւորը կը նստէր Ագմէ-ջիդ, և կ'ըսուէր Գալղա սուլթան, որ երկրորդն էր խա-նին. երկրորդը կը նստէր Պարասու, որ կ'ըսուէր Նուրատտին սուլթան. երրորդը կը նստէր Օր, և կ'ըս-ուէր Օռպէյի սուլթան. և այս կարգերուն անցնելէն ե-տև կ'ըլլային խան։

Միրզաներն էին իշխանական ցեղէն խանին. որոնք թէպէտ իշխանաւոր էին, բայց խան չէին կրնար ըլ-լալ։ Իսկ խանզադեները արդարութեան ժամանակը Չէրքէզ կը ղրկէին որ կրթըլին. և երբ չափահաս կ'ըլլային կու գային խանին (182)։

Օսմանեան Թագաւորը շատ պատիւ կ'ընէր խա-ներուն՝ Թագաւոր անուանելով զանոնք. երբոր պա-տերազմ կ'ընէինք ուրիշին հետ՝ կը ղրկէր խանին քառասուն հազար ոսկի և զարդարած թուր. իսկ խա-նը կը պարտաւորէր օգնութիւն երթալու Թագաւո-րին, մինչև երբեմն հարիւր հազար զօրքով։

Խրիմու կղզին չորս երևելի քաղաք կայ, ծովէն ներս. առաջինն էր Պաղչէսէրայ. ըստ հն. Նաղարա-րիա. ուր իբր մայրաքաղաք կը նստէր խանը. և շատ երևելի շէնքեր ջամիներ և պալատներ կային. որ ըստ ոմանց Միհրդատ շիներ էր։ Երկրորդն էր Ագ-մէջիդ. այսինքն Սպիտակ ջամի. ուր կը բնակէր անդ-րանիկ որդին խանին։ Երրորդը Գարասու, կամ

Պուրաղալար․ որ էր մեծ քաղաք բաղմամարդ․ քովէն գետը կանցնի, և հիմա է քաղաք և բնակութիւն ամէն ազգաց։ Ուր շատ տուն կայ մեր ազգէն և ունին եկեղեցիներ։

Չորրորդն էր Լիւկէ գիրմ, առաջ երևելի էր․ հիմա անշուք է։ Լիւկէ ծաղկեղէնաց մայրաքաղաքն էր Մէֆէ, Սատալ, և այլն․ որ կարգաւ իրենց տեղը կը պատմենք, թէպէտ ապա շինութիւնը չէ կայ։

Ե.րդ՝ Խրիմիա կղզին մէջ ամէն քաղաք մեր ազգէն կան և վաճառականութիւն կընեն Պոնտոսի և Ս՛ուկաֆտասիա․ հիմա․ բոլորն ալ ռուսաց շատ ձարպիկ են, և ամէն տեղ բնակութիւն ունին։ Թաթարին ժամանակը շատ երևելի վաճառականներ, և փառքթեամբ մեծագին կայրին․ հիմա ցրուած են Լեհաստան կողմը և Ռուսիոյ մէջ, ուր քանի մի քաղաքներ շինեցին․ ինչպէս է Նախիջևան, Գրիգորիոպօլիս, և այլն։ Տես իրենց տեղը։

Զ. ՄՐԱՍ՛Ն ՍԵՒ ԾՈՎՈՒ.

219. Քէֆէ, կամ Քաֆֆա, եօթանասուն մղոն հեռու է Թապլիթէն, տասնըութ Ճնավէդայէն. և է մայրաքաղաք Խըրիմու կղզիին, երկայնաձև շինած ծովուն քով։ Ասոր շատ երևելի բերդաքաղաք էր բազմամարդ. երկու ծայրը նաւահանգստին երկու բերդ ունէր կըրկնապարիսպ, որ կըսուէր Թէոդոսիա Թէոդոս կայսեր անուամբ. որոնք հինգերորդ դարուն տիրեցին։ Իսկ Թաթարները Քաֆֆա կըսեն, քրիստոնեից Քեաֆէր անուն տալով. որ արապերէն անհաւատ ըսել է։ Այս հին քաղաք շինած էր արևելեան կողմն Խրիմու, նաւահանգիստն է մեծ, բայց շատ խոր չէ. և ոչ հարաւային հովէն ապահով։

Հին ատենը հոն էր Արտեմեայ կռատունը. շատ զոհեր կընէին. ուր օրէնք կար թէ՝ ով որ օտարական հոն երթայ նաւով, այս կուռքին զոհ կընէին. նշան է թէ բազմամարդ ըլլալով ամէն բան կար, դուրսէն բանի կարօտութիւն չունէին։ Թաթարներուն ժամանակը միայն երսուն հազար գերի կար, որ կը ծառայէին գեղերը. նաև հազար երկու հարիւր հայու տուն կար. ունէին ժամ և ժամատուն. ինչպէս տեսանք հոն գրված յիշատակարաններէն. քսանըչորս եկեղեցի ունէին քարաշէն. գլխաւորներն էին Սուրբ սարգիս մայր եկեղեցի, Սուրբ յարութիւն, Աստուածածին, Լուսաւորիչ, Հրեշտակապետ, և այլն։ Ասոր նահատակեցաւ իբր երկուհարիւր յիսուն տարի առաջ Պարոն Լոյս իշխանն. մեր. ինչպէս կը պատմէ Վրթանէս վարդապետ. * Այս ձեռօքս գըրուեցի, ու՞ր գերեզման հանգուցի ||։

Յոյնք ունէին տասնըութ եկեղեցի. նոյնպէս Ճինովլիզներն երկու հարիւր տարի տիրելով շատ երևելի շէնքեր, և ութ քարաշէն եկեղեցիներ շիներ էին ժամանակով. հիմա բոլորը քանդած են. քաղաքին մէջն է խորունկ գուբը. ուր կը հաւաքի անձ

քէի ջուրն, որ կը խմեն բնակիչները: Առաջ ամէն բան առատ էր, մինչև կըսուէր շտեմարան յունաց. հիմա կերևի ցորեն, եղ, երկաթ, ձուկ, կաշի, խաւեար, և այլն. որ կուգայ Ազախէն:

Ըստ Հերոդոտոսի նախ յոյնք կը բնակէին այս կողմը, որ վաճառականութիւն կընէին տրապիզոնացոց հետ, և ինքնագլուխ էին. յետոյ Սկիւթացի թաթարներէն շատ նեղութիւն քաշելով Միհրդատին ընկան, որ նուաճման մի ղրկեց Կէֆէի կողմն, ու տիրեց մինչև Պռաղան տիրոջ. ուսկից ամէն տարի կը հանէր եօթըհարիւր քսան հազար քառ ցորեն և երկու հարիւր հազար ունկի արծաթ, և անով շինեց Եւպատորիա քաղաքը. նաև մինչև կովկասու լեռները միացուց իր տէրութեան հետ:

Միհրդատէն ետև անցաւ Հռոմայեցոց, և յայն կայսերաց. որոնք անհոգ ըլլալով՝ թաթարներն եկան կոխեցին քանդեցին: Յետոյ ձենովիզներն առին Կէֆէ և այնչափ վաճառականութեամբ ծաղկեցուցին, որ նման էր Աստամպօլու: Անոնցմէ ալ առին վէնէտիկցիք 1297ին. յետոյ նորէն առին:

Իսկ 1474ին առաւ Սուլ. Մէհէմմէտ թաթար զօրքով. որ հպատակ էին Պաթու խանին ձենկիզխանին պզտի որդուն: Ուստի այս տէրութիւն միացաւ Պռաղան թաթարին հետ մինչև Տէվլէթկիրա խանն. իսկ 1779ին անցաւ Մոսկովներուն, որ քանդեցին Կէֆէի բերդը և աւրեցին այն երևելի մայրաքաղաքին վայելչութիւնը, ուր այնչափ փառաւոր շէնքեր կային. հիմա քիչ քիչ կը շինեն միակարգ ծովեզերաց վրան. բայց բնակիչ քիչ կայ, մանաւանդ մեր ազգէն. որ բոլորը վաճառական են ղոնատոսի, և ուրիշ տեղաց:

Կէֆէի աշխարհագրական լայնութիւնն է 44°. 45':
Երկայնութիւնն է . . . . 53°. 41':

220. ՍԻՒԿԱԹԼԱՄԱՍԻ, կամ Եղնիկալէն, է արևմտեան քիթ Կէֆէի նաւահանգստին. որ թէպէտ արևմտեան և հիւսիսային հովէն ապահով է. բայց հարաւային և արևելեան հովէն ապահով չէ շատ: Եթլմիքըց քարը շատ հեռու չէ. ուր երկու գետ կը

վայրէ. անունն է Ս՛ենեկալու քիթը։

221. ՄՈԳԱՏՈՐ, երրորդերեց մեծն անունն է Աֆրի-
կէին. ունի նաւահանգիստ, և բարեբեր տեղ է.
առաջ շատ չէին էր, հիմա այնչափ չէ։ Անոր քաղաքն
առըրբեցին եւուն հայերը նաւու հոս բնակեցան. Այս
այսպիսի յիշատակագրաց ձեւերը մի մէջ. * Արտաքսեցաւ
'ի [illegible] հայոց [illegible] հարիւր և կէսերորդ [illegible]
[illegible], որ օր [illegible] անունն, 'ի հայրապետութեան օրեան
Ս՛ուլթանոյ. յետ [illegible] Սերսեփոնի
և 'ի [illegible] Կարապետեան 'ի ձեռքս Սուրբ
[illegible] Սերսեփոնի [illegible]։

Այս մեծոցի ծովեզերքը չէանիր են. տեղ տեղ
քիթ ըլլալով նաւահանգիստներ կան. նշանաւոր են՝
Ռուշաղա, Տանգալա, Այու ատղէ, Եալբեթա, Կուբ
զուփ քիթ և նաւահանգիստ, Այս առը, Մեսրոպ-
եան այսպէս, և Գույթի տունէն։ Այս տեղերս տանը
որ մեծն նաւ կը կենայ։

222. ԳԱԼԸԳԼԱՒԱ, բառ հն. Բաղաքիս, երկու հա
րիւր մեծն հեռու է Աֆրիկէին, և ունի լաւ նաւա-
հանգիստ ընդարձակ և ապահով բաւական մեծամեծ
նաւերու. նաև բերդ. Այս աւարին առակը։ Այս նա-
ւահանգստին բերանը կղզի մի կայ Ս՛ամբօղ գայս.
նաւին զգուշութեամբ առաջնորդներէն ներս կը մտնէ.
յետոյ արևելք դառնալով կերթայ բուն նաւահան-
գիստը։ Անգլիացիներն իրր իրեքհարիւր տուն կեղ-
լէն։ Արքիմեա Տաւրոսայ և Ս՛իմէոնի նաւահան-
գիստներ կը յիշէ հոս։ Ցես տախ. Է։ Ս՛անտորէր
պատմէ, է քիթ, կամ է մէկ ծայրն Այսյմին՝ վեց մղոն
անդին. ուր կայ վանք սուրբ Գէորգայ.

223. ՓԻԼԻՓԻ ԳԱՒԱՌԻ, երեսէն սար է խորհին՝
քառասունչորս մղոն անդին Գալըգլաւայէն. առաջին ծանր
ծագ ըլլալուն շատ դժուարաւ կանցնին նաւերը. իսկ
նաւահանգիստն է աւրին ներսն, որ կըսեն Հռոմա
յինին, և բերանը կըսեն Լոփքեա դողայէ։

224. ՍԵՒԱՍՏԱՓՕԼ, և ՌՕԱՔԱՒԵԱ, առանձնութ
մղոն հեռու ապստամբութեան և ընդարձակ նաւահան-
գիստներ են մեծ գաղին մէջ. ուր մեծ մեծ նաւա-
խումբը կը կենայ, և կայ բերդ, նաև բնակիչ. որ

կըսուի Ակեար ձերմակ լեռներուն համար։ Հոս է մոսկովին մեծ գործարանը նաւաց։ Անկէ անդին է Պալաքլաւան, և Ինկերման նաւահանգիստ փոքր։ Արրիանոս կը դնէ Պալաքլաւ նաւահանգիստ։ Այս ծովերուն մէջ կը թափին Խերսոնէս և Ինկեր գետակը։ Այս անդերն հինու փոքր տանխներ են. դրեթէ ամենայն ազգ կը գտնուի, և առատապէս կըներն։

225. ԿԻՕԶԼԷՎԷ, կամ Եւպաթօրիա, Եօթանասուն մղոն հեռու է Փէքէնլէկէն. ունի նաւահանգիստ արեւմտեան կողմն խերսոնի. ուր կայ հին ջրեր. և է քաղաք մը համակարանութեան ցամաքը լեռնոտ վրա շինած ծովեզերքը. առաջ երեք հազար տուն հայ կար, հիմա քիչ են, Պօղոսի հրէայ շատ կայ։ Աստ քինթն է Օէյթուան դաշտը, որ Պօշնաֆ կըսուի։ Արրիանոս այս տեղը Ակերտոս կը կոչէ, այսինքն աղէհան. որովհետեւ տեղ տեղ լճեր կան մինչև եօթն մղոն մեծ. ուր օգոստոսի սկիզբն ջրին մէջ աղ կը գոյանայ, նշան է թէ սկիզբ աղ ըլլայ. յետոյ ջարդըլելով որոշ քիչ մի կը կարմրի ջուրը. ապա քարանալով աղ կըլլայ։ Ինքնին որոշը կը տեսնեն տեղացիք՝ մեծ ուրախութիւն կըներն առ հասարակ։

226. ՓՕՌՕԶ ՊՈՒՌՆՈՒ, կամ Ռաֆի պրօմոնտօռիում. ըստ հնոց Կրիումեթոփոն. որ է երկայն քիթ դէպ'ի Օղու ծառած Սեւեւայ ծովուն բերանը. և հեռու է քառասուներկու մղոն Կէօզլէվէէն։

227. ՍՈՒԿԻ կամ Խաղքան ամբիլիր, ութսուն մղոն հեռու է Կէօզլէվէէն. ունի լաւ նաւահանգիստ արեւմտեան կողմն, ուսկից կըսկսի Սեւեւայ ծովը։ Անկէ անդին է Սուտի եալրթա. և մինչեւ Օղու երեւելի քաղաքը չի կայ. գլխաւորն է Պուրղուլ Շատիր.

228. ՍՕԼԻՒ ՏԷՆԻԶԻ. ըստ հնոց Ասծոթիս, է ընդարձակ գէօլ մը ծովուն. լայն երբ յիսուն մղոն, երկայն երբ հարիւր մղոն. որ կը վերջանայ երկու ծայր կամ սկաւով. վարի ծայրը կըսուի Պալըխի խերսոնի կողմը. վերինը կերթայ Օռ գաւառն. ուսկից կըսկսի Օռին մեծ խրամը. այս է բուն ծայր Սեւեւայ ծովուն, ուր կը թափի Սոլթանտիա գետն։

- Իսկ այս հիւսիսային սահմանը քանլորասին առաջ լե-

յուն է ընդարձակ տեղ։ Աստի շատ վաճառականութիւն ըլ-լալով բացէն կանոնին նաւերը. Թէ որ այս Ս՝եւեւայլ ծովը նաւ մտնէ, շատ դժուար կազատի։

Այս ծովուն առաջ կըսուէր Կարկինիտեան ծոց. ուր կար Կարկինէ քաղաք Թաւթարաց. որուն անուամբն այս-պէս կոչեցին այս խորշ և ծոց պոնտոսի. որպէս կը բերէ և Պտղոմէոսցին։

229. ՄԵՆԿՈՒԼԻՔ, է քիթ, և ունի ծոց Ս՝եւեւայլ ծովուն ներսը. ուր կայ հին բերդ և գեղ. որուն դի-մացն է Նաւիստանձ փոքր կղզի անապատ։ Հիւսիսային դին երկու փոքր գետ կը վազեն, և Չեթերլիկ մեծ-կակ գետ։ Ասկէ անդին է Պալջիք, և անդին Օզու։ Ահա հոս կը վերջանայ խրիմու կղզին, որ եռանկիւ-նաձև ըլլալով միայն Օզուին նեղ ցամաքովը փակած է Մոսկովստանու. անոր համար կըսուի Պերեկոփ խրիմ. այսինքն ցամաքակղզի խրիմու. բոլոր շրջապատն է իբր եօթնհարիւր մղոն։

230. Ս՝եւեւայլ ծովուն հիւսիսային կողմն է դաշ-տավայրը Օզուի. ուր է Քինեթըրէ պուրունի, որ Ս՝գմէ-ջերին դիմացը կեցնի. որուն դիմացն է Քինեթըրէ սօր-ու, կամ Ս՝ևնըաըլար. որ երկայն բարակ լեզուներ են ծովուն մէջ, մինչև կը մօտենան Պերեկոպուտունին իբր հարիւրերսուն մղոն երկայն. ուր գետերուն տիղմը առաջէ կղզիներ շիներ է. մէջերը նեղուցք նման գո-լով՝ մանր նաւեր կանցնին։ Այս նեղուցը Յ խղատե կըսուի, և հինգ բերան ունի. Թէնթրէին քթին վրայ լաւ բացած է նշանի համար. ուր շատ ծան-ծաղ է ջուրը։ Տես աշխարհացուցին վրայ։

231. ՊԸՐԼԳՈՒՌԱՅՆ, ըստ յն. Պուռլօփատօր, է բա-րակ սուր քիթ արևելքէն արևմուտք երկնցած օզուի նաւահանգստին բերանը. հեռուէն մազի նման բա-րակ կերևնայ. անոր համար ըսուեցաւ Պըրլպուռուն. մէկ կողմն է սև ծովը, մէկալ կողմն է Օզուին լիճը. ծայրին ունի լաւ բերդ տաճկէն շինուած. որ մոսկովն առաւ 1774ին. Այս քիթն իբր մղոն դառնալով Օզուին նաւահանգիստը կը մտնէ։ Այս տեղ հին պատերը կըսուէր Տրօմօս աքիլլեոս, այսինքն ընթացք Աքիլլեայ. զի Աքիլլէս հոն կրթութեան կըներ կը-

սեն ։ Արեւմտեան կողմն քթին՝ Սուրբ սար կը կոչէ Պաղտնեկոս ։ Պլինիոս այս քիթն ութսուն մղոն երկայն կը դնէ․ որ հեռու է Փոռօղէն իբր հարիւրվաթսուն մղոն ։

232․ Գըլլպուռուռնէն կամ օղուլի բերնէն ներս շատ ընդարձակ և պատուական նաւահանգիստ է, որ կը վերջանայ մինչև Տնեբէր գետ երկայն իբր քսանըհինգ մղոն, և լայն չորս մղոն․ որ կըսուի Լէման կամ Օղոս ծոցի ։ Արրիանոս այս կողմս կը դնէ Տամիրակա քաղաք․ որ Տամիրիս Թագուհին գթոց շինել էր ։

233․ ՏՆԷՊԷՐ, կամ Նէեբէր․ ըստ հն․ Տանաբրիս կամ Բորիսթենէս․ ըստ ռմ․ Դնեբրան ծոցի, է երևելի մեծ գետ, որ կելլէ Մոլքոնաք անտառէն Մոսկովիայի, և անցնելով Լիթուանիան, և անապատն Նողայեան Թաթարաց կուգայ օղուլի հիւսիսային կողմէն Լէման լիճը կը ձևացնէ, և Գըլլպուռուռնին բերնէն ան ծով կը վազէ ։ Ջուրը քաղցր է և ձկները մեծամեծ և զանազան տեսակ․ մէջը շատ կղզիներ կան․ կամուրջ մի ունի 1638 քայլ ։ Այս գետին արևմտեան կողմն է Դնէբրոսն բերդն․ որուն քովէն կը վազէ Ինկուլ գետը․ նաև ուրիշ բերդ ալ կար շինեալ հիմ․ 1090 ։ Հիները կը յիշեն Բորիսթենիս քաղաք․ ուր կար հին ժողովուրդ նոյն անուամբ․ նաև այն քաղաք կըսուէր Օլբիա ։ Տնեբէր գետին վերը Պօյ սուին վրա է Սլատոբրինեսլաւ քաղաքը․ ուր 1779ին Խրիմու հայերէն հարիւր վաթսուն տուն գնացին շինեցին Մոսկովի Թագուհիին անուամբն․ ունին երկու եկեղեցի, և օրէօր կը ծաղկին․ երկիրն է բարեբեր, և ունին ամէն հարկաւոր բան․ որոնց նաւատեղին (Ռակէլէն) է Դնէբրոսն․ այս նաւահանգը շատ խաղաղ կայ ։

234․ ՊՕԿ, ըստ ռմ․ Աքսոս, ըստ հն․ Իբանիս երևելի գետ, կելլէ Լեհաստանէն և օղուլի մօտ երկու ձիւղ կը բաժնուի ու հիւսիսային կողմէն կը վազէ Լիման լճին մէջ․ տար մէկ փոքր ձիւղը կերթայ Փէրէզիէն․ որով իբր ցամաքակղզի կըլլայ Օղու ։

235․ ՕՉՈՒ, է երևելի ցամաքակղզի հիւսիսային ծայրը Լիման լճին և դիմացը Գըլլպուռուռնին ։ Ըստ Արր․ Դնէբրոսեանս․ Բաուրինէ կըսուի, այսինքն ցամա-

քակղղի ․ ուրիշ անառիկ և զօրաւոր բերդ լեռան գլուխը շինած ․ քսանըհինգ ոտնաչափ բարձր էր պարիսպը ․ քաղաքը բերդէն վարն էր ։ որ 1788ին Մոսկովն առաւ քանդեց ․ ուր առաջ քսանըհինգ հազար բնակիչ կային ամէն ազգէ ․ հայերն էին քառասուն տուն, ունէին նաև եկեղեցի ։

Այս երկիր առաջ կըսուէր Մ՝նաւիա, և կը հասնէր մինչև Պօյրզ քէլլիսէ՝ հարիւր քսան մղոն երկայն, և հարիւր լայն ․ այս կողմի թաթարներն իրենք կը բաժնէին՝ Օզու թաթարի, Պուճաղ թաթարի, Տօպրուճա կամ Նօղայ թաթարի ․ և երկիրը կը հասնի մինչև Տնաստրօ գետ, որ կըսուի Նստաս Խաթա-յոյ ։ Շատ բարեբեր և առատ երկիրներ են ․ մանաւանդ օդուն չասնըրկած ամէն կերպ առատութեամբ լեցուն էր ։

236 ․ ՓԷՐԷԶԷՆ, կղզի է Օզուի լճին բերանը ․ ուր նաւ կրնայ կենալ, և քովը կը վազէ Փէրէզէն գետը ։ Հոն է Ճանճէ նաւահանգիստը փէրէզէնին՝ լայն երկու մղոն ․ ուր նաւ կը կենայ ապահով ։ Անկէ անդին է լիճը Տէնիզ Կէօլ ․ և արևմտեան կողմն է Հասան փաշայի հին բերդը ։ Տասնըութ մղոն անդին է Պողազ հասան Խաւալըք ․ ուր կայ ծոց և գետ ։

237 ․ ՕՏԷՍԱ, բառ հն ․ Օտէսոս, և բառ ամ ․ Խոճա-պէյ, յիսունըչորս մղոն հեռու է Օզուէն ։ Առաջ աննշան տեղ էր ․ Մոսկովն առաւ շատ զօրացուց ․ նաւահանգիստը ապահով և լաւ շինեց ․ բերդը ամրըցուց, և այնչափ երևելի շէնքերով և քաղաքականութեամբ զարդարեց, որ հիմա եղաւ երևելի վաճառականութեան քաղաք Եւրոպականի ․ նաւահանգիստը լեցուն է նաւերով, շատ ցորենի առուտուր կըլլայ ։ Անձուկ լիճը մօտ է հոս ։

238 ․ ԽԱՆԸՐԴ ՓԱԼԱՆԿԱ, շատ հեռուն չէ ․ որ և հին բերդ քանդած ․ որ կըսուի նաև Եէնի Քալէսի, այսինքն Նոր դղեակ ։ Այս տան բլուրի վրայ շինած է ․ առկէց մինչև Աքքէրմանու ընդարձակ դաշտ է Պուճաղ թաթարաց ․ և իրենց երկիրը կը հասնի մինչև Պրուտոս գետ հարիւր քսան մղոն երկայն ։ Երկու չափաւոր գետ կը վազէ Պ․ահերճէ, և Ճիճաքլը ։

239. ԱԿՔԵՐՄԱՆ, է երևելի և զօրաւոր բերդ Թաթարաց՝ վաթսուն մղոն հեռու Օտէսայէն, և իրեք մղոն հեռու սև ծովէն. մէկ կողմը կայ ահագին խոր խրամ. մէկալ կողմն է Դուռլա գետը, որ առաւ Սուլ. Պայեզիտ 1484ին. ուր ամէն ազգ կը բնակին. հայերն ունին եկեղեցի: Ակքերման սպիտակ բերդ ըսել է. ոմանք Պելղորոտ կըսեն. իսկ Մոլտովանցիք Չետատէ ալպա կըսեն, որ նոյն ըսել է: Այս քաղաք ունի պատուական նաւահանգիստ կամ գօղ, որ կըսուի Ակքերմանի լօղազը. ուր մեծ նաւեր կը մտնեն, թէպէտ բերանը քար կայ. որ կը վերջանայ Տնեստեր գետ: Իսա Պող. Հին ատենն երկու քաղաք կար հոս: Դիրաս էր հիւսիսակողմն Ակքերմանու, և Ապոլոնիա հարաւակողմն:

Տնեստեր կամ Դնաստր երևելի մեծ գետ սև ծովուն՝ ընդարձակ մէջընով կուգայ Լեհաստանի կողմէն. և կանցնի Աքմէնից քաղաքին քովէն Ակքերմանու ծոցը կը թափի. որ հին ատենը կըսուէր Տիւռաս կամ Նէստր. որուն վրայ շինած է Ռուսը 1792ին Գրիգորիոպոլիս քաղաքն հայոց. որոնք ունին շատ ազատութիւն, և ինքնագլուխ մէջ կը կառավարին: Այս գետէն կելլէ Չաւկա ձուկը պատրաստ նման մէրսինի:

Պէնտէր, կամ ըստ հին Դիկինէ և Դիկինիա երևելի բերդ՝ շինած է աջակողմն Դուռլա գետոյն. ուր փախաւ Կարօլոս թագաւորը Շուէտաց մնակամ Պետրոս թագաւորին ձեռքէն 1709ին: Նաև գաւառային մօտ է Դավշան քաղաք՝ Պոլթնա վտակին վրայ շինած. ուր հայեր կան և ունին եկեղեցի: Հոն մօտ է հռչակաւոր խրամը Տրայիանոսի. որուն մէկ ծայրն է Փէզրօվարատին, և մէկալ ծայրը կը հասնի Տօնաւիս գետ: Ջաւթար Պունար Իսմայիլի կողմը կիյնի. ուր առաջ քաղաք էր ժայռի վրայ շինած. տակէն պատուական ջուր կելլէ: Վէնուան փաշային շինած բերդը հոն է անշուք մնացած:

Պէսարապիա, կամ Պէսարապիա կըսուին այս տեղերն, որ Ակքերմանէն կըսկըսին և կը հասնին մինչև Դունա. ուր ոչ անտառ կայ, և ոչ լեռ. բնակիչներն

են Նողայ թաթարք վրանաբնակ. որոնք շատ կը սիրեն ձիու միս և ձիու կաթ. անով կը մեծարեն իրենց բարեկամը. Թէպէտ ամէն բարիք ունին, միս, բուրդ, եղ, պանիր, և շատ ցորեն կը հանեն։ Գիւղաւորները կը սիրեն Մ՚իրզէ, որ է ազնուական. ով որ անոնց ձեռք վերցընէ, ձեռքը կը կտրեն. երբուն հազար կան. ամէնն ալ յօժող թէ պատերազմի, և թէ ուսողութեան. ամէն աշխատանքի կը դիմանան. ոչ ցուրտէ կը վախնան և ոչ տաքէ. մեծ գետերէն կանցնին մերկ ձիու վրայ նստած. և շատ զարմանալի բաներ ունին. թէ՛ կերակուրնին և թէ հագուստնին պարզ է Սպաղանեցւոց պէս. բայց տանիք ունին քաղաքավար են, և բոլորն այլազգ են։

Ս՚դերբենտու մօտ կը դնեն Ակէրդուոյլ քաղաքը. բայց հիները Վ՚Ռոստենձէ մօտ կը դնեն Գոսքո քաղաքն. ուր աքսորեցաւ Ակերդնոս (250)։

240. ՊԱԼԱԳԱՆ ԻՍԿԻԼԻՍԻ, Ս՚ղրիմանին և Գուանային մէջ տեղն է. ունի քերթ և նաւահանգիստ։ Արևելեան կողմն է չափաւոր լերին աղէ. իսկ արևմտեան կողմն է ծոց ընդարձակ, որ կըսէ Մօրջի, կամ Չենկան պողազի (241)։ Պալապանէն ժամանակով երկու թնդանօթ բերին Ս՚ղրիմոն այնչափ մեծ, որ երկու մարդ կրնայ վրան պառկիլ. մէկ անդամնետեր են մէկը՝ կրակ տալու ընկեր մեծ է։

241. ՉԻՀԱՆ ԳՈՒՃԱՂԻ, կամ Մ՚որշեղա նեշլի, է գոգ Պալապաններին մօտ. առջին կայ բաբակ լերդու աւաղէ։ Ս՚յս կողմերս Գուռնայի մօտ ըլլալով երբեմն լերեր և ծովեր կըլլան ջուրին շատութենէն. անոր համար Ս՚դրիմանոս Գուռնայի մօտ նաւահանգիստները կը յիշէ։ Ս՚րդ՝ Սեւադըլթէն մինչև Գուռնա 720 մղոն է. որ նաւեր ընթացքով պահպան կը հանեն։

Լ. ՄԵԾՆ ՍԵՒ ԾՈՎԸ

242. ՊՈՒՆՏԱ, կամ Պոնտոս գետ երևելի մե- ծութեամբ, Սև ծովուն ամէն գետէն աւելի մեծ և անուանի է. որ կելլէ Զուիցերիոյ լեռներէն, և շատ պտըտելով Սավա մեծ գետին հետ կը խառնը- ւի, և մեծնալով կը ծովանայ, ինչպէս տեսանք ներքը: Ապա շատ զանազան գետեր ընդունելով եօթն աշ- խարհէ կանցնի. այսինքն Պավիէրայէ, Նէմցէստա- նէ, Մաճառստանէ, Սըրֆէ, Պուլղարիայէ, Մոլ- տավիայէ, և Պուճաղ Թաթարէ՝ կուգայ Սև ծով կը վազէ հինգ բերանով. հիները եօթը կը դնէին: Առջին տեղ աւազուտ ծանծաղ է. նոյնպէս մէջը. բայց ջուրը լաւ է խմելու. որպէս փորձեցինք: Հիւսիսային կողմէն ա՛ բերանն է Կիլի. բ՛ Սուլի- նէ. գ՛ Խտրէլէզ. դ՛ Բօղազճէյ. ե՛ Հայրալը, կամ Կրտասօն:

Այս անուանի գետին վրայ հիները զանազան բա- ներ խօսեցան: Հին ժողովուրդը հիանալով մեծու- թեանը վրայ տաճար շիներ էին Կիլի բերնէն վեր. և այնպէս սրբազան կը համարէին, որ կըսէին թէ նոյն կապտան ջուրը թռչունները գետէն կը բերեն: Ըստ Նախնեաց՝ այս գետ Սև ծովուն մօտենալով անունը կը փոխէ Իստրոս կը կոչուի: Օվիդիոս ատոր մեծութիւնն իմացնելու համար՝ կը բաղդատէ Նե- ղոս գետին հետ այսպէս.

* Դանուբ մեծապանծ գետ ակնածելի,
Չունի խոնարհիլ մեծին Նեղոսի:

Այս գետին մէջէն շատ ձուկ կելլէ, և մեծամեծ մուրինաներ կելլեն. ծովուն մօտ փոքրիկ ձուկ մը կելլէ զարմանալի. վրան գոյնզգոյն, նոյնպէս պոչը նաշխուն. երկու ականջ ունի նման մկան: Այս ձուկն օդաչափ պէտք է անուանել. զի ամէն փոփո- խութիւն օդին կը յայտնէ օդաչափ գործիքէն շատ

աղէկ. որ կը գնեն ապակէ ամանի մէջ ջրով լեցուն, ջրին տակն աւազ լեցընելու է։ Ասոր՝ որչափ որ օդն է հանդարտ և չպիտի փոփոխի՝ ձուկն անշարժ և հանգիստ կը կենայ աւազին վրայ. և երբ օդը պիտի փոխուի, կամ անձրև, կամ հով, և կամ կարկուտ պիտի գայ՝ ձուկը կըսկըսի շարժիլ շարունակ՝ ամանին մէջ վեր վար կերթայ, և աւազը խառնելով ամենևին հանդարտութիւն չունենար։ Պէտք է ամսէ ամիս ջուրը փոխել, որպէս զի սնունդ առնելով շատ տարի կենդանանին։

243. ՄՈՒԼԻ ԳՕՂԱԶԻ, վաթսուն մղոն հեռու է Ագքիրմանէն։ Հիւսիսային կողմէն աւազին բերանն է Դունայի. որ կէս մղոն լայն ըլլալով նաւ կը մտնէ, և ունի նաւահանգիստ։ Բերդը ծովէն վերն է, և զանազան ազգեր կը բնակին գիւղաքաղաքը։ Բերդին քով երկու լեռ կայ, վրան երկըթէ օղակներ հաստատած. կըսեն թէ ծովը առաջ հոն ըլլալով՝ նաւ կը կապեն եղեր անոնց (5)։

Արրիանոս այս բերանը Բոխծն, այսինքն փոքր՝ կանուանէ. քիչ վերն էր Աքիլլէոս կղզին. ուր ծնաւ կըսեն քաջն Աքիլլէս. ուսկից եկած է Մուլի անունը։ Ասոր փառաւոր արձանը հոն մեծագործ տաճարին մէջն էր, որ շատ գանձով և գոհարով լեցուն էր, և երևելի ուխտատեղի ըլլալով հեթանոսաց՝ ով որ ընծայ կը տանէր՝ քարերուն վրայ գրած կար զանազան ազգաց գրերով, ինչպէս կը պատմեն հնախօսները։ Արրիանոս շատ այծեր տեսաւ հոն որ Աքիլլէսի ընծայած էին։ Բայց հիմա չի կայ այս կղզին։ Արրիանոս զարմանալի բաներ լսեր էր հոն այս տաճարին վրայ, որ մեծ ջերմեռանդութեան տեղ էր կռապաշտներուն. մինչ զի՝ ընծայ եկած այծերը սրբազան համարելով մարդ կարող չէր դպչելու, այլ ազատ կարածէին հոն։

244. ԻՍՄԱՅԻԼ, աւելի վերն է Դունայի վրան երևելի բերդ. ուր զանազան ազգեր կը բնակին. հայերն իրեքհարիւր տուն կան. եկեղեցին կիսով չափ գետինը թաղուած է։ Մեծամեծ ցորենի ամբարանոցներ կան այս քաղաքը. և շատ բարիք կերթայ Ստամպօլ

Հոս գունա երկուս կը բաժնըվի. և վարը ղանա-ղան ձիւղ կըլլայ: Դիմացն հարաւային կողմն է վե-րը Իսաքճի, ըստ յն. Նոօյելաւ բերդ հինգ պարսպա-րակով. շատ վաճառականութեան տեղ է. ունի նա-ւահանգիստ. բնակիչներն են յն. տճ. մոլտ. և հյ:

245. ՍԻՒՆՆԷ ԲՈՂԱԶԻ, տասնըութ մղոն հեռու է Քիլիէն. որ է բուն բերան Դունայի մեծ և խոր. ուսկից մեծամեծ նաւեր կանցնին, և է նաւահանգիստ մեծ: Հոսքը և Քիլիէն մէջ տեղն է ընդարձակ եղէգ-նաց. ուր սոսկալի մեծ պիծակ կըլլայ, մինչև մարդ կրնան մեռցընել:

Եըլան ատասի, տասնըութ մղոն բացն է փոքր կըղ-զի. որ Սիւննէի դիմացը կիյնի ծովուն մէջ. ուր նաւ կրնայ կենալ: Մեր յայսմաւուրքին մէջ կը յիշէ Նո-ըրն կղզէ Դունային բերանն. ուր վախճանեցաւ սուրբ եպիսկոպոսն Թէերիոս:

Սիւննէին աշխարհագրական լայնութիւնն է 45°. 11':

Երկայնութիւնն է . . . . 27°. 40':

246. ԽՏՐԷԼԻԶ ԲՈՂԱԶԻ, տասնըութ մղոն հեռու է վերինէն. որ է երրորդ բերան Դունայի: Արրիա-նոս Գալոն կըսէ, այսինքն լաւ բերան. կարելի է թէ անտատենը աւելի խոր և աղէկ էր. հիմա մեծ նաւ չի կրնայ մտնել, թէպէտ չափաւոր լայն է:

247. ՊՕՌԹԻՑԱ, ըստ Հրր. Նառակօս, է չորրորդ բերան Դունայի. տասնըութ մղոն հեռու է վերի-նէն: Այս բերնէն վերն է Դունայէ բերդը նոյն թեւին վրայ: Հարայի կամ Քրասոնա պօղազը, է հինգ-երորդ բերան Դունայի: Այս բերնէն ներս նաւ չի կրնայ մտնել շատ ծանծաղ ըլլալուն համար. ու-րէ աշխարհացուցներուն վրայ չեն դներ. ամենք Գա-րախարմանն կանուանեն, որ մօտ է:

248. ՏՕԳՐՈՒՃԷ գաւառ Թաթարաց՝ ասկէց կըս-կըսի և կը հասնի մինչև երկայն պարիսպը քանդված. որ հին կայսերք շինեցին Ախլատոբէէն մինչև Քէօս-տէնճէ. ծովեզերքը կըսվի Գէտօրա. ուսկից կըսկըսի Գօզլուճա, և կը հասնի մինչև Րուսջուկ. որուն առջևէն կանցնի Դունա. ուր անտառք հին շէնքեր և քայքայած տեղեր. նաև ինքնաբուխ տաք ջրեր

որ ծծումբ կը հոտէին ։ Աղբիւրը շատ բարեբեր է, պարարտ և խոտաւէտ դաշտեր, այգիներ, և անտառներ ունի. նաև հանքեր ոսկիի արծաթի երկաթի և կապարի. ուսկից կելլէ Յէշիմ քար կանանչ՝ կարմիր՝ երկնագոյն, և բազմափայլ քար ։

Պուլղարներուն մէջ տեսանք հիւրասէր և անուշ մարդիկ. աղքատները են արատաւոր, իսկ հարուստները են վաճառական. և ամէնը քաջ պատերազմական մարդիկ են. որ հին ատենը շատ հոգնեցուցեր են յոյն թագաւորները ։ Կը պատմեն թէ Ասիայի կողմէն եկած են, և նախ Տօնաւիս գետին քովերն են բնակեր. յետոյ եկեր այս կողմերս զարկեր տիրեր են. լեզունին շլաւոններուն լեզուին շատ մօտ է. ունին զանազան սովորութիւններ. գտակնին կլոր է, և շապիկնին նաշխուն. կնիկներուն գտակին վրայ բոլոր ոսկի և արծաթ դրամ կարած է ։ Իրենց գլխաւորը Պօղոսն կըսուէր, որ յունաց դէմ շատ քաջութիւններ ըրաւ. մինչև Լևոն կայսրը թագաւոր անուանեց զինքը. իսկ Բօգօրիս թագաւորը յամի 866. քրիստոնեայ եղաւ Միքայէլ կոչվեցաւ, և բոլոր ազգը քրիստոնեայ եղաւ. հիմա շատ այլազգ եղած կան իրենց մէջ ։ Հայոց ազգէն ալ ասանց թագաւոր եղան, ինչպէս էր Սամուէլ թագաւորը. իսկ վերջի թագաւորը կըսուէր Շիշման. մինչև յետուն թագաւոր նստան Տրնովի և Նիկէպոլիս մայրաքաղաքներն, որ առաւ ծ Սուլ. Միւրատ. և բոլոր պուլղարիայի տիրեց Եըլտըրըմ Սուլ. Պայէզիտ ։ Առաջ ատենցմէ Օսմանցին տասը մարդէն մէկ զինուոր կառնէր, և վրանին իրենցմէ տասնապետ կը դնէր. որ կըսուէին Վօյնուք պէկի. հիմա վերցած է այս բանը ։ Սուլ. Միւրատն օրէնք դրաւ, որ թագաւորական ձիերը Պուլղարներն հանեն դաշտը. որ մինչև հիմա տարուէ տարի կերթան Սամակօվ, որ կըսուին Վօյնիկ. և Խըտրէլէզին համդէսով կը տանին ձիերը Քեաղըթխանէ. Այս կողմն Պօունայէն սկսեալ մինչև Լօմն լեռը, նաև մինչև Սամակօվու բերանը հին ատենը կըսուէր Թրակիա. որ մեծ տէրութիւն էր ։

249. ՊՕՍՆԱ ԽԱՐՄԱՆ, տասնըութ մղոն հեռու է

Բօալթիճայէն. որ է փոքր քաղաք: Հոս է Պօրա-սօս, որ է նոյն Քուաթա պօղազին. որուն բերանը կըսուի Պարախարման պօղազի. և նաւահանգստին քով ունի բերդ Հասան փաշայէն շինուած. ուր նաւ կրնայ կենալ: Պարասու ջուրն առաջ կըսուէր Օ՛աւարօն. մօտ է հոն Սեպէնէօլի ծոցը: Հին աշխարհագիրները հոս կը դնեն հին երևելի քաղաքը Թօըմի. անկէ ան-դին ուրիշ քաղաք կար Պալաթիս: Պունայէն տաս-նըրութ մղոն հեռու կը դնեն հիները Սանքիտա քա-ղաքն. ուր կատարեցան սուրբ Նըրմողայոս և Սորա-տօն. ըստ որում կը բերէ մեր յայսմաւուրքը:

250. ՔԻՕՍՏԷՆՃԷ, երսունըվեց մղոն հեռու է վերինէն. բերդն է Սիւթկէօլի ծոցին հիւսիսային կողմն. ունի քիթ Հարձիճ պուռնի: Այս քաղաք ա-ռաջ Քոսդանձա կըսուէր Կոստանդին Թագաւորին քեռուն անուամբը: Ուր մօտ է Պարասու լիճը. նաև Պապա տաղին. որ է մեծ սար, ուր կան մեծամեծ արծիւներ: Քիօստէնճէի մօտ է Իջաֆօի գերղն, որ հնազանդութիւն կը նշանակէ. զի Կոստանդիանոս Թագաւորն հոն տեսնելով խաչին հրաշքը՝ հնազան-դութեամբ հաւատաց:

Պօլիս երևելի հին մայրաքաղաքը հոս կը դնեն. որ ըստ ոմն Բարկալա կըսուի: Այս քաղաք Պունայէ բերինէն շատ հեռու չէր. գտան դրամը, որ մայրա-քաղաք պոնտոսի կանուանէ այսպէս. ΜΕΤΡΟΠ ΠΟΝΤΟΥ ΤΟΜΕΟΣ. այսինքն ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՊՈՆՏՈՍԻ ՏՈՄԵՈՍ: Բայց Ստրաբոնի ատենը այնչափ մեծ չէր: Անկէց էր սուրբ Բրետանիոս եպիսկոպոսն չորրորդ դարուն. որուն յաջորդեց սուրբ Տիմոթէոս, որ էր Փիլիսո-փայ: Նմանապէս Ովիդիոս բանաստեղծին ատենը չունէր առջի մեծութիւնը. ուր աքսորեցաւ Օգոս-տոս կայսերէն. որ կը պատմէ, թէ Միլեզիացի հաւա-քուած եկեր շիներ է այս քաղաքը. և անոր համար ըսուեցաւ Պօլիս, այսինքն կտրտուած. զի հոն Մե-դիա կտրտեց իր եղբայրը, ինչպէս կըսէ:

* Սման այն Պօլիս անուան դնի.
Կտրատեալ զի է տեղի.

Ի ջրըն եգիպտոս մանրէ զմարմին ,
Բաշխեալ ՚ի մասն որպէս աւր :

Մեղդիոս շատ կը տարածէ այս տեղին համար , և չարաչար վար կըզարնէ իր բանաստեղծութեան մէջ՝ անշուք և անշահ տեղ ըլլալուն համար . զորօրինակ .

* Կատիմ մնացեալ ՚ի ծագս աշխարհի ,
Ի ծիւնախաղաղ երկիր աներհի .
Ուր ոչ քաղցր մրգոյ ոչ խաղող ծնանի ,
Ոչ ունիք գետոց ոչ լերանց կաղնի :
Այլ ըծով քան զցամաք ՚ի գովեստ առնցես ,
Անդունդք անառիկ ՚ի հողմոց պէսպէս .
Ընդունել մոլեգնեալ ուռնուն դիպուածք .
Հուրծ ՚ի ծիր աշաց անհուն տարածեց ,
Գնաշտ լայնածաւալ անապատ երեց .
Անդործ անտանելունչ տեսցես արտօրէս ‖ :
Ովիդ . պոնտ . Դ . 4 :

251 . ՄԱՆԿԱԼԻԱ , ըստ լն . Իանիկոլլիս , երասունը-վեց մղոն հեռու է Վիէտաէնձէէն . ունի բերդ և նաւ կենալու տեղ . քթին առաջը կայ հին ամբարտակին աւերակն , որ նաւահանգստին համար շինած էր : Գաղղիացիք կը կոչէ այս տեղս Արբիանա , որուն բնակիչները Հերակլացիք էին ըստ Սարաբանի . անունը կայ Գորգիանա կայսեր դրամին վրայ : Պտղոմէոս այս կողմն կը դնէ Տեարիանա հին բերդը . որուն մէջ Լուսիմաքոս իր գանձը պահեց ժամանակ մը :

252 . ՇԱԳԼԱ ԳՈՒԲԱՆԻ , երասունըվեց մղոն հեռու է վերինէն . որ է երկայն սար , և ծովուն մէջ ցամաք . ուր վաճառականաց ըլլալուն փենիկա կը վառի գիշերը :

253 . ՍԵԼԷԴՐԷ ԳՈՒՌՆԻ , ըստ լն . Գուղէ ակոա , այսինքն բարի քիթ , տասնըութ մղոն հեռու է վերինէն . որ է մեծ սար դէպ ՚ի հարաւ ծովը մտած . ուր կայ բերդ և վանք , նաև ուխտատեղի տաճկաց . որ կըսուի Մարը աղբէգ : Թուի թէ հօս հին տաճարը կառուցուն էր , որուն տեղն ուխտատեղի շինուեցաւ . զի առաջ ամէն մեծ սար որբառուն կը համարէին . ուստի և բարի քիթ կոչեցին այս սարը : Ըստ համար

որչափ երևելի սարերու աղջևէն անցանք, նաւավարները հայց նետեցին ծովը. որ է կռապաշտութենէ մնացած սովորութիւն. որոնք անկէ անցնելով հացը ընծայ կընէին կուռքին՝ ծովը նետելով. որ մինչև հիմա աւանդութեամբ կը պահեն։

254. ԳԱՎԱՌՆԱ, հինգ մղոն ներսն է սարէն. ունի պատուական նաւահանգիստ և բերդ։ Այս մեծ ծոցինմէջ իրեք նաւահանգիստ կայ։ Հին աշխարհագիրները այս կողմն կը դնեն Տիբերիոպօլիս հին քաղաք. ոմանք կը համարին թէ Վառնա է։

255. ՊԱԼՃԸԳ բերդաքաղաք՝ է հինգ մղոն անդին, և նոյն ծոցին մէջ երևելի նաւահանգիստ է. քովէն մեծկակ գետ կը վազէ. ուր մօտ է Պալթճիս և Մօղանլըղ։ Այս ծոցին մէջ յորձանքն ընդհակառակն ըլլալով դուրսի յորձանքին բնութենէն դէպ՚ի հիւսիս կը վազէ։

256. ՎԱՌՆԱ քաղաք՝ քառասուներկու մղոն հեռու է վերինէն. որ հիւսիսային կողմն է ծոցին. ունի լաւ նաւահանգիստ. որուն մէկ կողմն է Գալաթա պուռնու, և միւս կողմն է Կօրչօֆ քիթ. քովէն կանցնի չափաւոր գետ, և մօտն է ՏԷՎՆ լիճը։ Այս գետին վրայ՝ վերը շինած էր Մարկիանուպօլիս երևելի հին քաղաք՝ ՚ի պատիւ Մարկիանեայ քրոջը Տրայիանոսի կայսեր, և անունը կայ հին դրամներուն վրայ Փրէզըլա անուամբ, ինչպէս ասեն։

Վառնա փաճառականութեան տեղ ըլլալով շատ երթևեկութիւն կըլլայ նաւերու, և շատ բարիք կերթայ Ստամպօլ. ուր ամէն ազգ կը բնակին. երսուն տուն հայ կայ, և ունին եկեղեցի. բայց Պուլղարի քաղաք ըլլալով բնակիչներուն շատը Պուլղար են։ Հին բնակիչներն էին Միլեզիացիք, որ շինեցին Վառնայի բերդը, և անատենը շատ անուանի էր, ինչպէս կերևնայ հին դրամներէն. ուր շատ պատերազմ եղած է։ Սուլ. Միւրատ մեծ կոտորած ըրաւ քրիստոնէից դէմ. ուր մեռաւ Լատիսլաւ մաճառի թագաւորն 1444 ին։

Հին պատմիչներն փառնա կը համարին Գիոնիսիօպօլիս, քովէն գետ կանցնէր. Թերևս էր Գամչիք տէրէ-

ախն, որ կանգնի այս կողմէն. որուն եպիսկոպոսն էր Գուրիաօն, որ գնաց Քաղկեդոնի ժողովքը: Նոյն անոր համար կոչվեցաւ Գերմանիկուպոլիս, զի Ռաւքա-եի կուաքը հոս ծովուն քով գտան, որ Գերմանիկոս կըռվէր. (Ճեմ. 643): Ավրդիկոս այսպէս կը բերէ.

* Նաև զամրոցս որ կոչէին,
Գերմանիկոս յանուն քոյին Ա:
Ավեր. Եղեր. Ա:

257. ԼՈՄԻՆԻ ԳՈՒՌՈՆԻ, ըստ հն. Լոմօս, քառասուն մղոն հեռու է Սամսոնէն. որ է երևելի սար. որուն գագը և նաւաստեղին է Ինէնլըրէ ըսած՝ տասնըութ մղոն ներսը. որ է փոքր քաղաք, և ունի քիթ. որ Անդրէպոլիի քթին դէմ ըլլալով Պուաղազու ծոցին բերանն է եղած: Առաջ կըսուէր Ինէմնըրէ, կամ Ինէնըրէ. որ շինողին անունն է. զի Ինէ Թրակացոց լեզուով քաղաք ըսել է. ուստի կը նշանակէ Ինէնէի քաղաք: Ասկէց կըսկըսի մեծ լեռը Լոմօս, կամ ըստ ա՛. Պօյքան, և կը հասնի մինչև Տալմացիա. շատ տանջըմեցանք օրերով մինչև որ անկէ անցանք:

258. ԱՀԵՕԼՈՒ ըսած՝ ինը մղոն ներսն է հիւսիսային կողմը ծոցին. նաւահանգիստը լաւ չէ: Ծովուն մէջ դէպ 'ի հիւսիս տեսանք երկան քարուտ կամ աւերակ. բնակիչները պատմեցին թէ առաջ հոն շէնք կայ եղեր իբր ձմեռայ շինած: Մերն է անուանի բաղնիքը բնական. ուր կը բղխի առողջարար ջուր տաստիկ տաք. ջուրը ծծմբային հոտ ունէր: Ահեօլուի ներսը կայ աղէհան. որ երբ արևը ջուրը կը մտնէ, ծովուն ջուրը հոն կը կապէն առանձին տեղ. որ կըսկըսի աղանալ: Պտղոմէոս կը կոչէ այս տեղս Անթիալոս, որուն եպիսկոպոսը Սեբաստիանոս՝ Կոստանդինուպոլսի Ե ժողովին մէջն էր. բայց հիմա Ստորապոլիս կը նստի:

259. ՊՈՒՌՂԱԶ, տասնըութ մղոն հեռու է վերինէն. ունի լաւ նաւահանգիստ, բերդ, և է վաճառականութեան տեղ. ամէն տարի մեծ վաճառ կըլլայ, և հեռու տեղերէ ապրանք կը տանին. ուսկից շատ Ապա կելլէ. ուր կան ամէն ազգ. և հայերն

ունին Եկեղեցի, և վաճառականութեան յարմար են։

260. ՓՈՌՕՁ, հինգ մղոն ներսն ըլլալով ծայրն է Պուղազուն ծոցին. ունի լաւ նաւահանգիստ. ուր կը վազէ Գրանձիգ գետը։ Այս երեւելի ծոց սև ծովուն՝ քսանուերեք մղոն երկայն է. ոմանք քսանըմէկ մղոն կը դնեն։

261. ՉԻՆԿԵԱՆԷ ԻՍԿԻԼԷՍԻ, հինգ մղոն անդին արեւմտեան կողմն է. ունի լաւ նաւահանգիստ և գետ։ Ասոր դիմացն է Քէֆքէն ատա, որ է փոքրիկ կղզի. երկու մղոն է շրջապատը, և ունի վանք, և եկեղեցի սուրբ Յովհաննու։ Այս կղզի ըստ Պլինիոսի կըսուի Կղզի Ապողոնի. ուր կար տաճար և կուռք Ապողոնի. անոր համար քաղաքն ալ կոչուեցաւ Ապողոնիա։ Այս կուռքը Լուկուղոս վերուց Հռոմ տարաւ Կապիտօլիոն դրաւ։

262. ՍԻՒԶԷՊՕԼԻ, կամ Սէօզէբօլի, հինգ մղոն անդին ըլլալով Պուղազուն ծոցին բերանն է, և Ահեօլուին դիմացը կեցնի. չունի նաւահանգիստ. բնակիչները յոյն են. ուր երեւելի բան չտեսանք։ Այս քաղաք Միլեզիացիք շինեցին, որ Ապողոնիա կոչուեցաւ վերի կռատանը համար (261)։

Սայլեան, կամ Օճլեանի պուռնի, հինգ մղոն անդին է։ Այս քթին առաջին առնղուտ կայ. որուն մէկ կողմն է Ռոտոսմա փոքր նաւահանգիստը, մէկալ կողմն է Ագլիման. ուր կը վազէ Պուլղաէ գետը։

Արրիանոս Սիւզէպօլիէն անդին կը դնէ Սերրոնէս նաւահանգիստ Թիրակիոյ։ Իսկ Սորբաբոն քաղաք կը դնէ սև ծովուն վրայ. ուր գնաց հատուած հերաքլեացոց, և կար տաճար կուսի. որ կը համարին Արտեմիս չաստուածուհին. նաև սորին գոգն երեք նաւահանգիստ կը դնեն։

263. ԱԽՏԱՔՕԼԷ, կամ Ախտաքօլէ, երսունըմէկ մղոն հեռու է Սիւզէպօլիէն. չունի նաւահանգիստ. ուր կը վազէ Թոնձա գետն, որ կուգայ Լօտիրնէէ կողմէն. բնակիչներն են յոյն. հին բան չտեսանք հոն։

264. ԻՆԱՏԱ ՊՈՒՌՆԻ, կամ Այտոս, քառասունըչորս մղոն հեռու է վերինէն. ունի լաւ նաւահանգիստ. որուն միւս կողմն է Տիալըս պուռնի. որ է փոքր քիթ։

265. ՄԷՐՎԷԶ, տասնըութ մղոն հեռու է վերրի-նէն. շատնի լաւ նաւահանգիստ. ուր կը վազէ գետ։ Հիները այս կողմս կը յիշեն Փիլոսօբօլիս հին քա-ղաք. բայց մենք չի կրցանք տեղը գտնել որոշակի։

266. ՄՕՑԻԱ, տասնըութ մղոն հեռու է վերրի-նէն. ունի փոքր նաւահանգիստ, և բերանին առաջ ըլլա-լով դժուար է մտնալը. ուր կը վազէ գետ։ Այս քա-ղաք ու ծովուն վերըջի առանը կը սեպվի. բայց սա-շուք քաղաք տեսանք ասրին վրա շինած. քարոտ տեղ է, բնակիչներն են յն. և ս. Արևելեան կողմն է Մալաքրիա դաշտին։ Մօտն է Օհլամուր և Թելերմա-ծայը, ուր կը վազէ գետ. և կերևնայ հոն հին պա-տի մնացորդ դէպ 'ի Մառամարա ծովը երկնցած։

267. ԳԱՐԱԲՈՒՌՈՒՆ, տասնըութ մղոն հեռու է Մ'իմոխայէն. որ ըստ ոմանց կըսվէր առաջ Լովէ Թէ-նէա. կարելի է թէ հին ատենը հոն Հրայ կը վա-ռէին նաւերու համար։ Արբիանոս կը յիշէ հոս Թէ-նէոս ատեղը. կարելի է թէ Գարաբուրունն է։

Սահմանին գետ յանուն, Գարաբուրունէն առաջին է. իսկ Տօմոռ լեռը, ամենէն առաջին է. ուր է ընդհան-րական ապաստանը դեղնագոյն, որ կըսվի Նեմեջգահյար։ Կերևնայ թէ առաջ ծով է եղեր հոս, և երկրէթի համբ ըլլալով գունաւորած է ապաղը. ծովը քաշվե-լէն ետև մնացեր է առաջ, ինչպէս որ դիտեցինք։

Այս կողմերս տեսանք հանքային տեղրանք. և այս ապաղուս հին ատենէն 'ի վեր կայ. որ կերևնայ թէ Ապոլլոնիա բերանը բացված ատենը երևցաւ (7)։ Ինչպէս տեսանք նոյնչափ հնութեան աւխայի կողմը նոյն գունով դեղին ապաղուս (42)։ Արբիանոս կը պատմէ թէ Քսենոփոն գնաց Աւլ-ոնիա քաղաքն, ուսկից կըսկըսի ընդհարձակ ապաղուտը. հին ատենը կըսէ բնակիչները կրակ կը վառէին դի-շերանց. որ նաւերը գան իյնին հոն, որ կողոպտեն. որոնք մինչև հիմա այս չարութիւնը կընեն։ Մօխայէն գալով երբեմն կը կարծըվի թէ հոս է Ներղուցին բե-րանը. ու ասոր շատ անգամ նաւերը հոս կիյնին կը խոր-տակին։ Արուտբիոս կը պատմէ թէ 2474 տարի առաջ Աւլոնիս քաղաքը շինվեցաւ Միտոսոս, որ ոմանք

Ռոմայի կողմը կը դնեն, և Թուլի Թէ մեծ քաղաք էր։

268. ՌԻՒՃԵՕՅ հին քերդ հաստատուն՝ տասներ-ութ մղոն հեռու է Գալաբրիայուսէն. և կը համարուի վերջին քերդ նեղուցին Ռուսճէլլօյի. որ Սիկիլիա քեր-դին դիմացը կեցնի (41)։ Հին անունը Հոս էր Փոիա քաղաքը։ Իր աղբին գետ կը վազէ Ալպոհօ գետէն։

269. ԳՈՒԱՆԵԱՆ ԺԱՑՌԻՔ, ըստ յն. Գուանեա, որ կապոյտ դոյն կը նշանակէ, են կղզիի նման ժայռեր Փէնիկեանին առաջը. մեծը կըսուի Ռոկ դուլչ. ոմանք Բոնիֆաւէ կը կոչեն. որուն վրա աւերակք մնան սեան, որ անկէ է Պոմպէոս հաւանելեցին, կամ Ադրիանոս կայսր՝ վրան լատին գրով. ոմանք (Օ)գոստոս կայսեր կուտան։ Հին ժամանակը հոս ահաւոր երկրաշար-ժութիւն ըլլալով Սոսամիօլու բերանը բացվեցաւ կըսեն, ինչպէս ըսինք առաջ (7)։

270. ՓԷՆԷՔ բուռնէլլի՝ է հաստատ քերդ տասնըութ մղոն հեռու Րիճեօյէն. որ է եւրոպական ծայր և ծովուն կամ Պելօռոսի, և բերան նեղուցին Սոսամիօլու։ Ռոյս տեղս հին անունը յունարէն կըսուէր ԷՆԷ'ՌՕՆ ԴԻ'ՕՍ ՈՒՌՒ'ՈՒ. այսինքն Սեհեան դիոսի յաջողութեան. զի նոյն սարին վրա դիոսի կուտուկն ըլլալով ուխտատեղի էր նաւորաց. որպէս զի Գիոս քարի յաջողութիւն տայ իրենց. ինչպէս կըսէին՝ ըստ Արրիանոսի։ Ինչ հոս և Թէ դիմաց սիրական Փէնէւն՝ աշտարակ շինած է քարէ. որուն մէջ ամէն գիշեր ճրագ կը վառեն, որ ներս մտնող նաւերուն որոշեն նեղուցը։

271. Փէնէւէն ներսը՝ երրորդ բերդն է Գուարկոցէ՝ Սալ. Մուսոտափայէն շինած. չորրորդ Բերդն է Պերօլեոն ըմծու, կամ Մէնճենի։ Ուր հին ժամանա-կը երևելի դաշնի ծառ կար, և կըսուէր Գոյընեայ նա-ւահանգիստ։ Տես առաջ. Է։ Իսկ հինգերորդ Բերդն է Բուռնելլի կառողի, որ Րնաստօլ գաւառին կամ Ալա-ուս բերդին դիմացն է (37)։


272. Րոդ՝ Գուռնայէն կամ Րիճլի պօղազէն մինչև Փէնէւ 516 մղոն է. որ նաւավարները 500 մղոն կը դնեն։ Րհա անատօլ գաւառէն սկսանք Փէնէ-ւէն դուրս ելլէ՝ սև ծովուն չորս բոլորը պտըտե-

լով հասանեմք Ռուսիոյ Փինլանտիոյն. և անտի եկեալք ի Ռու-սիոյ գաւառէ, կամ Պրուսաց Հիւսը:

273. Ըստ այսմ Պիւաշնայէն մինչև Ռուսիոյ Փինլանտ., կամ Սատանուբոլու քառակուսի 516 մղոն ըլլալով Թ..ագ-մինէն կլլայ 1236. Փառշէն 1714. Տըրասթիզմէնէն 1952. իսկ Ու.նատոլ Փինլանտէն 2861 մղոն. որ է քա-ռը շրջապատ ու ծովուն՝ բաց 'ի ծովակներէն:

Ս.հա նորէն համեմատով ներքոյցին քառակուսին՝ ուսկից կլանիք, փախճան երդու պատահական ճանապարհու-դութեան մերոյ. որ 1817 ին սկսանք և 1819 ին ա-ւարտեցինք թէ՛ մեր ճանապարհութիւնը, և թէ այս գործքս շրջագրութեան Պատմութ 'ի պատմութեան Ս կիզբնութեան մերոյ:

ՑԱՆԿ.



Tip. ed Edit. li Monaci Armeni di S. Lazzaro in Venezia.